Պրոլետարներ Բոլոր Յերկրների, Միացե՛ք!

Նամակներ Սպիտակ Տեռորի յեվ Ֆաշիզմի Յերկրներից



Հրատ. ՄՈՊՐ-ի Կենտկոմի 1935 Յերեվան

22 NOV 2017

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ
ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

ՏՊԱԳՐՈՒԹ. ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆ
ՅԵ. ՎԱՀՐԱԴՅԱՆ
Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐԻ ՅԵՎ ՖԱՇԻԶՄԻ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ

ՅԵՐԵՎԱՆ 1935

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՄՈՊՐ-Ի ԿԵՆՏԿՈՄԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ

1. «Կենդանի մարդկանց գերեզմանոց 3
2. Սպիտակ տեռորը «քաղաքակիրթ» Ամերիկայում 13
3. Ֆաշիստական Գերմանիայի բանտերում 25
4. Ֆրանսիական իմպերիալիզմի ճիրաններում 36
5. Քաղբանտարկյալները իմպերիալիստական Անգլիայի դաժան ռեժիմի տակ 43
6. Քաղբանտարկյալների դրությունը Գոմինդանյան Չինաստանում 50
7. Մեր հաղթանակի ժամը հեռու չե 55
8. Հարավսլավիայի տեռորի 5 տարին 63
9. Լեհական ֆաշիզմի սանձարձակ դիկտատուրայի տակ 73
10. Սպիտակ տեռորի սարսափները Բալկաններում 88
11. Սիրիայի Կարմիր Օգնության կենտկոմի վարած պայքարը ֆաշիզմի դեմ 92
12. Ռումինական ինտելիգենցիայի բողոքը բանտային ռեժիմի դեմ 94
13. Զոննենբուրգ ճամբարը 96

Տեխ. խմ. ագիր՝ Մ. Եփրիկ
Նկարիչ՝ Լեկապե
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

11-26742գր

Պետհրատի տպարան—Երևան

Գլավլիտ 626 պատվեր 1792. տիրաժ 1000

«ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ»

Երբ Բելգրադից դեպի Զագրեբ ես գնում, Սրեմի Միտրովիցի կայարանից մեծ բացատի մեջ մի խումբ շենքեր են յերևում՝ բարձրաբերձ ու կարմրավուն պատերով շրջապատված։ Շենքերի գլխավերևը՝ յեկեղեցու գմբեթ և գործարանային յերկու ծխնելույզ։ «Հարավսլավիայի ամենաժամանակակից բանտն ե այդ», պարծանքով հայտարարում ե մեծ Սերբիայի բուրժուազիան։ «Մարդկային հոգիների սպանդանոցը», ինչպես այդ մկրտել ե խրվաթացի հռչակավոր գրող Ավգուստ Ցեսարեցը, վոր մի քանի տարի նստել ե այնտեղ, «Կենդանի մարդկանց գերեզմանոցը», ինչպես տաժանակիրներն իրենք են անվանում այն, այսպիսով բնորոշելով այն դժոխքը, վոր բարձրաբերձ ու կարմրավուն պատերի հետևն ե թաքնվում։

Քաղաքական բանտարկյալներին*) այստեղ են ուղարկում, այստեղ են փորձում նրանց «ուղղել»։ «Ուղղելու սիստեմը», վոր Միտրովիցում ե թագավորում, բնորոշ ե Հարավսլավիայի բոլոր բանտերի համար։ Հենց այդ սիստեմով էլ մենք կապացուցենք Հարավսլավիայի հեղափոխականի՝ ռազմաֆաշիստական դիկտատուրայի գերու կյանքը։

Տաժանավայրում կյանքն այնտեղից ե սկսվում, վոր դատապարտյալից հագուստը խլում—փոխարենն ինչ-վոր ցնցոտիներ տալիս։ Այս ցնցոտիները կոչվում են «Նորեկի հագուստ»։ Նորեկը մի շարք արարողու-

---

*) 1933 թ. նոյեմբերից այստեղ են փոխադրել բոլոր քաղբանտարկյալներին, վորոնք առաջ ուրիշ բանտերում եյին պահվում։

թյուններ պետք է կատարի, վորից հետո նա կարող է «իսկական» տաժանակիր համարվել: Համարյա ամեն օր, լաթեր ու ցնցոտիներ հագած, պահակի հսկողությամբ, նորեկների խումբը է լուռ թափառում բաղնիքից դեպի շենքը, վոր ահագին մի դագաղի տպավորություն է թողնում: Սրեմի Միտրովիցի հռչակավոր «մենկուսարանն» է այդ, վորի բովից պետք-է անցնի ամեն մի դատապարտյալ:

— Ա՛ռ, համրի, տես թե քանի՛սն եմ բերել քեզ,— ձայն է տալիս ուղեկցողը մենկուսարանի բանտապահին:

Մենկուսարանի բարձր միջանցքներում պարետը նորեկներին սպասում է:

— Գլուխներդ բացե՛ք:

Մերկության աստիճան սափրած տաժանակիրները լուռ ու մունջ պետք է ականջ դնեն, թե պարոն պարետն ի՛նչպես է կարդում «տան» կարգ ու կանոնը: Ընթերցանությունն անտանելի յերկար է տեվում: Ձմեռը մենկուսարանի ահագին միջանցքում փչում է ու ցուրտ է, մանավանդ բաղնիքից հետո, մա՛նավանդ ցնցոտիների մեջ: Բայց պետք է ականջ դնել: Յեվ նորեկն ականջ է դնում: Իսկ հետո՝ շատ անգամ ծեծ ու հայհոյանք... Այնուհետև ամեն մի նորեկի մի առանձին կամեր են դնում: Մենկուսարանը մի փոքրիկ վանդակ է՝ յերեք մետր ու կես յերկարությամբ և մետր ու կես լայնությամբ, գլխավերեվը մի վորևե տեղ վանդակապատ փոքրիկ մի լուսանցք է ծածկված, վորի միջից մի կտոր յերկինք է յերևում, ասֆալտի հատակ, յերկաթե մահճակալ՝ պատառոտված ներքնակով, վորի մեջ յեղած ծղոտից միայն փոշու խառնուրդ է մնացել, յերկու հատ հին, գզգզված վերմակ, մի սեղան, մի տաբուրետ (աթոռ), մի մեզաման (парама)—ահավասիկ ամբողջ «կահույքը»: Այսպիսի մի վանդակի մեջ մարդ բռնված գազանի պես է զգում իրեն: Նա իրավունք չունի «վոչ պատը ծեծել, վոչ ցերեկն անկողնի վրա պառկել, վոչ էլ լուսամուտին մոտ գնալ»: Բա էլ ինչի՞ իրավունք ունի: Միայն մի բա-

նի, նստել և իր առջևը նայել: Կամ թե՝ բռնված գազանի պես մի անկյունից մյուսը գնալ-գալ:

Նորեկն իր դագաղին դեռ չընտելացած, դռան մեջ կամացուկ մի «հուդա» փոքրիկ անց է բացվում, վորի միջով բանտապահը կարող է առանց նկատվելու հետևել տաժանակիրներին: Բայց այս դեռ քիչ է: Բանտապահը վոչ միայն հետևում է, այլև շատ անգամ պրովակացիա յէ սարքում: «Հուդա՛ն» բաց է անում ու կամացուկ թխկթխկացնում.

— Եյ, հայրենակից:

Նորեկը ցնցվում է—ուրախալի բան է այս մենակության մեջ մարդու ձայն լսել—բայց և այնպես անվճռականորեն է յետ նայում. կարելի՞ բան է: Պարետը միտն է ընկնում: Վոչ չի կարելի:

— Վո՞րտեղացի յես, ի՞նչ քեֆի յես,—դռան հետեվից շշնջում է քաղցրալուր մի ձայն:

Նորեկը սիրտ է առնում, մոտենում է դռանն ու կամացուկ, իր սեփական ձայնից վախենալով, պատասխանում է հարցերին: Հանկարծ լսվում է բանալիների զրնգոց, ու բանտապահը ներս է ընկնում կամերը:

— Եդ ո՞ւմ հետ ես խոսում, շա՛ն վորդի:

Նորեկը հուզմունքից չի կարողանում վորևէ խոսք ասել:

— Գլուխդ բա՛ց, ինձ հետ խոսելիս,—բղավում է ժանդարմը, և չեչտակի հարվածից նորեկի գլխարկը գետին է թռչում:

— Շո՛ւն-շան վորդի, յես քեզ կարգն ենպես սովորեցնեմ, վոր ինձ չմոռանաս: Հենց եդուց մի ռեկուզում կգրեմ, և դու քոնը կստանաս:

Ժանդարմը սուտ չի ասում: Վաղը նորեկը կպատժվի այն պատճառով, վոր «հուդայի» միջով «ինչ վոր մարդու հետ» խոսել է: Այսպես է սկսվում «ուսուցումը»:

Առավոտյան՝ ամառը ժամը 5-ին, ձմեռը՝ 6-ին զանգն արթնացնում է բանտարկյալներին: Անկողինը

պետք է հավաքի, կամերը՝ մաքրվի, մեզամանը՝ դուրս տարվի։ Մաքրելու–սրբելու ժամանակ կծու փոշու ամպ է բարձրանում, որ մարդու քիթ, կոկորդ ու թոքեր է մտնում։ Այս մաքրելու–սրբելուց հետո մի ժամ թանձր ցեխ ես թքում։ Ամբողջ կամերը շղթաների, բանալիների զնգոցով ու ժանդարմական բղավոցով է լցվում։

— Սուս, շան որդի, ձեն չհանես։

Քնատ թուլացած, կեղտոտ դույլերը ձեռքերին՝ նորեկներն իծաշարուկ, իրար հետևից գնում են զուգարան։ Մաքրել–սրբելուց հետո նախաճաշն է լինում․ կեղտոտ, լպրծուն մի հեղուկ, որ լավի տպավորություն է թողնում։ Այնտեղ այս լափին սուպ են ասում։ Այնուհետև գալիս է զբոսանքը, որի ժամանակ տաժանակիրներն իրար հետևից քայլում են շրջանագծի վրայով՝ առանց այս ու այն կողմը նայելու, առանց խոսելու։ Կողքներից՝ բանտապահները, բանալիները զրնգզրնգացնելով։ Լուռ ու մունջ արարողությունը մերթ ընդմերթ ընդհատվում է ժանդարմների բիրտ գոռոցով։

— Գլուխ մի՛ տարեք, շա՛ն որդիք։

Կամերում նորեկը պետք է աշխատի։ Մի ահագին կույտ սագի կամ հավի փետուր են բերում նրան, որը նա ինքը խնամքով պետք է մաքրի։ Այս աշխատանքն առանձնապես զզվելի յե, որովհետև կամերի առանց այն էլ ծանր օդը դժվար է շնչել, իսկ այժմ էլ թեթև, մանր փոշին է լիքը լցվում։ Իսկ ձմեռն այս «աշխատանքն» իսկական տանջանք է դառնում, որովհետև մարդ ստիպված է լինում փետուր–փետրի հետևից պոկել սառած, հաճախ էլ ուռած ձեռքերով։ Նորեկին գիրք չեն տալիս, բայց «փոխարենը» նրան այցելում են քահանաները, ուսուցիչներն ու չինովնիկները և խոսում, խոսում, խոսում... Նորեկը նրանցից լսում է՝ հանդիմանություն, կշտամբանք, ծաղրանք, կեղծ ցավակցություն ու սովորական յերգը՝ «տան կարգ ու կանոնը կարդա՛, աստծուն աղոթի՛ր, և ամեն բան լավ կլինի»։

Բոլոր խոսակցությունների վերջն այն է, որ նորեկի գլուխը մխոք ճխտեն, թե նա բախտավոր է, որ դեռ կենդանի յե։ Մի խոսքով՝ ուզում են նրան «մարդ» դարձնել??։ Բանտի տերտերը, որ գիշեր–ցերեկ հարբած է, չարունակ կրկնում է․

— Մեկուսարանն ուղղելու մեր մեթոդի եյությունն է, այնտեղ մարդկանց հոգիները զղջում, մեղմանում են, և նրանց ինչ ուզես՝ կդարձնես։

Հա՛, մեկուսարանի գերեզմանային լռությունը, որ բանտապահների բղավոցներով ու հայհոյանքով, բանալիների զնգզնգոցով, ծեծված–ջարդվածների տնքոցով է փոխարինվում—այս բոլորը մի նպատակ ունեն․ մարդու տանջել և ստիպել, որ ամեն ինչ լուռ ու մունջ տանի։

Այս «պատրաստելը» յերկու–յերեք ամիս է տևում։ Այնուհետև նորեկին աշխատանքի յեն ուղարկում և ընդհանուր կամեր փոխադրում։ Նրա համար աշխատանք են ընտրում, իհարկե, նկատի ունենալով բանտի վարչության շահերը։ Բոլոր այն խոսակցությունները, թե դատապարտյալին հնարավորություն է տրվում մասնագիտություն ձեռք բերել, որը բանտից դուրս գալուց հետո նրա գոյությունը կապահովի,—զուտ սուտ է։

Ընդհանուր կամերն ասֆալտե հատակով ահագին մի մարագ է։ Այնտեղ 80 հոգի կարող է տեղավորվել։ Լուսանցքները փոքրիկ են և բարձր։ Գլխավերևում՝ յերկաթե նեղ մահճակալներ, մանր ու փթած ծղոտ լցրած բարակ ներքնակներ, մի սավան և յերկու հատ գզգզված վերմակ—ահավասիկ բանտարկյալի ամբողջ գույքը։ Կամերի կողքին՝ զուգարան և լվացարան։ Կոյուղի չկա, և զուգարանի գարշահոտությունը, մանավանդ ամառը, միանգամայն անտանելի յե։ Առավոտները, մաքրել–սրբելու ժամանակ, տաժանակիրներն իրար այնպես են տեսնում, ինչպես մառախուղի միջից․ փոշու այսպիսի թանձր վարագույր է քաշվում նրանց միջև։

Դժվար է գտնել այնպիսի մի բանտարկյալ, վոր չնչառության առողջ որգաններ ունենա: Այս ահագին զորանոցում շատ դժվար է ապրել: Մանավանդ ձմեռն է մարդ նեղվում, նախ՝ ոդափոխություն չլինելու, յերկրորդ՝ ցրտի պատճառով (ժանգոտ խողովակների միջով յերկու ժամ բաց թողած գոլորշին, իհարկե, չի կարող տաքացնել այդ ահագին շինությունը):

Այս բոլորը—գարշահոտությունը, կեղտն ու նեխվածքը—մարդու հետզհետե վոչնչացնում է: Այսպիսի կամերում մարդիկ վոչ միայն որեր ու ամիսներ, այլև յերկար ու ձիգ տարիներ պետք է անցկացնեն: Հին ծղոտի, արև չտեսած անկողինների, զուգարանի գարշահոտության և մարդկանց աղտոտ մարմնից դուրս յեկող յուրահատուկ քրտինք—ահավասիկ այն մթնոլորտը, վորի մեջ դատապարտյալը «կարող է» աշխատանքից հետո հանգստանալ, իր համար մի բան անել, ընկերոջ հետ զրուցել:

Արհեստանոցները—պարանինը, կանեփ մշակելունը, հյուսնոցը, ջուլհականոցը, զամբյուղինը, կազմատունն ու փականագործի արհեստանոցը—առանձին շենքի մեջ են՝ բանտի նույն շրջանակում: Աշխատանքի որը ձմեռը 9, իսկ ամառը $10^1/_2$ ժամ է տևում: Աշխատանքի պայմաններն առանձնապես ծանր են պարանի և կանեփ մշակելու արհեստանոցում: Այս արհեստանոցները մասնավոր մարդիկ են պահում, վորոնք դատապարտյալներին շահագործում են համաձայն բանտային վարչության հետ կնքած պայմանագրի:

«Ծուլության» կամ «դեպի աշխատանքն անուշադիր լինելու» համար բանտարկյալին խիստ պատժում են: Շահագործողին ինչ փույթ, թե իր բանվորներից վորևէ մեկին դիսցիպլինար մեկուսարան են ուղարկում: Նա գիտի, վոր ազատված տեղի համար տասնյակ թեկնածուներ կճարվեն:

Առանձնապես դժվար է կանեփ մշակելու արհեստանոցում: Այստեղ աշխատանքի յեն ուղարկվում այն դա-

տապարտյալները, վորոնք ներքին կարգ ու կանոնին չեն յենթարկվում—բոլոր նրանք, վոր փախչելու փորձ են արել, համարձակվել են իշխանությանը խոսք դարձնել, չեն թույլ տվել, վոր իրենց ծեծեն, մի խոսքով՝ բոլոր «անհնազանդ» և «անուղղելի» տարրերը: Նրանց ուղարկում են այդ արհեստանոցը՝ «մեղքերը քավելու» համար:

Արհեստանոցի աշխատանքն սպանիչ է: Ոդի մեջ կանեփի բարակ մազիկներ են լողում, վորոնք մտնում են մարդու քիթ, բերան, կոկորդ և հագուստի տակը:

Հարյուրավոր տաժանակիրներից հեշտությամբ կարելի յե ճանաչել նրանց, ովքեր այդ արհեստանոցում են աշխատում: Յերեք ամիս այդպես աշխատելուց հետո ճնշող մեծամասնությունը հիվանդանոց է ընկնում—չնչառության, աղիքների հիվանդությունը նրանց հիվանդանոցի անկողին է գցում: Պարզ բան է, վոր քաղաքական հանցավորներին հենց այդ արհեստանոցն են աշխատանքի ուղարկում: Թվում է, թե այսպիսի մի արհեստանոցում մնալուց հետո դաշտային աշխատանքները թեթև ու ցանկալի պետք է թվան: Բայց իրականում դաշտային աշխատանքների մեջ շահագործումն էլ ավելի ուժեղ է: Դատապարտյալներին այնտեղ ծեծում են, և ծեծում են հիմնովին ու սիստեմատիկ կերպով: Վոչ թե «հենց ենպես» քիթ ու բերանին են տալիս կամ բանալու կապոցով բզում, այլ հրացանի կոթով անխիղճ կերպով այնքան գազանաբար են ծեծում, վոր հետո մարդ վոչ կարողանում է նստել, վոչ պառկել, վոչ էլ ման գալ: Մարդիկ ուժասպառ վայր են ընկնում, իսկ բանտապահները, գազանացած, նրանց տրորում են, գետնից բարձրացնում ու հրացանի կոթով նորից են ծեծում: Շատ անգամ մարդուն անշնչացած վիճակում տանում են բանտի հիվանդանոց: Այս ծաղրանքների և նույնիսկ ուղղակի սպանությունների համար յերբեք և վոչ վոք պատասխանատու չի յեղել:

Մարդ յերկաթե առողջություն պետք է ունենա,

վոր այս աշխատանքի մեջ մի քանի ամիս կարողանա դիմանալ: Վոչ մի բողոք ու հայտարարություն չի ոգնում: Դեռ ավելին՝ ով բողոքում է, գիտի, վոր «հանդըգնության» համար դիսցիպլինար պատիժ է ստանում իրեն, և վոր հետագայում իրենից վրեժ է առնելու վոչ միայն այն ժանդարմը, վորի վրա բողոք է տվել, այլ և մյուս բոլոր բանտապահները:

Բանտերի սնունդն անպետք ու վողորմելի բան է: Մթերք մատակարարողներն աշխատում են վորքան կարելի յե վատ ապրանք տալ, իսկ փոխարենը վորքան կարելի յե շատ ստանալ: Այս պատճառով էլ նրանք բանտի իշխանության հետ «սերտ բարեկամություն» են պահպանում և ոգուտը նրանց հետ կիսում են: Կաթը, յուղը, կանաչին չինովնիկներն ամեն մեկն իրեն է տանում: Չեմ տեսել մի բանտապահ, վոր չաշխատի ձեռից յեկածին չափ կոփել: Թալանի չափը բանտապահի դիրքից ու աստիճանից է միայն կախված: Շատերը դատապարտյալների սննդից գողանալով, քիչ հարստություն չեն դիզել: Դատապարտյալն ամիսը մի անգամ միայն իրավունք ունի իր փողով մթերքներ գնել, բայց, ինչպես ասած, այս իրավունքով էլ չի կարողանում ոգտվել, վորովհետև դատումը շատ չնչին է, մեծ մասը տանից բան չի ստանում, իսկ բանտապահներն ամեն ինչի համար յեռակի թանդ են պլոկում:

Բանտի հիվանդանոցը միևնույն բանտն է, բայց ավելի մաքուր կամերաներով: Բանտի բժիշկները միևնույն ժանդարմներն են, բայց դիպլոմավոր: Բանտն աշխատանքի ընկնելով՝ նրանք իրենց պրոֆեսիոնալ պարտականությունները մոռանում են: Նրանք տաժանակիրներին բանտի իշխանության աչքով են նայում, այն իշխանության, վորից կախում ունեն: Հիվանդին բանտապահների պես նախորոք մոտենում են ինչպես սիմուլյանտի: Քանի՜-քանիսը հիվանդանոցից հաշմացած են դուրս գալիս, քանի՜-քանիսն էլ բոլորովին դուրս չեն յեկել, վորովհետև այնտեղ վոչ թե բժշկում, այլ մաշ-

կում են: Գլխավոր «դեղերն» են՝ մասաժը, լողացնելը, յոդն ու ինչ վոր կեղտոտ ջուր, վոր թեյ անունն է կրում: Այնտեղ լուրջ հիվանդանալ՝ նշանակում է մեռնել: Իսկ կմեռնես, թե կապրես, բժիշկների համար բոլորովին էլ փույթ չի: «Շունը՝ շան պես կսատկի» կրկնում են նրանք բանտապահներին կրնկոխ: Տերտերը հիվանդանոցում էլ ամենազզվելի դեմքերից մեկն է:

Դատապարտյալների ու բարեկամների կապը խիստ հսկողության տակ է տեղի ունենում: Ծնողներին գրել և տեսնել ամիսը մի անգամ միայն կարելի յե:

Նամակները գրաքննության են յենթարկվում, և յեթե գրաքննիչ տերտերին դուր չեն գալիս, ուղղակի չեն հանձնվում տիրոջը: Տեսակցության ժամանակ դու հարազատներիցդ փակ վանդակով կտրված ես, չես կարող նույնիսկ նրանց հետ ձեռք խփել: Տեսակցությունը տևում է 10 րոպեյից վոչ ավելի և ամբողջ ժամանակ բանտապահների հսկողությամբ:

Դատապարտյալը պարտավոր է յեկեղեցի գնալ, թեև նրան չեն պարտավորեցնում ծիսակատարություններ անել, խոստովանել կամ հաղորդ առնել: Այս արտաքին «լիբերալիզմն», ինչպես ասած, տերտերին ու բանտի իշխանությանն է ձեռնտու, ով յեկեղեցական ծիսակատարություններ չի անում, գրի յե առնվում և նրանց «հասկացվում է», վոր նրանք այլևս արժանի չեն որենքով նախատեսված թեթևացման: Յեկեղեցու՝—կապիտալիզմի սպասուհու—ճնշումն այսպիսով էլ ավելի ուժեղ թափով է հանդես գալիս:

Այն դատապարտյալը, վոր իր պատժի $^3/_8$ մասը քաշել է, որենքով իրավունք ունի փոխադրվել այսպես ասած՝ միջանկյալ բաժանմունք: Այստեղ ռեժիմն այնքան էլ խիստ չի, ինչպես ընդհանուր կամերաներում, բայց բանտի իշխանությունն ամենևին էլ բոլորին չի տեղափոխում այնտեղ: Փաստորեն դատապարտյալներին փոխադրում են միայն այնտեղ, վորտեղ տվյալ մոմենտին աշխատող ձեռքեր են հարկավոր:

Այսպես էլ կիրառվում է նաև այսպես կոչված՝ պայմանական արձակուրդի իրավունքը: Օրենքն ասում է. «ամեն մի դատապարտյալ, վոր առաջին անգամ է դատապարտված և ապացուցել է, վոր իր պատժի կեսը քաշելու ընթացքում ուղղվել է, կարող է պայմանական արձակուրդ ստանալ»: Թե ինչպես է կիրառվում այս օրենքը, ապացուցվում է այն բանով, վոր 350 այդպիսի «իրավունքներից» 15—25 հոգուց ավելի բաց չեն թողնում: Պայմանական արձակուրդը մարդու շփոթելու, ընկճելու և նրա մեջ խոհեմության ու հնազանդության զգացում զարգացնելու միջոց է: Բայց բանտի պայմաններն այնպես են, վոր ամենահավասարակշիռ մարդն անգամ անխուսափելիորեն պետք է ընդվզի:

ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐԸ «ՔԱՂԱՔԱԿԻՐԹ» ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

ԱՐԳԵԼԱԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻՆ—ՄՈՍԿՎԱ

Թանկագի՛ն ընկերներ.

Բրուկլինի (Նյու—Յորկ) քաղաքային բանտի վանդակների միջից անկեղծ շնորհակալություն ենք հայտնում մեր վիճակի առթիվ ձեր ցույց տված համերաշխության ու հետաքրքրության համար: Այն խիզախ ու անվախ կռիվը, վոր մեզնից հետո մեր ընկերներն են շարունակում, օրստօրե ավելի ու ավելի ճմլում մեզ կապկապող շղթաները, և մենք շուտով, ազատություն ստանալով՝ ընկերների հետ թև թևի տված կաշխատենք ընդհանուր գործի համար: Այն չափազանց հետաքրքիր նորությունները, վոր ձեզնից ենք ստացել, ծանոթացնում են ձեր հաղթանակին, վոր նույնպիսի հալածանքների ու նույնպիսի ճիրանների արդյունք են, վորոնց պայմաններում այժմ մեր ընկերներն են ապրում: Դուք մեզ գրել եյիք այդ գործարանի ձեր անդրանիկ աշխատանքների, այնուհետև հետագա և այլ աշխատանքների մասին: Մենք Ձեզ ասում ենք՝ շարունակեցե՛ք ձեր աշխատանքը: Շարունակեցե՛ք լավացնել ձեր աշխատանքը և մի՛ հանգստացեք, մինչև վոր ձեր գործարանի, ձեր թեթև ու ծանր արդյունաբերության արտադրանքի ասպարեզում կատարելության չհասնեք: Ցո՛ւյց տվեք ամբողջ աշխարհին, ինչպես առաջ եյիք այդ անում և հիմա յեք անում, վոր պրոլետարական յերկրի բանվորները կարող են պետություն կառավարել:

Մենք թերթեր ու գրքեր հաճույքով կկարդանք, բայց բանտի վարչությունը մեզ թույլ չի տալիս: Ար-

ուհետև մենք ստիպված ենք բավականանալ «Նյու-Յորկ Թայմս» մեր թերթով և մենք ծարավի յենք ամեն օր կարդալ Մստր Վալտեր Դյուրանտի հոդվածները: Միայն նրա շնորհիվ է, վոր մենք կարողանում ենք հետևել ձեր հաջողություններին:

Մենք չենք ընկճվում: Ընկերնե՛ր, մեր ստացած դասը մեզ հեղափոխականորեն ե՛լ ավելի յե ուժ տվել, ե՛լ ավելի մարտնչող է դարձրել: Պայքարելու մեր կամքն ե՛լ ավելի յե ուժեղացել, և մենք բաց կանենք ամերիկական բանվորների աչքերը, վորի համար կապիտալիստական սիստեմը նրանց հիմարացնում է, նրանց զրկելով ռեալ իրավունքներից, մա՛նավանդ ապրելու իրավունքից:

Մենք մեր նամակը վերջացնում ենք: Մենք նաև հույս ունենք, վոր այս նամակը ճանապարհ կգտնի դեպի ձեզ, դեպի սոցիալիստական լայնածավալ ձեր հայրենիքի ձեր ընկերները:

Ընկերական բարևներով՝ Վիլյամ Մակարով
Ալեքո Պիվոն

ՍԱԼԵՄ ԲԱՆՏ, ՈՐԵԳՈՆ ՆԱՀԱՆԳ

4 մարտի 1934 թ.

Թանկագի՛ն ընկերներ.

Իսկապես մեծ բավականություն է այն, յերբ գիտես, վոր պրոլետարական հայրենիքում դուք այդքան լավ եք ապրում: Մեր բանը բոլորովին ուրիշ է: Հրեշավոր ճգնաժամի պատճառով մեր բանվորներն այժմ սարսափելի ժամանակներ են անցկացնում: ՆԻՐԱ (արդյունաբերությունն ազգայնորեն վերականգնելու օրենք), վորի կիրառումով բանվորներն աշխատանք պետք է ստանային ու նրանց պայմանները պետք է բարելավեյին, իր անզորությունը ցույց տվեց, վորովհետև մենք միլիոնավոր գործազուրկներ ունենք, և բանվորներն և գյուղացիներն ելի նույն մուրացիկ վիճակում

են ապրում, վորն ամբողջ կապիտալիստական աշխարհում է թագավորում:

Միլիոնավոր մոռացված ու աչքաթող արած տղամարդ ու կին աննպատակ թափառում են ՀԱՄՆ-ի խոշոր քաղաքների փողոցներում: Ծեր ու յերիտասարդ, նեգր ու սպիտակ անվերջ շարանով քաշ են գալիս փողոցները, բուլվարներն ու ծառուղիները՝ իզուր փորձ անելով գործ ճարել, մի ափսե սուպ ստանալ ու գիշերը գլուխ դնելու մի անկյուն: Բանվորների դրությունն օրեցօր վատանում է: Մեր բանվորուհիների վիճակն ավելի ծանր է: Նրանց մեջ ծայր է առնում պոռնկությունն ու յերեխաների մահացությունը: Թերթերն ամեն օր լիքն են սովից ու ապաստարան չունենալուց հուսահատված ինքնասպանություն գործող բանվորուհիների վերաբերյալ տեղեկություններով: Անգամ աշխատանք ունեցող բանվորներն էլ շատ վատ են ապրում, վորովհետև ՆԻՐԱ սաածդ՝ աշխատավարձն իջեցնելու, ֆաբրիկներում ու գործարաններում քրտնեցնելու սիստեմն ուժեղացնելու, կենսական անհրաժեշտ մթերքների գներն ավելացնելու և դժբախտ դեպքերի վտանգը սաստկացնելու օրենք է:

Բոլոր վերոգրյալի մեղքն այս աղքատության դեմ կռվող աշխատավոր տղամարդկանց ու կանանց վրա չի ընկնում: Մեղքն ամբողջովին ընկնում է կապիտալիստների—միլիոնատերերի ու միլիարդատերերի—վրա, վորոնք յերկիր են կառավարում, օրենսդրությունն ու դատավարությունը հսկում են, այն օրենսդրությունն ու դատավարությունը, վոր մեզ զանազան հանցագործությունների, ընդհուպ մինչև մարդասպանություն գործելու մեջ են մեղադրում, այնինչ մենք մեր իրավունքներն ենք պաշտպանում: Նրանց ինչ փույթ, թե բանվորները քաղցած են: Միմիայն շահն է հաշվի առնըվում—փողը, փողը և դարձյալ փողը, յեթե նույնիսկ մարդկանց խորտակված կյանքի գնով է ձեռք բերվում: Կանանց ու յերեխաների համար բրիլիանտներ, ավտոմոբիլներ, թանկագին մորթիներ ու պերճանքի առարկա-

ներ, այն ինչ մենք քաղցած ենք, մեզ դատական պատասխանատվության են քաշ տալիս՝ բեմադրված հանցագործություններ կատարելու համար, յերբ մենք համարձակվում ենք կապիտալիստական արյունարբուների գործունեյությունը բաց անել:

Այսպես է մեր բոլորի բանը, այսպես է և իմ բանը: Յես այժմ մեռնողների կամերում եմ, վորովհետև միթխարի միաբանությունը (կորպորացիա) իր վորոգայթներով ուզում է բանվոր դասակարգին ահաբեկել: Այդ միաբանությունն ինձ մեռնողների կամեր է գցել, թեև յես մեղավոր չեմ: Իմ ընկերներից շատերն այսպես վիճակվում են. Մունի Բիլլինգսի գործը՝ Կալիֆորնիայում, նեգր յերեխաների գործը՝ Ալաբամայում, ինքադատաստանի զոհերը՝ բարբարոս Մերիլանդում, Միսուրիում և Տեխասում: Կյանքի պայմանների համար այստեղ այս բոլոր գործերը բնորոշ բաներ են: Համենայն դեպս մեր ընկերները յերդվել են՝ կապիտալիստական բանտերից ազատել մեզ: Շնորհիվ նրանց, յես կարողանում եմ ապրել, նամակներ գրել ու բարեկամներիս հետ տեսնվել: Վողջունում եմ պրոլետարական հայրենիքի բանվորներին, Ֆաշիստական Ավստրիայի ու հիտլերյան Գերմանիայի բանվորներին: Մենք նրանց հետ ընդհանուր շատ բան ունենք, մենք և ընդհանուր պայքարի գործում շուտով կհասնենք մեր նպատակին: Դեպի խորհրդային իշխանությո՛ւն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Յեղբայրական բարևներով՝ Թեոդոր Ջարդան

ՖՈՐԴՈՆ (ԱՄԵՐԻԿԱ) ԲԱՆՏԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ ԿԱՆԱՆՑ ՆԱՄԱԿԸ ՊՊՍ–Ի ՅԵՎ ԲՈՒՆԴ*–Ի ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Կեցցե՛ ՊՊՍ–ի և ԼԿԿ ու անկուսակցական բանվորների պայքարը՝ ի պաշտպանություն քաղբանտարկյալների:

Թանկագի՛ն ընկերներ.

Ձեր ղեկավարներն ու ձեր թերթերի խմբագիրները սիստեմատիկ կերպով ձեզանից ծածկում են այն ծաղրանքներն ու արյունալի ծեծերը, վորոնց յենթակա յեն ֆաշիստական Լեհաստանի բանտերի քաղբանտարկյալները: Գերմանիայի տեռորի մասին ունեցած խոսակցություններով նրանք աշխատում են քողարկել Լեհաստանի վայրագ տեռորը:

Յեթե ՊՊՍ–ի օրգանը՝ «Ռաբոտնիկ»–ը յերբեմն քաղբանտարկյալների հոդվածներ է տպում, ապա այն դժգոհության ճնշման տակ է անում միայն, վոր քաղբանտարկյալների նկատմամբ գործադրած տեռորի հետևանքով է առաջ գալիս բանվորների մեջ: Ձեր առաջնորդները միևնույն հոդվածներով վորձում են կեղծել տեռորի դեմ յեղած մասսայական պայքարի անհրաժեշտությունը, վոր այսպիսով ձեզ շեղեն մեզ պաշտպանելու պայքարից: Այնուամենայնիվ, այդ հոդվածներն ամենևին էլ չեն լուսաբանում քաղբանտարկյալ–

*) ՊՊՍ—Լեհական սոցիալիստների կուսակցություն՝ Լեհաստանի աշխատավորության պայքարը վիժեցնող սոցիալ-դավաճան կուսակցություն:

ԲՈՒՆԴ—Համահրեական բանվորական միություն՝ հրեական սոցիալ-դավաճան կուսակցություն, վոր մտնում է Յերկրորդ Ինտերնացիոնալի մեջ:

ԱԶԳԱՅԻՆ ... ՀԱՄԱՐ

ների դրությունը: Այդ հոդվածները մազաչափ անգամ չեն արտացոլում այն ծաղրանքների ու սարսափի բոլոր փաստերը, վոր քաղբանտարկյալների նկատմամբ ֆաշիստներն են գործադրում: Ամենից առաջ՝ այդ հոդվածներում չի ասվում, թե դուք՝ ընկերներդ, մեզ պաշտպանելու համար ի՛նչպես կարող եք պայքարել: Ուստի մենք անմիջականորեն ձեզ ենք գրում, վոր ձեզնից, և վոչ թե պարոնայք Նեձյալովսկիներից*) ու Ալտերովներից**), իմանանք քաղբանտարկյալների կյանքի ու պայքարի պայմանները և օգնեք մեզ մեր պայքարի գործում: Այդտեղի Ֆորդոն բանտում 60 քաղբանտարկյալ կին կա, վորոնց այստեղ են բերել Լեհաստանի բոլոր ծայրերից—Վարշավայից, Ձեգլերից (Դոմբրովի ավազան), Կելեցից, ամենից շատ՝ Արևմտյան Ուկրաինայի՝ Արևելյան Բելոռուսիայի գրավված վայրերից: Մեզ աքսորել են այստեղ, վոր կարողանան կտրել այն տեղերից, վորտեղ մենք մեծացել, աշխատել ու պայքարել ենք: Այսպես անելու պատճառն այն է, վոր մեզ զրկեն ազգականներից ու բարեկամներից նյութական օժանդակություն ստանալու հնարավորությունից, վոր մեզ կտրեն պրոլետարիատի ու գյուղացիության համատեղ պայքարից, վերջապես վոր մեզ զրկեն կռվի ասպարեզ մտած մասսաների ոգնությունից ու պաշտպանությունից:

Ֆաշիստական դատարանները մեզ յերկարատև (6, 8, 10 տարվա) ծանր բանտարգելության են դատապարտել այն պատճառով, վոր ձեզ հետ միասին պայքարել ենք կապիտալիստական ու կալվածատիրական շահագործման դեմ՝ հանուն աշխատանքի բարելավման, այն պատճառով, վոր ձեզ հետ միասին պայքարել ենք տեռորի ու հակախորհրդային պատերազմի դեմ, ազգային ճնշումների դեմ, ֆաշիստական դիկտատուրան տապալելու համար, վերջապես այն պատճառով, վոր

*) Նեձյալովսկի—ՊՊՍ-ի առաջնորդներից մեկը:

**) Ալտերով—Բունդի առաջնորդներից մեկը:

մենք Նեձյալովսկիների, Ժուլավսկիների և Ալտերների համաձայնողականության ու դավաճանության դեմ ենք դուրս յեկել և մասսաներին ցույց տվել կապիտալիստական շահագործման դեմ պայքարելու ճիշտ ճանապարհը:

Ընկերնե՛ր, ֆաշիստական ռեժիմի արյունոտ տեռորը սաստկանում է: Լեհական պրոլետարիատի ուղեղում դեռ թարմ են բազմաթիվ ձերբակալությունների փաստերը, Պաբյանիցե, Լոձի մանածագործների գործադուլի ժամանակ սպանվածների դիակները, Վարշավայի «Ֆրանաշեկ» ու Ջենստոխովի «Ջենստոխովյանկա» գործարանների պատերի տակ վիրավորված բանվորները: Դեռ թարմ են Արևմտյան Ուկրաինայի ու Արևելյան Բելոռուսիայի կախաղանները, վողջ Լեհաստանում տեղի ունեցած պատժիչ ու արյունոտ առաքելությունները, հեղափոխական գործողությունների պատճառով սարքված արտակարգ դատարանները՝ Բելոստոկում, Լվովում ու Կոբրինում, բանտային նոր կանոնադրությունը, քաղբանտարկյալների սպանությունները՝ Գրուդզիոնդի, Լվովի, Վարշավայի, Գրոդնոյի, Բելոստոկի և այլ բանտերում: Սովի, տեռորի, գործադրկության ու պատերազմի կառավարության կիրառած այս բոլոր մեթոդները բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարը խեղդելու և ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ պատրաստելու համար է: Վայրագ տեռորի ալիքը, վոր վողջ Լեհաստանը քայքայում է, չի խնայում նաև մեզ՝ քաղբանտարկյալ կանանցս: Ֆաշիստական կառավարությունն արագացրած տեմպով բանտային սպանիչ ռեժիմ է մտցնում: Հեղափոխական քաղբանտարկյալների Սկանդինակու մինիստրության ներկայացուցչի ասածով՝ բանտային նոր կանոնադրությունը քաղբանտարկյալներին ձեռնտու չի:

Բայց ֆաշիստները միայն ֆիզիկապես չի, վոր մեզ վոչնչացնում են. բացի այդ, նրանք ուզում են մեր հեղափոխական արժանապատվությունը գցել, մեզ հրա

մայում են ֆաշիստական ամեն մի ծառայի, այսպես կոչված «բարձր իշխանության» առաջ «պատիվ» առնել: Յեվ վորովհետև մենք չենք ուզում այս պահանջին յենթարկվել, շաբաթներով մեզ զրկում են օդից, գրքից, թերթից, նամակից, դրսի հարաբերություններից և այլն: Յեթե պատիժների դեմ բողոքում ենք, մեզ խոնավ, ցուրտ կարցեր ե սպառնում: Մեզ ստիպում են զորանոցային զբոսանք կատարել, և այս զբոսանքների ժամանակ սահմանված կարգը մազաչափ խախտելու համար նորից պատիժ: Պատժում են լուսամուտի առաջ կանգնելու համար, պատժում են ձեռքերը գրպանը դնելու համար, պատժում են ամեն տեսակի այլ պատճառաբանություններով:

Բռնագրավեցին մեր գրադարանը, վոր այսքան տարի մեր ազգականների ու մերձավորների օգնությամբ եյինք կազմել: Բանտի իշխանություններն ամենանուրբ միջոցների յեն դիմում, վոր բանվորների ու գյուղացիների պայքարից վոչ մի տեղեկություն չթողնեն մեզ հասնի:

Նամակ միայն մոտիկ ազգականներից կարելի յե ստանալ ու միայն նրանց գրել: Մտերիմներին ու պայքարի ընկերներին գրել չի կարելի, քանի վոր բանտի իշխանությունը հայտարարել ե, թե նրան վստահկանության ձեռքը կտա: Մայրենի բելոռուսական, ուկրայնական, հրեյական լեզուներով վոչ թերթ են տալիս մեզ, վոչ նամակ, վոչ ել գիրք, վորի պատճառով մենք բոլորովին զրկված ենք դրսի վորևե տեղեկությունից՝ մեզնից նրանք, ովքեր լեհերեն լեզու չգիտեն:

Ընկերնե՛ր, հանուն խնայողության, մեր քաղցած աշխատավարձը կրճատում են, մեզ սոցիալական ապահովագրությունից զրկում են, մեզանից վերջին կոպեկը խլում են ռազմական ներքին փոխառության համար, իսկ մեզ համար բանտի սնունդն ավելի ու ավելի յեն վատացնում, ձմեռը կամերները չեն վառում, վորովհետև այդ փողով ֆաշիստական կառավարությունը ռումբեր, հեղձուցիչ գազեր, գնդացիրներ ե պատրաստում Լեհաստանի պայքարող բանվորների ու գյուղացիների դեմ, ԽՍՀՄ-ի բանվորների ու գյուղացիների դեմ:

Կտտանքները, վոր պահնորդական բաժիններում ու բանտերում ամբողջ շաբաթներ են տեվում, յերկար տարիների բանտարկելությունը, սննդադուլները և առհասարակ բանտային ծանր պայմանները վերջում քայքայել են մեր առողջությունը: Թոքախտը, ստամոքսի խանգարումն ու այլ հիվանդությունները մեր մեջ մասսայական յերևույթ են: Ընդ սմին մենք բժշկական օգնությունից բոլորովին զուրկ ենք: Բժիշկն ասում ե թե՝ ինչո՞ւ համար ե այս «սիմուլյացիան»: Այս պատճառով 1934 թ. մարտին այստեղ վախճանվեց ընկ. Կնապպը՝ կրակովցի մի բանվորուհի, իսկ այս տարի հունիսին ընկ. Ռոզենբերգը ջղագարության ժամանակ ինքնասպանություն գործեց: Այս բոլորը մեր բանտային պայմանների միայն ամենանվազ պատկերն ե: Չընայած այս բոլորին՝ մենք մեր պայքարի մեջ առաջվա պես անսասան ենք: Այստեղ բանտում ձեր պայքարի յուրաքանչյուր լուրը մեզ նորից ե հավատ ներշնչում, թե մոտ ե մեր և ձեր ազատագրումը:

Ընկերնե՛ր, մենք դիմում ենք ձեզ՝ ՊՊՍ-ի և ԲՈՒՆԴ-ի բանվորներին: Պաշտպանեցե՛ք մեր պայքարը՝ քաղբանտարկյալներիս հեղափոխական պայքարը:

Մենք գիտենք, վոր դուք անկեղծորեն ուզում եք պայքարել ձեր ազատագրման համար, բայց պարոնայք Նեձյալկովսկիներն ու Ալտերները ձեզ կասեցնում են պայքարից: Դուք շատ լավ գիտեք, թե Լոձի և Բելոստոկի գործադուլի ժամանակ նրանք ի՛նչ դավաճան դեր խաղացին: Մի՛ հավատացեք ֆաշիզմի դեմ պայքարելու մասին նրանց ասածներին: Նրանք բուրժուազիային օգնում են ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ պատրաստելու: ՊՊՍ-ի ու ԲՈՒՆԴ-ի առաջնորդները դավաճանում են պրոլետարիատի պայքարը, ճիշտ այնպես, ինչպես

Վելլսին և մյուսները դավաճանեցին գերմանական պրոլետարիատի պայքարը:

Ընկերնե՛ր, պայքարի յելեք ընդդեմ ֆաշիստական տեռորի: Կազմակերպեցեք բանվոր մասսային և դուրս յեկեք քաղբանտարկյալներին պաշտպանելու: Միասնական ճակատի ցույցերի դուրս յեկեք՝ բանտերի ու դատարանների մոտ: Արհմիութենական ամեն մի ժողովում մասսայական բողոքներ հայտնեցեք՝ ֆաշիստական բանտային ռեժիմի, բանտերում տեղի ունեցող ծեծի ու արտակարգ դատարանների դեմ: Մասսայականորեն մտեք ՄՈՊՐ-ի՝ ֆաշիստական տեռորի դեմ, քաղբանտարկյալներին պաշտպանելու համար, հակախորհրդային պատերազմի դեմ պայքարող միակ կազմակերպության շարքերը:

Ստեղծեցե՛ք քաղբանտարկյալների պաշտպանության կոմիտեներ: Կազմակերպեցեք նվիրատվություններ ու քաղբանտարկյալների շեֆություն:

Փրկեցե՛ք մեզ քաղցից, ցրտից ու ֆիզիկապես հյուծվելուց:

Հեղափոխական բարևներով՝ Ֆորդոնի բանտի
քաղբանտարկյալ կանայք

1933 թ. դեկտեմբեր

Թանկագի՛ն ընկերներ.

Շնորհակալ եմ Ձեզնից այն հնարավորության համար, որ կարողանում եմ ովկիանոսի վրայով վողջույն ուղարկել ընկերներին: Յես անչափ հրճված եմ խորհրդային բանվորներով, վորոնք, չնայած սոցիալիզմ կառուցելու ասպարեզում իրենց ունեցած վիթխարի աշխատանքներին, հետաքրքրություն են գտնում կապիտալիստական յերկրների քաղբանտարկյալներին վոգևորիչ նամակներ գրելու:

Իմ անկեղծ վողջույնը ՄՈՊՐ-ի ընկերներին, յես

նրանց հաջողություն եմ ցանկանում: Մենք մեր կապիտալիստների դեմ պայքարում ենք՝ պաշտպանելով ձեզ, դուք ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի համար սոցիալիստական բերդ եք կառուցում:

Վերջին տարին այստեղ՝ բանտում մնալս (յես փորձում եյի լվացքատների նեգր ու սպիտակ բանվորներին կազմակերպել, վորի համար բանտ ընկա) կապիտալիստական սիստեմի հանդեպ իմ աչքերն ե՛լ ավելի բաց արեց: Յես տեսել ու կաշվիս վրա փորձել եմ, թե ինչպես է դաժան վոստիկանությունը մահակներով հարձակվում՝ ծրարներ բաժանողների ու ցուցարարների վրա, բայց այն նախամտածված թշնամանքն ու մարդկանց այնպիսի մտածացին կոտորածը, վոր ամենաքաղաքակիրթ ՀԱՄՆ-ի բանտում ենք տեսնում, մարդու արյունը յերակների մեջ սառցնում է:

ՀԱՄՆ-ի բանտերը բերդի տպավորություն են թողնում: Բանտարկյալներն ստրուկների վիճակում են, նրանց ժրը սարսափելի յե և գանգատվելու իրավունք չունեն: Նրանք շարունակ զինված պահակի հսկողության տակ են: Բանտի վերակացուներն ու ծառայողները վոստիկանության ամենավայրագ ու դաժան գործակալներն են, կարծես նրանցից լինեն, վոր ցարիզմի օրով ապրած ձեր ծերերը դեռևս չեն մոռացել: Տնտեսական ճնշման հանդեպ աճող դիմադրությանը վոստիկանությունն ու դատական ապարատը մի պատասխան ունեն—ե՛լ ավելի խիստ պատժել, ե՛լ ավելի յերկարատև բանտարկությունների դատապարտել (5 տարվա բանտարկությունը «թեթև» դատավճիռ է համարվում) և դաժան վերաբերմունքի, ֆիզիկական վոչնչացման յենթարկել:

Մի բուռն քրեյագետներն ու հոգեբուժներն ամոթից գլուխները պետք է քաշ անեն: Բուրժուական գիտության ու կուլտուրայի ստանդարտ ներկայացուցիչների պես նրանք եյ շարունակում են իրենց կեղծ գի-

տական ապացույցներով քողարկել կապիտալիստական սիստեմի զազանությունները:

Միայն ԽՍՀՄ-ում գիտությունը կարող է ուղիղ ճանապարհով ընթանալ: Միայն այնտեղ կարող է գիտությունը գործնականում կիրառվել: Միայն պրոլետարական յերկրում մարդու ստեղծագործությունը կարող է դառնալ ընդհանուր շահի հասնելու կոլեկտիվ ջանք, վորի ապացույցն է Սպիտակ—Բալտիկ ծով ջրանցքը:

Լեվոն Բլյում
Հրեյտ Մեդոու Պրիզոն

Կոմստոկ, Նյու-Յորք

ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲԱՆՏԵՐՈՒՄ

ԱՆԴԱԴՐՈՒՄ ՈԳՆԵՑԵՔ ՄՈՊՐ-ԻՆ

Ընկերնե՛ր.

Մեր ամուսինները սպանված են Բեռլինի, Դախաույի և Լայպցիգի ֆաշիստական բանտերում՝ դաժան տանջանքներից հետո: Վողջ և առողջ նրանք ընկան ֆաշիստական բանտերը, իսկ յերբ մենք նրանց կրկին տեսանք— խոշտանգված, վերքերով լի դիակներ էյին նրանք արդեն: Նրանց դիակները հանդիսանում են ամենիջական մեղադրանք ֆաշիստական տերրորի դեմ: Սուտ հերյուրանքներ են ֆաշիստների կողմից տարածվող այն լուրերը, վոր իբր թե մեր ամուսինները ինքնասպանություն են գործել:

Ֆաշիզմի կողմից դեպի իրենց հակառակորդները ունեցած կատաղի և կույր ատելության պայմաններում, մենք գտնվում եյինք ձերբակալման վտանգի տակ իբրև պատանդներ, ինչպես դա պատահեց ընկ. ընկ. Շտեյնֆուրտի և Բեյմլերի *կանանց հետ: Շնորհիվ միայն ՄՈՊՐ-ի կողմից կազմակերպված պրոլետարական համերաշխության կամպանիայի, մենք և մեր զավակները հնարավորություն ստացանք գալ Խորհրդային Միություն— ամբողջ աշխարհի աշխատավորության հայրենիքը:*

3000*-ից ավելի հեղափոխականներ տանջալից մահվան են յենթարկված ֆաշիստական դահիճների կողմից Գերմանիայում: Շատ կանանց և մայրերի ընկավ նույն վիճակը, ինչ վոր մեզ: Մենք հիշում ենք հակաֆաշիստական մարտիկներ՝* Իոնի Շերայի, Շտեյնֆուրտի, Շենխաարի, Շվարցի և Երիխ Մյուզամի *սպանությունը:*

Տասնյակ հազարավոր պրոլետարական հեղափոխականներ դեռ գտնվում են բանտերում, տաժանակիր աշխատանքներում և մեկուսացման ճամբարներում, յենթարկվելով յուրաքանչյուր օր մահաբեր վտանգի: Նրանց մեջ է Գերմանիայի աշխատավորության առաջնորդ՝ Էրնեստ Թելմանը:

Ֆաշիստները ջանում են թող փչել աշխատավորության աչքերին՝ դատարկ խոսքերի ու շքեղ պարադների միջոցով, վորոնց կազմակերպման համար նրանք խլում են քաղցած ժողովրդից վերջին փշրանքները, բայց հեղափոխական ֆրոնտը Գերմանիայում ամրանում է: Մենք տեսել ենք բանվորների ցույցը աշխատավարձի պակասեցման դեմ, կանանց ցույցը՝ իրենց ամուսիններին հարկադիր կերպով գյուղ արտաքսելու դեմ: Մենք համոզված ենք նրանում, վոր աշխատավորական մասսաների միասնական ֆրոնտի յելույթները կկասեցնեն ֆաշիստների գազանությունները և այն ժամանակ նացիոնալ-սոցիալիստների բոլոր վոճրագործությունների վրեժը կհատուցվի:

Հայտնելով մեր յերախտիքը ՄՈՊՐ-ին և մոպրականներին նրանց յեռանդուն աջակցության համար, մենք կոչ ենք անում բոլոր աշխատավորներին՝ օգնել ՄՈՊՐ-ին ֆաշիստական զոհերի համար տարվող համերաշխության գործին: Էրնեստ Թելմանի և բանտարկված Գերմանական բոլոր հակաֆաշիստների պաշտպանության համար տարվող կամպանիան պետք է տա նույն արդյունքները, ինչ արդյունքներ վոր տվեցին Դիմիտրովի, Պոպովի և Տանևի ազատության կամպանիան:

Վոչ մի աշխատավոր չպետք է հավատա ֆաշիստական լրագրերի կողմից տարածվող լուրերին, թե մեծ թվով մարդիկ են ազատված մեկուսացման ճամբարներից: Դեռ այն ժամանակ, յերբ մեր ամուսինները գտնվում էյին գերմանական բանտերում, ֆաշիստները լուրեր էյին տարածում մեկուսացման ճամբարների ցրման մասին: Սակայն դրանք գոյություն ունեն

դեռ մինչև օրս, իսկ մեր ամուսիններին, ինչպես նաև շատ հակաֆաշիստների, սպանեցին:

Ֆաշիզմի բոլոր զոհերի անունից մենք կոչ ենք անում աշխարհի հեղափոխական պրոլետարներին՝

— Միայն միջազգային միասնական պայքարը Էրնեստ Թելմանի և բոլոր բանտարկված հակաֆաշիստների ազատության համար կբերի նրանց փրկությունը: Անդադրում օգնեցեք ՄՈՊՐ-ին:

Յուրաքանչյուր աշխատավորի պարտքն է— ակտիվ համերաշխություն բոլոր նրանց հետ, ում սպառնում է տանջալից մահը:

Էննա Կացմիրշակ
Էմմա Շտենցեր
Բերդա Ալբրեխտ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՎԱՐԻԱՅԻՑ

Թանկագի՛ն ընկերներ.

Մենք, վոր չափազանց դժվարին պայմաններում՝ տեռորի պայմաններում պայքարում ենք Բավարիայում, դիմում ենք ձեզ՝

Առաջին հերթին տեղեկացնում ենք ձեզ, վոր կոմկուսակցությունն այստեղ ես կապրի, և վոչ մի տեռոր չի կարող նրան վոչնչացնել:

Մենք փորձից գիտենք, վոր միայն մասսայական շարժումը կարող է փոխել դրությունը: Սակայն այժմ, յերբ մենք անհավասար ուժերի դեմ ենք պայքարում, մենք դիմում ենք ձեզ՝ օգնեցե՛ք մեզ, վորովհետև ձեր պրոպագանդը կարող է օգնել մեզ մեր պայքարում: գերմանացի ընկերները գտնում են, վոր ֆաշիզմը պետք է մերկացնել:

Ընկերնե՛ր, Գերմանիայի կոմկուսակցությունը մեծ կորուստներ է ունեցել, վորովհետև թշնամին հետապնդում է իր նպատակը՝ սիստեմատիկորեն վոչնչացնել հեղափոխականներին: Մենք գրում ենք ձեզ մեր ընկերների տանջանքների մասին:

Բացի մեր առաջին ակտիվ ընկերներից, մենք կորցրինք և ընկ. Ֆրանց Շտենցերին, վոր մեր լավագույն ընկերներից մեկն էր: Ընկ. Շտենցերը բերվեց Դախաու-յի (Մյունխենի մոտ գտնվող ճամբարը), նրան գցին մի մութ նկուղ և հետագայում գնդակահարեցին՝ «փախուստի փորձ կատարելու ժամանակ»: Գնդակը նրա ճակատին էր կպել: Կալանքի տակ յեղած ժամանակ նրան միայն հաց ու ջուր եյին տալիս, ու ծեծում: Նա այնքան էր նիհարել, կերպարանափոխվել, վոր մահից հետո, նրա կինը ձեռքի վրա յեղած սպիներից միայն ճանաչեց: Նրա հետ միասին ճամբարում գտնվում էր նաև ընկ. Ֆրշուշուցը: Նրան ևս մի մութ նկուղ գցին: Հավանական է, վոր նա էլ արդեն մահացել է: Հանձին ընկ. Շտենցերի՝ մենք կորցրինք մեր լավագույն ընկերներից մեկին, մի մարտիկի, վոր մինչև իր մահը նվիրված էր հեղափոխության գործին և հաստատ ու գիտակցորեն պայքարում էր հանուն բանվոր դասակարգի ազատագրման: Նրա մաքուր բնավորությունը, նրա պրոլետարական ընկերական վերաբերմունքը, նվիրվածությունն ու մարտունակությունը մեզ օրինակ պետք է ծառայեն:

Օգոստոսի վերջին սպանվեց ընկ. Ցեյնարը: Այսպիսի դեպքերում բանտարկված ընկերներին առանձնացնում են:

Ընկերները տեսել են, թե ինչպես ատրձանակներով զինված գրոհայինները շրջապատեցին ընկ. Ցեյնարին և գնդակներ արձակեցին:

Ընկ. Լեոն Հաուսմանին նախ սվինահար արին, իսկ հետո գնդակահարեցին: Դրեսսելի, Գոդցի և Հաուսմանի սպանության օրերին ճամբարի պարետը վոմն Վեկերլին էր, վոր այժմ Շտուտհարտենում է գտնվում: Այժմ ճամբարի պարետը վոմն Ֆոն Եյքն է: Նա ավելի «օրինական» մեթոդներ է գործադրում: Մինչդեռ նախկին պարետը կալանավորներին մարդասպանների ջոկատներին էր հանձնում, նոր պարետը կալանավորներին

ճամբարային դատարանին է հանձնում, վորի կազմի մեջ են մտնում, պարետը, նրա օգնականը և յերկու գրոհայիններ:

Այդ դատարանը կալանավորներին վորոշ կամ անորոշ ժամանակով դատապարտում է մութ նկուղի, ծեծի և այլն:

Բեռլին, 17|12—33

Թանկագի՛ն ընկերներ·

... Սարսափելի դրություն է տիրում Գերմանիայում, և նրա ազդեցությունը բանվորների կյանքի վրա դուք դժվարությամբ կարող եք պատկերացնել: Կատաղի տեռորը մեր աշխատանքի համար յերբեմն անհաղթելի խոչընդոտներ է ստեղծում: Բայց մենք, իհարկե, ուժներս ներածին անում ենք:

... Դուք լավ ռադիո ընդունիչ ունե՞ք: Ձեզ շատ հետաքրքիր կլիներ ականջ դնեյիք մեր ունեվորների իշխանությանը, վոր հասկանայիք, թե ինչպիսի ստով, կեղծավորությամբ ու դեմագոգիայով նրանց հաջողվում է իշխանության գլուխ մնալ: Սակայն այս ել մեր մեջ լավատեսական տրամադրություն է առաջացնում, վորովհետև այդպիսի իշխանությունը յերկար չի կարող դիմանալ: Յես ծանոթներիս մոտ յերբեմն ռադիոյով ականջ եմ դնում Մոսկվային ու Լենինգրադին: Այդ հաղորդումները մեզ կատարյալ ուրախություն են տալիս ու նոր ուժեր հաղորդում մեր ծանր պայքարում:

... Յես արդեն վերը հիշատակեցի, թե վորքա՛ն դժվար է հեռվից պատկերացնել տեռորի ու ճնշման այն թափը, վորի տակ Գերմանիայի բանվորներն ստիպված են ապրել: Ապրուստի մակարդակն այնքան ցածրացել է, վոր նույնիսկ վորակյալ բանվորների մի շաբաթվա դատումը 12–20 մարկայից չի անցնում: Աշխատավարձը կիսով չափ իջել է, իսկ գործազրկու-

թյունը գաղձյալ չի պակասում: Նորերս լսեցի, վոր մի գրոհային ասաց, թե «մենք առաջ էլ այսքան ոգնություն եյինք ստանում, վորի համար մենք հիմա պիտի աշխատենք և աշխատանքի մեջ մեր կրերը մաշենք»: Բայց թե գրոհայինի համար էլ այսպիսի արտահայտությունը համակենտրոնացման ճամբարով է վերջանում:

Իսկ կենսական անհրաժեշտ մթերքների գները կրկնապատկվել ու յեռապատկվել են, որինակ՝ մարգարինը ծրարին 25 պֆենից մինչև 80–90 պֆեն: Բայց փոխարենը գինու, ձկնկիթի, վառարեյի ու պերճանքի մյուս առարկաների գները խիստ իջել են: Բնակարանային վարձն այն բնակարանների նկատմամբ է իջել, վոր յերեք սենյակից ավելի յե: Յերբ Բեյտերչտրասսե, Կ. մենդանոտչտրասսե և այլ փողոցներով անցնես կենում, մերկ տները դատարկ կանգնած են: Իսկ ինչպես քեզ հայտնի յե՝ միայն Բեռլինում 30 հազար բանվոր ձմեռը տախտակե բուդկաներում է ապրում:

... Խուզարկությունների ու ձերբակալությունների ժամանակ բանվորների բնակարաններից զանազան պատրվակներով բոլոր արժեքավոր բաները վերցնում են՝ հեծանիվ, մոտոցիկլ, գրքեր, դրամ, ռադիո-ապարատներ: Ռադիոն, «վոր բանվորները չկարողանան Մոսկվան ու Լենինգրադը լսել»: Միայն Բեռլինում բանվորներից 350 մոտոցիկլ է բռնագրավված, «վոր անլեգալ աշխատանք չպատարկեն»: Իսկ ով փորձի գանգատվել, նա համակենտրոնացման ճամբարից պրծնում չունի: Մեզ մոտ խուզարկություն կատարելիս բոլոր ռուսերեն դասագրքերը վերցրին:

Բանվորներին, բացի այդ, նեղում է նաև Փաշիստական բարեգործության նպատակներով կատարվող դրամական նվերներ հավաքելը: Հրաժարվելը հաճախ բանտարկությամբ է սպառնում, էլ չխոսենք աշխատանքից ազատելու մասին: Իսկ մանր-մունր խանութպաններն ու տնայնագործներն այս գանձումներից բոլորովին

խորտակվում են: Մի խանութպանի, ի պատասխան նրա գանգատի, յես ասացի.

— Չե՞ վոր բոլոր խանութպանները Փաշիստներին ուզում եյին և ընտրեցին:

— Բայց ո՞վ կարող եր իմանալ, թե այս իշխանությունն այսքան դժբախտություններ կարող է բերել:

Բայց բանվորների համար ամենասարսափելին գրոհայինների ու հատուկ ջոկատների զորանոցներն են, ուր կալանավորելուց հետո մեկեն բերում են: Ուրբաթ որն իմ ծանոթ Տ-ն, 26 տարեկան, Լյութիմչտրասեյից (Մոաբիտում) թաղվեց. նա 5 չաբաթ առաջ եր բանտարկվել: Ըստ արդեն ծանոթ մեթոդների, նրան այնքան յերկար «հարցաքննեցին», վոր մի քանի որ առաջ նրան, կրած չարչարանքներից կիսամեռ վիճակում, փոխադրեցին քաղաքային հիվանդանոց, վորտեղ և չուտով մեռավ: Թեև պարզ հայտնի յեր, թե նա ո՛վ է, նրա հասցեն, բայց նրան, իբրև չճանաչված դիակ, տարան քաղաքային դիարանը: Իսկ յերբ հորն ու մորը մեծ դժվարություններից հետո հաջողվեց մտնել դիակի մոտ, ծերունին տեղն ու տեղը ձերբակալվեց, վորովհետև չդիմացավ ու տղային տեսնելուն պես ճչաց.

— Ես անիծված բանդան է իմ տղային սպանել:

Ծերունուն չուտով բաց թողին, այս բանի մասին բանվորների մեջ արդեն չատ խոսվեց, բայց և այնպես նա պարտավոր է ամեն որ ներկայանալ վոստիկանատուն: Ահա՛ Ձեզ այն հազարավոր դեպքերից միայն մեկը, վորոնք հայտնի չեն դառնում, վորովհետև ծնողներն ու ազգականները վախենում են: Բայց նրանք էլ, ում հաջողվել է կենդանի դուրս գալ այդ զորանոցներից, անհուսալի յեն:

Բայց մենք արիությունը չենք կորցնում: Յեթե ինձ բռնեն և մի բան պատահի, դուք յերբեք մի հավատաք, վոր ինքնասպանություն կամ նման բան արած լինեմ: Յես գիտեմ, վոր բոլոր բաները տանելու հա-

մար, յես Ֆիզիկապես ու բարոյապես բավականին ամուր եմ: Յես յերբեք ձեռքերս չեմ խաչի, ինչ վոր ուժս ներում ե, յես կանեմ, վոր ելի ապրեմ մինչև վերջին կռիվը, վորին 28 տարի յե, ինչ սպասում եմ:

Սրտագին վողջույն՝

Ռոտ Ֆրոնտ.

ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԴԺՈԽՔՈՒՄ

Գերմանական կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի որգան «Ռոտե Ֆանեյի» նախկին գլխավոր խմբագիր Վերներ Գիրշը հետևյալն ե գրում ֆաշիստական Գերմանիայի բանտերում և համակենտրոնացման ճամբարներում գոյություն ունեցող ռեժիմի մասին:

«1933 թ. մարտին, Ռայխստագի հրկիզումից չորս որ հետո, ընկ. Երնեստ Թելմանի հետ յես էլ ձերբակալվեցի: Այդ որվանից այս տարի ու կեսվա ընթացքում յես նստել եմ ֆաշիստական Գերմանիայի զանազան բանտերում և համակենտրոնացման ճամբարներում: Այդ ժամանակամիջոցում յես իմ «բնակարանը» 22 անգամ փոխեցի: 16 անգամ ինձ ծեծել են մինչև գիտակցությունս կորցնելը և յես մի ականջիցս զրկվել եմ:

Իմ առաջին ծեծը տեղի ունեցավ 1933 թ. ապրիլին: Այդ որերին նացիոնալ-սոցիալիստների շարքն անցավ վոմն Բրաշվից, վոր սոցիալ-դեմոկրատների իշխանության ժամանակ Բեռլինի քրեյական վոստիկանության ականավոր կոմիսարներից մեկն եր: Բրաշվիցն ինձ անմիջապես հանձնեց ֆաշիստ բանդիտների ձեռքը: Ապրիլին 13-ին իբր թե հարցաքննության համար, ինձ կանչեցին Կարլ Լիբկնեխտի անվան տունը, վորտեղ առաջներում Գերմանական Կոմկուսի Կենտկոմն եր տեղավորված, իսկ այժմ՝ ֆաշիստական գաղտնի վոստիկանության գլխավոր շտաբը: Ցերեկո-

յան ժամը) և կեսին ինձ տարան կոմիսար Բրաշվիցի սենյակը: Պատահաբար, թե դիտմամբ Բրաշվիցն ինձ ընդունեց այն սենյակում, վոր իմ աշխատասենյակն եր, յերբ յես «Ռոտե Ֆանեյի» գլխավոր խմբագիր եյի:

«Իդեոլոգիական» կարճ նախապատրաստությունից հետո, վոր հատկապես Գերմանական կոմկուսի առաջնորդ ընկ. Թելմանի հասցեյին ուղղած կոպտագույն հայհոյանք եր, Բրաշվիցն անհետացավ: Իմ առաջ ցըցվեց գրոհային ջոկատների մի հարբած հրամանատար: Բացի այդ, աջ ու ձախ կողքերիս, ինչպես և առջևս ուրիշ յերեք բանդիտ ես ցցվեցին, իսկ մի ուրիշ բանդիտ ատրճանակը բռնած մի փոքր հեռու յեր կանգնել: Սկսեցին հերթով հարվածել ինձ՝ խփելով գլխիս և աչքս ու յերեսիս: Բռունցքին ընկերացավ ռեզինե մահակը: Ծեծը տևեց յերկու և կես ժամ, աննշան ընդհատումներով: Սոսկալի ծեծից աչքերս փակվեցին:

Յերբ ծեծն ավարտվեց, ինձ հայտարարեցին.

— Հիմա կորիր ներքև՝ նկուղը: Հիմա խոզ, քեզ կգնդակահարեն: Սա քո վերջին ցանկությունը:

Յես թուղթ պահանջեցի: Նրանք հայտարարեցին, վոր յես պետք ե նախապես ասեմ, թե ինչ եմ գրելու: Յես պատասխանեցի, թե ուզում եմ իմ վերջին վողջույնը գրել հարազատներիս: Այդ ժամանակ ինձ հայտարարեցին, վոր «այս անգամ» ինձ բանտ կտանեն, բայց մի շաբաթից նորից կկանչեն: Սակայն ինձ տարան գրոհայինների մի զորանոց. այնտեղ ինձ հայտարարեցին՝ «Թելմանի ադյուտանտ»: Գրոհայինները, թեև պառկած եյին, հետաքրքրությունից վեր կացան և կատաղի հայացքով նայում եյին ինձ: Նրանք հարձակվեցին վրաս և նորից սկսեցին ծեծել:

Առավոտյան ինձ մոտեցավ մի գրոհային և պահանջեց, վոր գոչեմ «Կեցցե Հիտլերը»: յերբ յես հրաժարվեցի, հրամանատարը մոտեցավ ինձ և հարցրեց, թե ինչու չեմ կատարում այդ հրամանը, յես պատասխանեցի, վոր չեմ կարող:

— Լավ, յեթե դու չես ցանկանում ասել, «Կեցցե

Հիտլերը», ապա ծայրահեղ դեպքում յերդիր Գերմանական հիմնը, չե՞ որ այդ կարող ես. բոլորն էլ կարող են այդ անել, չե՞ որ դու էլ գերմանացի յես: Իսկ յես յերբ դրանից էլ հրաժարվեցի, հրամանատարը գոռաց.

— Դե, գործի անցեք, դռներն ու լուսամուտները փակեցեք: Ամբողջ բանդան շրջապատեց ինձ: Դռներն ու լուսամուտները փակեցին: Վերարկուս ու պիջակս պատռեցին: Ցերկու գրոհային ձեռքերս այնպես ոլորեցին, որ յես չոքեցի. մյուսները կաշվե հաստ գոտիներով ծեծում եյին ինձ: Գրոհայինների հրամանատարն ամբողջ ժամանակ վռնում եր.

— Ցերգիր, յերգիր:

Ցես ճչացի.

— Ցեթե յես վախկոտ լինեյի, կերգեյի, ամոթ չի՞ ձեզ՝ հակառակորդին ծեծել միայն նրա համար, որ նա վախկոտ չե:

Ցերբ յես գիտակցությունս կորցրի, նրանք դըլխիս ջուր ածելով նորից ինձ ուշքի բերին, որից հետո ծեծը վերսկսվեց:

Իմ դահիճները յոթ անգամ փոխվեցին: Նրանցից մեկը կատարյալ գազանացած վիճակում սկսեց թիթեղյա թեյամանով խփել գլխիս: Դեմքիս վերք առաջացավ. թեև վերքն անվտանգ եր, բայց դեմքս արյունաշաղախ յեղավ:

Սեպտեմբերին, իմ ձերբակալությունից վեց ամիս հետո, ինձ մի խումբ ուրիշ կալանավորների հետ բանտից տեղափոխեցին Բրանդենբուրգի համակենտրոնացման ճամբարը: Այս ճամբարում ռեժիմը սոսկալի յեր: Այստեղ հավաքված եյին ամենաարյունարբու, ախտավոր դահիճները: Այստեղ մի Փլիդել կար, որին կալանավորները «Մեռյալ տուն» եյին ասում: Այստեղ հայտնաբերվեց Բրանդենբուրգի կուսակցական աշխատողուհի, բռնաբարությունից հետո սպանած Գերտրուդ Պիտեյի այլանդակված մարմինը:

Մի տաս օր. յես հնարավորություն ստացա մի

կերպ թաղնվել մյուս կալանավորների մեջ: Սակայն տասնմեկերորդ օրը ճամբարի պարետը «հայտաբերեց» ինձ: Ինձ նստեցրին «մեռելատան» նկուղը. այստեղ ուրիշ տասն ընկերների հետ նստած եր նաև ընկ. Հայնց Ալտմանը, որին ֆաշիստները մեղադրում եյին, թե ուրիշ ճամբարում հեղափոխական խմբակ ե կազմակերպել:

Ընկ. Ալտմանին տեղավորեցին ինձ հետ: Ինձ հրամայեցին ծեծել նրան: Ցես, իհարկե, հրաժարվեցի: Դրանից հետո դահիճները հարձակվեցին վրաս և ծեծելով կիսամեռ դարձրին:

Դահիճները հետները սանիտարներ եյին բերում, որոնք այրունակալած տեղերին յոդ եյին քսում, կամ ծեծեվողների ջարդված տեղերը կապում, ապա հեռանում եյին ցինիկորեն հայտարարելով.

— Կարելի յե շարունակել:

«Մեռելատուն» բերելուց միայն յերկու շաբաթ հետո յես հնարավորություն ունեցա ուրիշ կալանավորներ տեսնել: Մինչ այդ ինձ շրջապատողները սև շապիկավոր դահիճներն եյին:

Այս բանն ինձ չտեսնված ուրախություն պատճառեց: Պրոլետարական, կոմունիստական համերաշխության այն զգացմունքն ե այդ, որ մեզ սարսափելի չի դարձնում և ոչ մի տանջանք, ու մեզ կոփում ե նոր փորձությունների և նոր պայքարի համար:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍ «ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻՆ» ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

(Բելլ-Իլ-Ան-Մեր-ում, վոր նշանակում է՝ ծովի հրաշագեղ կղզի, ուր գտնվում է յերեխաների ժամանակիր բանտերից մեկը —յերիտասարդ «հանցագործների» համար, չքավորության, վորբերի ու յերեխաների համար, վորոնք կարիքից դրդված ձեռք են տվել մասնավոր սեփականության «սուրբ» իրավունքին։

Անողոք, սոված ռեժիմի հետևանքով հուսահատության հասցրած, կալանավորներից մի մասը, թվով 56 հոգի ս. թ. օգոստոսի 27-ին կազմակերպեցին անհուսալի փախուստ բանտից։

Ստորև բերում ենք յերկու պատկեր Բելլ-Իլ-Ան-Մեր բանտում գտնվող յերեխաների կյանքից)։

ՍԱՌՑԱՑԻՆ ՋՐԻ ՄԵՋ

Բելլ-Իլի մեկուսարանում պահվող յերեխաների որը սկսվում է վաղ առավոտվանից։ Ժամը 4-ին՝ պետք է վեր կենալ, կարգի բերել անկողինը։ Յեթե դա կատարվում է անկանոն—մեղավորը յենթարկվում է պատժի։ Ժամը 8-ին սկսվում է արտաքնոցների մաքրությունը։ Դա սովորական մաքրություն չէ Բելլ-Իլում, ինչպիսի յեղանակ էլ վոր լինի—կանոնները անողոք են։ Նրանք, ովքեր զբաղված են մաքրությամբ—աշխատում են կիսամերկ... Բայց ժամանակիր բանտի վարչությունը գտնում է, վոր այդ դժբախտների համար տանջանքները քիչ են։

Ձմռանը մեկուսարաններում բանտարկվածները, կատարելով վարչության քմահաճույքը, պետք է լվացվեն սառցային ջրում, նախորոք ջարդելով սառույցի շերտը։

Պետք է քրքրել նացիոնալ-սոցիալիստների մեկուսացման ճամբարում յեղած հալածանքների պատմա-

գրությունների մեջ, վորպեսզի ճարվի նրա նման նրբագույն տանջանքների միջոցառումներ։

Յեվ դա անվանում են «դաստիարակության փակ տուն»։ Այդ դժբախտներից յուրաքանչյուրը թոքերի բորբոքումով հիվանդանալու և ամբողջ կյանքում անդամալույծ դառնալու վտանգի տակ է։ Դահիճները չեն ճնշվում—նրանց զոհերը—վորբեր են ու անապաստաններ, նրանց պաշտպանողներ չկան։

Ժամը 11-ին կալանավորներին նախաճաշ են տալիս։ Հիշեցնում ենք, վոր նախաճաշը մի որ բաղկացած է լինում մի կտոր հացից, իսկ մյուս որը—հազիվ տաքացրած յուղալի ջրից։

ԱՎԱԶ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ժամը 2-ը—դա որհասական ժամ է...Սկսվում է չտեսնված տանջանք, վորը ինքնըստինքյան արդարացնում է բոլոր փախուստներն ու վրեժխնդրության արտահայտությունները։ Ավազի տեղափոխություն։ Նախկին ժամանակիրները, զինվորական կալանավորները—Կալվի և Ոլերոն-ի բռնավորները «Դեֆանսի» եջերում արդեն մերկացրել են այդ սոսկալի տանջանքները։ Այդ տանջանքներին յենթարկվում են նաև յերեխաները։ Յեվ այդ չարչարանքը սկսվում է ամեն որ ժամը 2-ից մինչև 5-ը, ըստ վորում աշխատանքը կատարվում է ամենաբարբարոս պայմաններում։

Յերբ նավը մոտենում է կղզուն, ձեր աչքին իսկույն ընկնում է ծովի վրա կախված բարձր ժայռերի վրա նշմարվող հնագույն բերդը, իսկ աջ կողմում «ժամանակիր բանտը»....

Լուսանկարները տալիս են միայն աղոտ պատկերացում այդ զառիվայր ժայռերի բարձրության մասին։

Պետք է ինքներդ բարձրանաք նրանց վրա, ինչպես դա կատարել եմ ինքս, վորպեսզի հաշվի առնեք այդ տանջալի մագլցումների ամբողջ սարսափը։ 3 ժամ անընդհատ կալանավորները պարտավոր են ուսերի վրա

տեղափոխել պարկերով ավազ կամ խիճար ծովափից մինչև ժայռի գագաթը:

Դա անասելի կոշմար է:

Պարկի քաշն է ամենաքիչը 30—40 կիլոգրամ: Փոխադրվող ավազը խոնավ է, ստիպված են քայլել քամու հոսանքին հակառակ: Ձմեռը դժբախտները սառչում են: Նրանք հարկադրված են միշտ փոխադրել ավազով լի ծանր պարկերը մեկ ուսի վրա:

ՅԵՐԿՈՒ ՎԱՆԴԱԿԻ ՄԻՋԻՑ

ՆԱՄԱԿ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՍՏԱՐՈ ԶԱԳՈՐԱ ԲԱՆՏԻՑ

Յերկարատև բանտարկությունն ու սպանիչ ռեժիմը մեր՝ քաղբանտարկյալներիս կյանքը վտանգի տակ է դրել: Քաղցածության ու հիվանդության պատճառով մահը մեզ բոլորիս սպառնում է:

Մենք բոլորս դունատ ենք, լղար, փրչոտած, քաղցից ուժասպառ և խոշտանգված՝ վերքերով լի: Խելագարության և ինքնասպանության բազմաթիվ դեպքեր են տեղի ունենում:

31 քաղբանտարկյալներ ծանր հիվանդ են. նրանցից 12-ը պառկած են, 19-ը տուբերկուլյոզով են տառապում, 7-ը՝ ստամոքսի քայքայումով ու խոցերով, իսկ 3-ը՝ թոքերի բորբոքումով: Հիվանդներից շատերը տառապում են «յերկու և ավելի հիվանդությամբ»: Ինչ վերաբերում է մնացած, այսպես կոչված «առողջներին», նրանք բոլորը նույնպես տառապում են վոսկրացավով:

Մեզ վոչ մի բուժ-ոգնություն ցույց չեն տալիս. հիվանդներին հիվանդանոց չեն փոխադրում: Բժիշկը 20 որը մի անգամ է մեզ մոտ հաճախում: Գ. Գանեվան 15 որվա ընթացքում չորս անգամ ուժեղ արյունահոսություն է ունեցել, և չնայած մեր բողոքներին, նրան հիվանդանոց չեն փոխադրում: Ավելի առողջ քաղբանտարկյալներին չի թույլատրվում հիվանդներին հսկել:

Բանտը դժոխքի յե վերածվել. ամեն մի անկյունից հիվանդների հառաչանքներ են լսվում, վորոնք զուրկ են վորևե ոգնությունից: «Սանիտարները»՝ այդ արյունարբու հսկիչները ծաղրում են իրենց զոհերին մի չնչին բանի համար ծեծելով գցում են մեկուսարան:

Շատ հաճախ դեպքեր են լինում, յերբ պահակը ներս է մտնում և սկսում ծեծել թե հիվանդներին և թե առողջներին: Մեծ ժամանակ ամբողջ բանտը չտեսնըված սոսկումի յե վերածվում:

Հարվածներից ու զոհերի ձայներից մարդ փշաքաղվում է: Դժվար է նկարագրել այդ սոսկումները: Մենք ստիպված ենք լինում միահամուռ ուժերով մեր փայտե վոտնամաններով դռները ծեծել, վորպեսզի դահիճը վերջ տա մեր ընկերոջը տանջելուն:

Այսպիսի րոպեներից հետո մի քանի ժամ չենք հանգըստանում: Նման տանջանքները բանտապետների կողմից ամենայն հաճույքով են կատարվում:

Նրանց միակ նպատակն է՝ վորքան հնարավոր է շուտ վոչնչացնել մեզ, մանավանդ հիվանդներին, վորպեսզի հնարավոր լինի մեր փոխարեն նորանոր զոհեր ընդունել:

Ընկերներից շատերը զոհ գնացին այս սպանիչ ռեժիմին. մեկուսարանում վերջերս քաղբանտարկյալ մի կին ինքնասպանություն գործեց, վոր նախքան այդ խելագարվել եր: Խելագարվեց նաև Կ. Բլայեվը: Նյարդային ուժեղ քայքայում ստացավ Տ....ն, վոր աշխատում է ինքնասպանությամբ վերջ տալ իր կյանքին: Նա արդեն 9 տարի յե ինչ բանտարկված է. բանտի վարչությունը վոչ միայն բժիշկ չհրավիրեց, այլ նույնիսկ թույլ չտըրվեց նրան հիվանդանոց փոխադրել: Բացի այդ, արգելվեց մեր քաղբանտարկյալներից մեկին փոխադրել Տ...-ի մեկուսարանը՝ նրան խնամելու համար:

Մի անգամ բանտարկյալներից մեկը, վոր ցեմենտե առանձնասենյակում եր գտնվում, խիստ ջղայնացած վիճակում վերջ տվեց իր կյանքին: Նրան առավոտյան գտան ուռած, արյունոտ աչքերով և վերքը վզին: Կո—

պետ ծաղրանքը և պրովակացիան անընդհատ շարունակվում են։ Այսպես, օրինակ՝ մարտի 21-ին, ճաշից հետո, հայանի դահիճ Կոզյուն, որ դիրեկտորին եր փոխարինում, պահակներին բակն ուղարկեց, ուր քաղբանտարկյալներն եյին զբոսնում և կարգադրեց, որ բանտարկյալները միայն շրջանաձև ուղղությամբ զբոսնեն, չհամարձակվելով նստել, կամ խմբովին զրուցել։ Իսկ ով հոգնի միմիայն հատուկ թույլտվությամբ կարող է նստել։ Հակառակ դեպքում ծեծի կենթարկվի։ Ի նշան բողոքի, բոլորս թողինք բակը և հավաքվեցինք դռների մոտ՝ պահանջելով ներս թողնել մեր կամերները։

Բանտի դիրեկտորն արձակուրդի մեջ է, նրան փոխարինողը լիազորություն ունի մեր ազգականներից ընդունել մեր անունով ստացած գումարները։ Բայց այդ գումարները նա չհանձնեց մեզ, որի պատճառով սոլի մատնվեցինք։ Այս միջոցով նա և գանձապահը գրավել են 16 ընկերոջ 3645 լեվը։

Տեսակցությունը մեր ազգականների հետ միշտ ընդհատվում է, մեզ հետ տեսակցություն ցանկացող մեր ազգականներին մեծ չափով դրամ ու ժամանակ է հարկավոր։

Ահա թե ինչ է պատմում մի ընկեր, որ փորձ է արել տեսակցություն ունենալ բանտարկված ընկերոջ հետ. «ամբողջ գիշերը վոտքով յեկա (դրամ չունենալու պատճառով), որ ընկերոջս տեսնեմ։ Դատարանում այցելության տոմս ստացա՝ վճարելով 2 լեվա։ Բանտում, յերբ իմացան իմ այցելության մասին, հրաժարվեցին բերածս կերակուրը նրան տալ, իսկ ինձ արգելեցին դիրեկտորի մոտ գնալ։ Յերբ յես սկսեցի բողոքել, վերջապես թույլ տվին յերկու վանդակի միջից, ուր հսկիչն անընդհատ շրջում եր, տեսնել ընկերոջս»։

— Մայրիկից ուտելիք բերի, բայց չեն ընդունում,—ասացի յես։

— Կարիք չկա անհանգստանալու, դու գիտես, թե վորտեղ պետի դժգոհություն հայտնել...

Դեռ վերջին խոսքը չարտասանած, հսկիչը հան-

կարծ հայհոյեց նրան՝ հրելով մյուս կողմը և հայտարարեց, թե տեսակցությունն ավարտված է։ Յեվ նրան տարավ կարցեր։

Յես դիմեցի դիրեկտորին, բողոքեցի հսկիչի ինքնագլխության համար, բայց նա հայտարարեց, թե բանտի «դիսցիպլինան» այդպես է։

Այդպես վերջացավ մեր տեսակցությունը։

ՄՈՊՐ-Ի «ՊԱՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ» ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

ՄՈՊՐ-ի ֆրանսիական սեկցիան շատ հաղվադյուտներից մեկն է, որ կարողացել է յերեխաների մեջ շնորհալի կերպով մոպրական աշխատանք ծավալել։ 1933 թ. աշնանից յերեխաների սորին կազմակերպության մեջ աշխատանքն սկսվեց և այժմ արդեն դրական արդյունքներ է տալիս։ Մոտ 30 պատանեկական խմբակ կա, ուր 1000-ից ավելի ՄՈՊՐ-ի պատանի բարեկամներ են ներգրավված. բնորոշ է այն, որ 50 տոկոսից ավելին Փարիզի շրջանից են, իսկ մնացած 400—500 անդամը՝ մյուս շրջաններից։

Յերեխաների խմբակներն ակտիվ կերպով մասնակցում են այն բոլոր միջոցառումներին, որ ՄՈՊՐ-ի ֆրանսիական սեկցիաներն են մշակում ու կիրառում։ Նրանք մասնակցել են «քաղբանտարկյալների ծննդյան» տոների կամպանիային՝ կատարելով միջոցների գանձումն ու շուկայի կազմակերպումը։ Հակաֆաշիստական դեմոնստրացիայի ու ֆաշիստական տեռորի դեմ տեղի ունեցող ցույցերի ժամանակ յերեխաները մեծերի հետ գնում եյին իրենց սեփական դրոշակներով ու լոզունգներով և իրենց յերգն եյին յերգում։ Փարիզի կոմունարների պատի մոտ տեղի ունեցող դեմոնստրացիային 400 պատանի մոպրականներ եյին մասնակցում։ Յերեխաներն այցելում եյին հակաֆաշիստական հիվանդանոցներում պառկած՝ փետրվարի 9-ին վիրավորվածներին ու նրանց պատմում իրենց ցույց տված օգնության տեռորի զոհերին։

Լավագույն աշխատանք է կատարվում՝ կազմակերպության մեջ նոր յերեխաներ ներգրավելու: Դպրոցներում թերթիկներ են տարածվում, սպորտի հրապարակներում ազատ օրերին խաղեր են կազմակերպում մոտակա շրջանի յերեխաների համար, ուր սովորաբար հակիրճ ճառով դուրս է գալիս ՄՈՊՐ-ի անդամը՝ ՄՈՊՐ-ի գործունեյության մասին. ագիտացիոն բնույթի պիեսներ են ցուցադրում և այլն: Յերեխաների համար ամեն ամիս սոցմրցման յերեկույթներ, զանազան թեմաների շուրջը զեկուցումներ են կազմակերպում՝ աշխարհիկ նկարներով, յերեխաների համար միանգամայն մատչելի ձևով (Փարիզյան Կոմունա, Լույիզա Միշել, դրությունը գաղութներում և այլն): Այստեղ անհրաժեշտ է նշել, վոր այս թեմաներից մի քանիսը (Լենինը և Խորհրդային իշխանությունը, Մարքսը և նրա մարքսիստական թեորիայի հիմունքները և այլն) դեռևս շատ ծանր են ու յերեխաների հասկացողության համար անմատչելի յեն և չեն հանդիսանում մոպրական հատուկ նյութեր:

ՄՈՊՐ-ի սեկցիայի կենտրոնական «Լյադեֆանս» օրգանում ամեն որ կարճ հաշվետվություններ է լույս տեսնում ՄՈՊՐ-ի պատանեկական բարեկամների գործունեյության մասին՝ զանազան տեղերում: Ֆրանսիայում յերեխաների մեջ աշխատանքը բավականին ուժեղ թափ է ստացել. այժմս անհրաժեշտ է ունեցած հաջողությունները օգտագործել ՄՈՊՐ-ի պատանի բարեկամների մեջ աշխատանքն ուժեղ կերպով ծավալելու համար:

Ֆրանսիացի յերեխաների մեջ կատարվող աշխատանքն որինակ պիտի ծառայի մյուս բոլոր սեկցիաների համար:

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԸ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԳԼԻԱՅԻ ԴԱԺԱՆ ՌԵԺԻՄԻ ՏԱԿ

«ԻՆՏԵԼԻՋԱՆՍ ՍԻՐՎԻՍԻՆ» ՎԱՅԵԼ ԴԱԺԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Անգլիայի խուզարկու վոստիկանություն)

ՆԱՄԱԿ ՍԻՆԳԱՊՈՒՐԻՑ

Յերբ ձերբակալեցին ինձ քրեյական հանցագործների հետ միասին տեղավորեցին խուզարկուներով շրջապատված կամերաներից մեկում: Այս կամերան զրկված է թերթ ստանալու բոլոր տեսակի իրավունքներից, իսկ հատ ու կենտ ստացվող թերթերը շղարշված են լինում հակահեղափոխական և հակախորհրդային բամբասանքներով, վորոնք ուղղված են Խորհրդային Միության և Կոմունիստական կուսակցության դեմ:

Նման ռեժիմի կիրառման նպատակն այն է, վոր բանտարկյալները կտրված լինեն արտաքին աշխարհից: Մեր հարևան կամերայում բանտարկված են 60 չինացի կոմունիստներ, վորոնց նույնպես շրջապատել են խուզարկուները: Ինձ շրջապատող քրեյականների մեջ յես թշնամանք առաջ բերի, այն բանում, վոր շահելով կալանավորների վստահությունը: Բանտարկյալներից մեկը խորամանկությամբ թուղթ ու մատիտ տվեց ինձ, իսկ մյուսներն օգնում եյին հեղափոխական ընկերների հետ հաղորդակցություն ունենալու մեջ:

Այս կապն ինձ հոգեպես թեթևացնում եր բանտում և գնալով ավելի ամրապնդվում: Չինացի հեղափոխականների դրությունը համեմատած մեր կամերայի կալանավորների հետ ավելի վատթար եր, վորովհետև

առողջապահության վոչ մի կանոն մուտք չեր գործում այդ կամերաներում, մութ ու խոնավ այդ կամերաներում վխտում են տասնյակ հազարների հասնող միջատները, չեն կոմունիստների վրա գործադրվող ամենօրյա ծանր աշխատանքն ու ամեն տեսակի ծաղրանքները չգերազանցված չափերի յեր հասնում: Չհանդուրժելով այս վայրագ ռեժիմը բանտի պատերի ներսում քաղբանտարկյալները թվով 60 հոգի 12-որյա սննդադուլ հայտարարեցին, վորպեսզի մի քանի գիրք ձեռք բերեն ու վերակացուին փոխել տան: Նրանցից չատերին հաց ու ջրով 40 որ կարցեր նստացրին, տաք կերակուր միայն 4 որը մի անգամ եյին տալիս: Հարող բանտարկյալներից մեկը, վոր մասնակցում եր գաղտնի թղթակցություններ հանձնելուն, նույնպես 40 որ կարցեր դրվեց: Նա բողոքեց՝ իր կարցերի պատերին հեղափոխական լոզունգներ գրելով: Նրան մարմնական պատժի դատապարտեցին (բաց մարմնին չոր ու դալար բամբուկի ճիպոտներով 24 հարված հասցնելով), վորովհետև անգլիական կուլտուրան մարմնական պատիժ թույլ ե տալիս և այդ պատիժներով պարծենում ե: Բանտարկյալին քիթ ու բերնի վրա պառկացնում են ցինկի վրա, ձեռք ու վոտքն ամրացնում ծնկին, կապում և հետույքը բաց անում: Անգլիական մի հրեշ բանտապահ (սինգապուրցի, 110 կիլո յեր քաշում) բամբուկի ճիպոտով դանդաղ հարվածներ ե հասցնում՝ ամեն մի հարվածից հետո ճիպոտի հետ մաշկի կտորներ պոկելով ու արյան հեղեղ առաջացնելով: 12 հարվածից հետո «հոգնած» ծառային փոխում՝ ուրիշն են կանգնեցնում, վոր խփում ե մնացած 12 հարվածը: Ծեծվողի մեջքը միաձույլ արնաշաղաղ վերք ե դառնում: Կեղծավորությունը կատարելության հասցնելու համար, այս տեսարանին ներկա յե լինում բժիշկը: Յերբեմն ստիպված են լինում պատիժը կրճատել, վորովհետև կալանքի յենթարկվողը գիտակցությունը կորցնում ե: «Ինտելիջենս Սիրվիսի» յերկրին վայել այս պատիժը հաճախ տեղական կոմունիստների

նկատմամբ ե կիրառվում: Այսպես պատժվածը 15 որ անընդհատ վոչ կարողանում ե նստել, վոչ էլ մեջքի վրա պառկել, բրիտանական բամբուկը հիտլերյան կացնի մոտիկ ազգակիցն ե:

Պետք ե ավելացնել նաև, վոր Մալայան կղզիների բոլոր չին կոմունիստները, պատիժը կրելուց հետո, Գոն-Կոնգի վրայով արտաքսվում են Չինաստան: Ահա թե ինչո՛ւ Սինգապուրի անգլիական իշխանությունները նրանց իբր թե թեթև պատիժ են տալիս, վոր յեռամյա բանտարգելությունից չի անցնում, բայց արտաքսելով ու բռնի ռեպատրիացիայով փաստորեն նրանց տալիս են չինական իշխանությունների ձեռքը, վորոնց դաժանությունները բոլորիս քաջ ծանոթ են: Այսպիսով՝ Տան-Կոնգը մի ակտիվ կոմունիստ, վոր Հնդկական կղզիներում բոլորին ծանոթ ե և 1931 թ. հունիսի 22-ին դատապարտվել եր 6 ամսյա բանտարկության, արձակվեց հոկտեմբերի 1-ին (իր բանտարկության ժամկետից առաջ), և նույն տարվա նոյեմբերի վերջին չինական իշխանությունների կողմից Շանհայում նորից ձերբակալվեց: Անգլիական իշխանությունները կոմունիստներին դիտմամբ ուղարկում են չինական ռազմական բանդիտների կացնի տակ կամ գնդակահարելու:

Ի միջի այլոց նույնն ե արվում նաև չինացի գործադուլ բանվորների հետ, վորոնց աշխատանքով ե ծաղկման տարիներին ստեղծվել մալայացիների կաուչուկի և անագի հարստությունը: Հենց վոր գործը կանգ ե առնում, նրանց վռնդում են գերբնակեցրած ու քաղցած Չինաստան, վորտեղ նրանք ավելացնում են քաղցից մեռնողների ամբոխը:

5 մարտի, 1934 թ.

ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԲԱՆՏԵՐՈՒՄ

Սինգապուր։ Մալայան Արշիպելագի անգլիական մամուլը հայտնում է կոմունիստների մեջ քաղաքական վոստիկանության (Ինտելիջանս Սեվրիս) կատարած ձեռնարկությունների մասին։ Բանտարկված են 17 չինացի հեղափոխական, վորոնցից մեկը կանտոնցի մի աղջիկ է, մեկը հնդկաչինցի հեղափոխական է, և—ի՛նչ սենսացիա—մի յեվրոպացի՝ նույնիսկ ֆրանսիացի։ Առաջին կոմունիստն է այդ, վոր ձերբակալված է նորին մեծության այս գաղութում, վոր բանտարկությունների, բանտերի ու դատավճիռների համար է այս հռչակն ստացել։

Այսպիսով, մշտնջենավոր բեվեռային ամառվա մի շոգ առավոտ յես ծանոթացա Սինգապուրի տաժանավայրի բանտին, վորի սպիտակ պատերի ներսը 1500 բանտարկյալ է տառապում։ Դավադրություններ, ինտրիգներ, խռովություններ։ Իսկի էլ չէ։ Բավական է միայն կասկածել անգլիական օրենքներով չճանաչված այս կամ այն կուսակցությանը պատկանելու մեջ (Մալայան կոմկուսակցություն), վոր ֆրանսիացի կոմունիստին տարի ու կես բանտ դցեն, վորը, նա շնորհիվ Ֆրանսիայում ունեցած իր գործունեյության, ծանոթ չլինի միջազգային վոստիկանության գաղտնային արարքներին։ Հեղափոխական քաղաքական կուսակցությունները, բանվորական արհմիությունները, գյուղացիական կազմակերպությունները, մարքսիստական տենդենց ունեցող սովորական գիշերային դասընթացները—այս բոլորն արգելված են, այս բոլորը բանտ դցելու, յերկրից արտաքսելու պատրվակներ են։ Վորովհետև կաուչուկի տնկարանների ու անագահանքերի փայատերերի, ֆինանսիստի ու գաղութային չինովնիկի համար ավելի սարսափելի մղձավանջ չկա, քան կոմունիզմը։

Յեվ ահա ինձ խակի գույնի տարազ հագցրին՝ բրիտանական գաղութի բանտարկյալի տարազ։

— Սպիտակ կոմունիստ ասածդ այս յերկրում հազվագյուտ բան է,—ասաց ինձ բանտ մտածս հենց առաջին օրերը միամիտ ու յեռանդոտ մի վերակացու։—Այդ անիծված տեղացիները բունտ անելիս դեռ հասկանալի յե։ Բայց սպիտակը՝ յեվրոպացին, արտոնյալ Ֆրանսիայի անդամը—այդ խելքից հեռու բան է։

— Դուք շատ վտանգավոր մարդ եք, մենք ձեզ հատուկ հսկողության տակ կպահենք,—վրա բերեց խուզարկուների ու բանտի վերակացուների խումբը։ Ահա թե ի՛նչպես դիմավորեցին ինձ բանտում, ահա թե յես ի՛նչպես հենց առաջին օրերից ծանոթացա Սինգապուրի յուրատեսակ քաղաքական ռեժիմին։ Յերկու ռեժիմ գոյություն ուներ—մեկը քրեյականների համար, մյուսը՝ քաղբանտարկյալների, վոր վոչ այլ ինչ եր, յեթե վոչ քրեյականների ռեժիմ, բայց ավելի լավ ձևի։ Արհեստանոցներում (տպարան, կազմատուն, կոշկակարանոց և նորոգման արհեստանոցներում), վորտեղ յես աշխատում եյի, 120 տեղացի բանտարկյալ կար (մալայացիներ, չինացիներ, հնդիկներ), վոր զանազան ժամկետներով՝ 1-ից մինչև 20 տարի՝ տաժանակիր աշխատանքի եյին դատապարտված։ Դրանք գողեր, ավազակներ, բանդիտներ ու մարդասպաններ եյին։ Նրանց թույլատրվում եր իրար հետ խոսել, ազատ տեղաշարժեր կատարել, զուգարան գնալ, լվացվել ու մի արհեստանոցից մյուսը փոխվել։ Իսկ յես, քաղբանտարկյալս իմ տեղը պետք է մնայի, իրավունք չունեյի մարդու հետ խոսել, պահակի հսկողությամբ միայն կարող եյի տեղից տեղ փոխվել, զուգարան գնալիս բանտի վերակացուն պետք է հետս լիներ։ Ինձ օրական յերեք-չորս անգամ խուզարկում եյին, կամերում ամեն որ ամենամանրակրկիտ խուզարկություն եյին կատարում, վորի ժամանակ տակնուվրա եյին անում կամերի բոլոր անկյունները, յերկաթե մահճակալը, ներքնակն ու վերմակը։ Վոչ թուղթ, վոչ գրիչ, վոչ

մասին: Բոլորը վախենում եյին, թե յես արտաքին աշխարհի, կամ բանտարկված չինացի կոմունիստների հետ գրագրություն անեմ, կամ թե տեղացի մյուս բանտարկյալների կամ յեվրոպացու հետ խոսեմ: Նրանք պրոպագանդից վո՛նց եյին վախենում: Մի չինացի 5 որով կարցեր գցվեց այն պատճառով, վոր ինձ մի յերկու խոսք ասաց:

Բանտարկյալներից վոչ մեկը չեր կարողանում ինձ մոտ գալ: Յերկու մետր հեռու պետք ե լիներ: Ինձ ամենամիակերպ ամենասարսափելի աշխատանքն եյին տվել—թղթի թերթեր համրել ու հարյուր-հարյուր դարսել, ծրարներ պատրաստել, գրքի թերթեր կպցնել, և այս աշխատանքը ժամեր, որեր ու ամիսներ եր քաշում, այնինչ մի անգլիացի, վոր Սինգապուրի «լավ հասարակության» մեջ հայտնի յեր և անհաջող կեղծիքի համար բանտ եր ընկել, հաշվետար եր նշանակվել, ընթերցանության, գրելու համար բոլոր հարմարությունները ուներ և սպասարկող անձնակազմի կողմից մեծ ուշադրություն եր վայելում:

Ահավասիկ «Սինգապուրի տիպիկ քաղաքական ռեժիմը»:

Յես ել եյի ընդհանուրի ուշադրությունը վայելում: Որինակ՝ իմ կամերը, վոր իր հերթին միակն եր այդ բանտում, չարունակ յերկու ահագին կողպեքով եր կողպվում: Այդ կամերը գտնվում եր մահվան դատապարտված քրեյական հանցագործների բաժանմունքում, 10 մետրի վրա այն տեղից, վորտեղ կախաղանն եր բարձրանում: Այդ 18 ամսվա մեջ յես 9 անգամ լսել եմ, թե ինչպես յերկուշաբթի որերն այդ դահլիճից լսվում եր ոդի մեջ բարձրացող՝ կախվածի մարմնի խուլ աղմուկը: Յես լսում եյի մահվան դատապարտվածների գանգատները, անեծքները և մահապատժից առաջ վերջին ժամին յերգվող մռայլ ու հուսահատ յերգերը: Հաջորդ առավոտյան յես տեսնում եյի նրանց ձգված մարմիններն ու անգութ պարանի ծայրին գտնվող մեշոկի

մեջ պահված գլուխները: Իմպերիալիստական ջենտլեմենները շատ ուշադիր են:

Բանտի դիրեկտորը կարգադրություն արեց՝ նրանց հետ վարվել ինչպես մահվան դատապարտվածների հետ: Ուրեմն՝ գիշեր-ցերեկ հսկողության տակ գտնվել, հավիտյան շրջապատված լինել պահակներով, չարունակ իր վրա հարատև հայացքներ զգալ: Իբրև գիրք՝ ռոման ու աստվածաշունչ, իբրև այցելու՝ չափազանց հետաքրքիր խուզարկումներ, Ֆրանսիական հյուպատոսը, վոր փորձում եր դատական քննչի դեր կատարել, վորպեսզի հետո Պոսկվին՝ Հնդկաչինի նահանգապետին սխալ հաշվետվություն ուղարկեր և այդպիսով անօրինական աքսոր նախապատրաստեր և, վերջապես, անգլիացի անխուսափելի պաստոր՝ թարմ, ծիծաղկոտ ու կեղծավոր, վոր, իմիջիայլոց, դադարեց ինձ այցելել այն որից, յերբ իմացավ, վոր յես աթեիստ եմ: Յերեք ամիսը մի անգամ ինձ մի թերթ թուղթ, գրիչ ու կես ժամ ժամանակ եյին տալիս, վոր ընտանիքիս նամակ գրեմ, և յերեք ամիսը մի անգամ ինձ տալիս եյին «ազգականներից» յեկած նամակը, վոր կես տարի առաջ եր գրված լինում:

4 մարտի 1934 թ.

Լո Դիֆանեց

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՄԻՆԴԱՆՅԱՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

ԳՈՄԻՆԴԱՆՅԱՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՒՄ Է ԿԱՏԱՂԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐԸ

(Մոպր-ի Կենտկոմի ագիտբաժնի տեղեկատու)

Չինաստանի բանտերում տեղի ունեցող հաճախակի քաղցը վրդովեցրել է ողջ աշխարհի հասարակայնությանը: Մենք այժմ մի շարք տեղեկություններ ենք ստացել բանտերում տիրող դրության մասին: Պեյպինի բանտում այժմս 48 քաղբանտարկյալ կա, բացի Ռանկու-Յե-Գանի և Տան-Լաո-Ջեուից, վոր արդեն մահվան են դատապարտված և շուտով կհանձնվեն դահիճների ձեռքը: Գոյություն ունեցող հատուկ դրության հիման վրա բանտարկյալները շղթայակապված են: Սնունդը վատ է և անբավարար: Բանտարկյալներին վայրագ տանջանքների յեն յենթարկում: Յեվ բանտարկյալներն այդ տանջանքներից շատ անգամ մահանում են:

1. ՆՈՒՅՆԻՍԿ ՅԵՐԵԽԱՆԵՐ ԵԼ ԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ

Օրինակ՝ Տյանցզինի կանանց բանտում: Տյանցզինի բուրժուական «Ի Սեպաո» թերթը հայտարարում է.

«Տյանցզինի կանանց բաժնի 3-րդ բաժանմունքում շատ յերեխաներ կան, վորոնց թվում նաև նորածիններ: Չափից դուրս ծանր է ու ցավալի տեսնել այդ պայմաններում ապրող յերեխաներին», (Խոպի արդարադատության գիտական հանձնաժողովի հաշվետվությունից):

«Տա-Կոնգ-Բաո»-ի տեղեկությունները վկայում են, վոր Տյանցզինի 3-րդ բանտում 18000 բանտարկյալ կա, վոր յերեք անգամ գերազանցում է նորման:

2. ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԸ ՍՏԻՊՎԱԾ ԵՆ ԲՌՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼ

Համաձայն Չինաստանի արդարադատության մինիստրության նորերս հրապարակած հրամանի, քաղբանտարկյալները պարտավոր են բռնի աշխատանք կատարել: Նրանց գլխավորապես օգտագործում են յերկաթգծի և ճանապարհների շինարարության գործում:

3. ՊՈԼԻՑԻԱՅԻ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԸ

Քաղբանտարկյալների հանդեպ պատժի խոշորագույն մեթոդներ են գործադրվում:

Այժմս Շանխայի հասարակության ուշադրությունը գրավողը հետևյալ փաստերն են՝ վոմն ծառայող՝ Տզի-Յան-Ջեյը, սխալ տեղեկությունների հիման վրա ձերբակալվել է, իբրև գողության մեջ մեղադրվող: Դատարանն ստիպված է յեղել նրան արդարացնել: Սակայն համաձայն դատարանում նրա տված ցուցմունքի, ելեկտրականության միջոցով նրան 17 անգամ տանջանքի յեն յենթարկել: Գործադրած տանջանքի ձևերից մեկն էլ այն է, վոր նրան ստիպել են այնքան աղաջուր խմել, վոր նա նույնիսկ գիտակցությունը կորցրել է: Տանջանքը նույնությամբ շարունակվել է, յերբ նա գիտակցության է յեկել: Ի վերջո, նա դարձել է հաշմանդամ: Պետք է նշել, վոր այս ձևի տանջանքները քաղբանտարկյալների հանդեպ ամեն որ են գործադրվում: Շանհայի ինտերնացիոնալ սետըլեմենտի պոլիցիայի վարչությունը յուրաքանչյուր ամիս տասնյակ բանվորներ ու գյուղացիներ է հանձնում չինական իշխանության ձեռքը:

4. ԱՐՅՈՒՆՈՏ ԲԱՂՆԻՍԸ ՅԵՎ ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանտոնից Ռեյտերի գործակալությունը տեղեկացնում է՝ «4-րդ Կվանտանի դիվիզիայի շտաբում այսօր 24 կոմունիստ գնդակահարվեց, վորոնց թվում և 2 կին: Մյուս 20 հոգին հանձնված են զինվորական ատյանին»:

«Ի Սեպաո»-ի նոր հաղորդագրության համաձայն

(Տյանցզինում), ս.թ. ապրիլին զորքեր են ուղարկվել Յաո-Ջին պետական հարկերը վճարելուց հրաժարվող գյուղացիների դեմ։ 10.000 գյուղացի միացել են «Կարմիր Պիկ» դրոշի տակ՝ պաշտպանվելու համար։ Ավելի քան 70 գյուղացի սպանվել ու վիրավորվել են, այրվել են 8 խոշոր գյուղ։

Մանջուրիայից «Զայնա-Թայմս» լրագիրը հաղորդում է «Ֆինգրիեն գավառում, Ուլխապսում և Սանգխապսում, ուր խիստ կռիվներ են տեղի ունեցել ճապոնական բանակի ու կամավորների միջև, ճապոնացիները հարյուրավոր գյուղացիներ են գնդակահարել, վորոնք պատերազմի հետ վոչ մի առնչություն չեն ունեցել»։

5. 20.000 ԳՆԴԱԿԱՀԱՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ

«Ի Սեպաո»-ն պնդում է, վոր Սանսիենում, ուր գյուղացիք դիմադրություն են ցույց տվել բրինձի լավագույն հողամասերն իրենց բռնի ուժով գրավող ճապոնացիներին։ Այս պատճառով ճապոնական իմպերիալիստները գյուղացիների դեմ ռմբակիրներ են ուղարկել, և 20.000-ից ավելի գյուղացի, վորոնց մեջ նաև յերեխաներ ու կանայք, հողս են ցնդել։

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

ՀԱՑԱԴՈՒԼԻ ՆՈՐ ԱԼԻՔ

Մենք արդեն հայտնել եյինք հակահեղափոխական Գոմինդանի բանտերում տեղի ունեցող հացադուլի մասին։ Այժմ նոր տեղեկություններ ենք ստացել Չինաստանի բանտերում տեղի ունեցող կատարյալ հացադուլների մասին։ Պեյպինի, Տյանցզինի, Տայյուանի և այլ քաղաքների քաղբանտարկյալները բանտային խիստ ռեժիմի դեմ անողոք պայքար են մղում իրենց տրամադրության տակ ունեցած միակ զենքով՝ հացադուլով։

«Գա-Կուն-Բաո» լրագրի հաղորդագրության համաձայն, Պեյպինի բանտի քաղբանտարկյալները հացադուլ հայտարարելով՝ հետևյալ բնորոշ պահանջներն են առաջադրել՝

1. Արձակել ձեռքի շղթաները։
2. Յերաշխիք տալ, վոր հետագայում ձեռքի շղթաներ չեն գործադրվելու։
3. Բարելավել սնունդը և առհասարակ բոլոր պայմանները։
4. Արգելել բանտի հսկիչներին բանտարկյալներին ծեծելը։

Ի պատասխան այս պահանջների, բանտային վարչությունը ցինիկ պարզությամբ հայտարարել է, վոր ձեռքի շղթաները չեն արձակվելու, քանի վոր դատարանի վորոշմամբ մահվան դատապարտվածների համար ձեռքի շղթաները պարտադիր են։ Ինչ վերաբերվում է սննդի բարելավմանը, ապա այն միանգամայն բավարար է. մյուս պահանջներն անհարին է կատարել։ Նույն լրագիրը հայտարարում է, վոր Պեյպինի քաղբանտարկյալների այս հացադուլը 2-րդն է։ Առաջին հացադուլը վիժեց, վորովհետև բոլոր բանտարկյալները չեյին մասնակցում։ Այս յերկու հացադուլի ղեկավարները՝ Վանվի-Կան, Տան-Լաո-Շեոն մահվան են դատապարտված։ Նույն թերթի հետագա տեղեկությունների համաձայն, բանտային վարչությունը բոլոր միջոցները գործադրում է, վոր քաղբանտարկյալների մարտնչող տրամադրությունները ճնշի։ Այսպես, օրինակ՝ նա, ի միջի այլոց բանտարկյալների պահանջը, ձևականորեն կատարում է, վոր կատարած զիջողությունները հետագայում փոխի։

Բնորոշ է և այն, վոր վարչությունը բոլոր միջոցները գործադրում է՝ թաղցնելու քաղբանտարկյալների ցուցաբերած պայքարի բոլոր փաստերը։

Չինաստանի բուրժուական մամուլն այս տեսակետից ամեն կերպ օժանդակում է բանտային վարչությանը... Հենց այս պատճառով էլ մոտավոր գաղափար կարելի յե ունենալ Չինաստանի բանտերում տեղի ունե-

ցող հացադուլի նոր ալիքների չափի մասին։ Այսուամենայնիվ, քաղբանտարկյալները Գոմինդանի պարիսպներից դուրս շարունակում են իրենց համառ պայքարը բանտային ռեժիմի դեմ։ Նրանք վստահ են աշխատավորության ինտերնացիոնալ համերաշխության վրա, որի շնորհիվ մի շարք հաղթանակներ են հաջողվել։

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԺԱՄԸ ՀԵՌՈՒ ՉԷ

Լեոբենի բանտից ազատված ավստրիական մի բանվոր նամակ է ուղարկել Ժնևում հրատարակվող «Տրավայ» թերթի խմբագրության։ Նամակում նա նկարագրում է Ավստրիայի մարտերի ղեկավար Կոլոման Վալիշի վերջին ժամերը։

— Լեոբենի նահանգական բանտը,—գրում է բանվորը,—գտնվում է նախկին վանքի շենքում։ Հաշվել էին, որ այդ բանտը 100 կալանավոր կարող է տանել։ Կիրակի, փետրվարի 18-ին, մեր՝ կալանավորներիս թիվը 400-ից ավելի յեր։

Ցերեկը, ժամի չորսին, քրեական կալանավորներից մեկը մեր խցի պատը ծեծեց և շշնջաց, թե Վալիշին ու իր կնոջը միասին բանտ են բերել։ Ժամը 2-ից 20 րոպե անց, զինվորական դատարանի նիստն սկսվեց։ Բնորոշ է հետևյալ փաստը. յերեկոյան ժամի 7-ին Կանցլեր Դոլֆուսն անձամբ հեռախոսեց ռազմական դատարանի նախագահ Մարինիչին և բացատրություն պահանջեց, թե արդարադատությունն ինչո՞ւ այդքան դանդաղ է գործում։ Մինչ այդ՝ բանտում մեծ հուզում առաջացավ։ Միմիայն դատապարտյալն էր, որ իրեն հանդիստ էր պահում։ Ձևական ժամկետը լրանալուց հետո նրան մոտեցան դատարանի նախագահն ու անդամները և հայտարարեցին, թե դատավճիռը պետք է ի կատար ածվի։ Նրա կինն սկսեց հեկեկալ։ Դրան վերջ տալու համար, բանտի բժիշկը խլորոֆորմով թրջված մի թաշկինակ տվեց Վալիշին, և Վալիշը հարկադրված յեղավ անձամբ քնեցնել իր ընկերուհուն։ Այնուհետև նա խնդրեց, որ իրեն հնարավորություն տան հրաժեշտ տալու գոնե մի քանի բանվորների։ Նա սեղմեց նրանց ձեռքը և ասաց՝

— Մի՛շտ մնացեք ազնիվ պրոլետարներ։ Մեր հաղթանակի ժամը հեռու չէ։

Ժամը 11-ից անց 30 րոպե, դահիճ Շվեյցերն ու իր յերկու ոգնականները Վալիշի խուցը մտան: Այդ րոպեյին Վալիշը քաղաքավարությամբ հրաժարվում եր կատարել քահանայի առաջարկը՝ կարդալ վերջին աղոթքը: Շվեյցերը բղավեց Վալիշի վրա.

— Դե՛, ղո՛ւրս յեկեք այստեղից:

— Դուք անշուշտ կարող եք ինձ սպանել,—պատասխանեց նրան Վալիշն անվրդով:

Դահճի յերկու ոգնականները թևանցուկ տարան նրան: Նրանց հետևից գնում եյին դատարանի նախագահն ու անդամները և դահիճը՝ սև պլաշչով, ցիլինդրով ու սպիտակ ձեռնոցներով: Նրանց հետևում եր հետաքրքրվողների ամբոխը՝ սպաներ, ժանդարմաներ և քաղաքացիական շորերով ինչ-վոր մարդիկ: Խուցերի վերածված 8 սենյակի պատուհանները դեպի բակն եյին նայում: Դրանք բանտի պատուհաններ չեն, այլ սովորական լուսամուտներ, միայն վանդակապատ: Մենք կարողացանք տեսնել մահապատժի բոլոր նախապատրաստությունները:

Քրեյական բանտարկյալները կախաղանի համար փոսեր փորեցին և մի փոքրիկ սանդուխք դրին: Իշխանության որգաններն ստիպված յեղան քրեյական հանցագործներին աշխատեցնել, վորովհետև ամբողջ քաղաքում չգտնվեց մի հյուսն, վոր համաձայներ այդ գործը կատարել: Վալիշն առաջ եր գնում գլուխը բարձր պահած: Մենք վարժվել եյինք նրան այդպես տեսնել բանվորական ժողովներում, յերբ նա դիմում եր դեպի ամբոխն: Նրան կանգնեցրին սյան տակ՝ մեջքը դեպի սյունը դարձած: Դահիճը սանդուխքով վեր բարձրացավ և հանգույցը գցեց Վալիշի վիզը: Դահճի յերկու ոգնականները բռնեցին Վալիշի ուսերը և մարմինը հուպ տվին դեպի ցած: Վալիշը ժամանակ չգտավ արտասանելու «ազատություն» բառի վերջին վանկը: Մի քանի վայրկյանից հետո դահիճը ցած իջավ, գլխարկը վերցրեց և ասաց.

—Դատավճիռն ի կատար է ածված:

Բակում լռություն տիրեց: Հանկարծ խցերից մեկի պատուհանից մի կալանավոր բացականչեց՝

— Մարդասպաններ:

Յերկու ժամ հետո մեր հերոս առաջնորդի դիակը կախաղանից իջեցրին—դրին դագաղն ու գերեզմանոց տարան:

ՅԵՐԵԽԱՆԵՐԸ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԻ ՏԵՌՈՐԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՏԱԿ

Ֆաշիստական դիկտատուրայի տեռորն իր բոլոր դաժանություններով ուղղված է նաև յերեխաների ու պատանեկության դեմ: Տեռորը բոլոր տեսակի ձևերն ընդունում է՝ սկսած տվժի ու յերեխաների խղճի վրա բռնանալուց, ընդհուպ մինչև ամենադաժան ծեծերն ու սպանությունները: Փետրվարյան կռիվների ժամանակ Ավստրիայում յերեխաների դեմ յեղած բացարձակ տեռորն իր գագաթնակետին հասավ: Սիստեմատիկ կերպով գործադրվող տնտեսական տեռորն ու խղճի բռնադատումն առանձնապես ուժեղացել են փետրվարյան կռիվներից հետո, և քրիստոնյա-ֆաշիստականորեն «յերիտասարդության դաստիարակելը» ձևերից մեկն է հանդիսանում:

Շատ յերեխաներ են նախամտածված կերպով սպանվել կառավարական զորքերի ու Հայմերի բանդաների ձեռքով: Վիեննայի տակ յեղած կռիվներում սպանվել է 12 տարեկան Կորնելիա Ռինկլերը, իսկ նրա ընկերուհի Շարլոտան վիրավորվել է: Կարմիր բազեների Ֆլորիդսդորֆի կազմակերպության անդամներից մի տղայի, վոր իր պորտֆելի մեջ փամփուշտներ ու քարեր ուներ, վոստիկանները բռնել և այնքան են ծեծել, վոր գիտակցությունը կորցրել է: Սակայն միանգամայն հասկանալի պատճառներով՝ դժվար է ճշգրիտ տեղեկություններ ստանալ յերեխաների դեմ յեղած անհա-

ատվյան տեռորի դեպքերի մասին: Ավելի շուտ՝ յերեխաների դեմ յեղած տեռորի մասսայական դեպքեր են հայտնի:

Վիեննայում՝ Կայներմյուլեյում՝ Հետեխոֆի համար տեղի ունեցած կռիվներում կանայք ու յերեխաները յերեք օր անընդհատ Դոլֆուսի թնդանոթների, ականանետների, հրանետների ու գնդացիրների կրակի տակ եյին: Կայներմյուլենի քահանան կառավարական փաշիստական ջոկատների հրամանատարից պահանջեց ժամանակավորապես կրակը դադարեցնել, այն պայմանով, վոր կանանց ու յերեխաներին ժամանակավորապես մի ապահով տեղ փոխադրեն: Հրամանատարը մերժեց, և յերեխաները, մինչև կռիվները վերջանալը, ստիպված եյին մնալ գնդակոծությունից քանդված Հետեխոֆում, կամ փախչել կառավարական զորքերի արգելիչ կրակի տակ:

Շտեյներում (վերին Ավստրիա)՝ Ենսլեյանի փողոցում՝ կանայք ու յերեխաներն ստիպված եյին յերկու ցերեկ ու մի գիշեր մնալ գնդակոծությունից քարուքանդ յեղած բանվորական տների նկուղներում՝ 15 սանտիմետրանոց հաու-բիցների ու ականանետների, հրանետների, գնդացիրների կրակի տակ: Ենսլեյանի փողոցը կառավարական զորքերը պաշարել եյին, և յերեխաները վոչ մի տեղ չեյին կարողանում թաքնվել:

Շտեյերմարկում դաշնակից բանակի մի սպա յերեխաներին ու պատանիներին ստիպում եր կառավարական հարձակվող զորքերի առջևից գնալ, վորպեսզի այս ծածկույթի տակ գրոհեր շուցբունդականների դիրքերը:

Համարձակ մի կնոջ հաջողվել եր յերեխաներին ժամանակին ապահով տեղ տանել: Կանանց ու յերեխաների դեմ կառավարական քրիստոնեյական զորքերի ունեցած կռիվներից հսկայական թվով այսպիսի փաստեր կարելի յե բերել:

Կռիվներից հետո տնտեսական տեռորը ծավալվեց:

Վիեննայի կոմունալ ու պետական հիմնարկներից հազարավոր սոցիալ-դեմոկրատ բանվորներ ու ծառայողներ արտաքսվեցին, իսկ նրանց կին ու յերեխան սովի մատնվեցին: Հազարավոր շուցբունդական բանտերն ու համակենտրոնացման ճամբարներ ընկան, իսկ նրանց կին ու յերեխան անճար կարիքի ձեռքը հանձնվեցին:

Կարմիր Ոգնությունն իսկույն ձեռնամուխ յեղավ միջազգային համերաշխություն կազմակերպելու գործին: Առաջին ոգնությունը կազմակերպվեց, առաջին արցունքները ցամաքեցին, բայց փետրվարյան կռիվների հազարավոր զոհերին յերկարատև ոգնություն եր հարկավոր: Ֆրանսիայի, Հոլանդիայի, Շվեյցարիայի ու Չեխոսլովակիայի աշխատավորությունը իր պատրաստակամությունը հայտնեց՝ ընդունելու ընկած ու բանտարկված շուցբունդականների յերեխաներին: Դեպի մերձական ունեցած քրիստոնեյական սիրուց դրդված՝ փաշիստական կառավարությունն արգելեց զոհերի յերեխաների գնալը: Դոլֆուսի մոտ նրանք պետք է քաղցեյին ու «հայրենական վոգով» դաստիարակվեյին: Ստիպված յեղանք յերեխաներին անլեգալ կերպով անցկացնել Չեխոսլովակիայի սահմանը, և այժմ նրանցից 120 հոգի հանգստանում են Խորհրդային Միության մեջ՝ Ղրիմում:

Շուլինի կառավարության որով խղճի վրա բռնանալն Ավստրիայում շարունակում է անասելի ուժով զարգանալ: Յերեխաներին ու պատանիներին ստիպում են կրոնական արարողություններ կատարել: Դպրոցն ամբողջովին հոգևորականության ձեռքն է հանձնված: Դպրոցներում այժմ «պաշտպանության գործի ուսուցում» էլ է մտցված, վորովհետև փաշիզմը, պատերազմն ու կղերականությունն անբաժան դաշնակիցներ են:

Համերաշխության գործի մեջ ՄՈՊՐ-ը բոլոր հակափաշիստներին միացնում է: Միջազգային մանկական շաբաթն իր մոպրականներին նորից է պայքարի կոչ անում՝ հանուն ընկած, սպանված ու բանտարկված հակափաշիստների յերեխաների ոգնության:

ՎՅԱՏԿԱ ՔԱՂԱՔԻ № 1 ԴՊՐՈՑԻՆ

Թանկագի՛ն ընկեր մոպրականներ.

Ձեր նամակը մենք ստացանք և ծանոթացրինք մեր կազմակերպություններին: Այդ նամակն ամենուրեք վոգևորություն առաջ բերեց, մի հանգամանք, վոր ապացուցում է ամբողջ աշխարհի աշխատավորության սերտ կապը, մա՛նավանդ կապիտալիստական լծից ազատագրված՝ Խորհրդային Միության աշխատավորների սերտ կապը՝ կապիտալիստական յերկրներում շահագործվող իրենց յեղբայրների հետ:

Ավստրիայում ֆաշիստական տերրորն անդուլ մոլեգնում է: Փետրվարյան ապստամբության մարտիկներն ու հակաֆաշիստները մինչև որս ընդհանուր առմամբ 1400 տարի տաժանակիր բանտի յեն դատապարտված: Ոգոստոսի 1-ից առաջ ամբողջ Ավստրիայում հազարավոր բանվորներ են բանտարկվել:

Հուլիսի 15-ին նորից յերեք բանվոր գնդակահարվեցին, վորովհետև ֆաշիստական դիկտատուրայի դեմ ցույց եյին արել: Հուլիսի 24-ին մահապատժի յենթարկվեց յերիտասարդ մի բանվոր՝ Յոսիֆ Հերալը: Ավստրիական բուրժուազիայի, «Փրկչի»՝ միութենական կանցլեր Դոլֆուսի վերջին «հերոսական» սխրագործությունն եր այդ, վորը 24 ժամից հետո ինքն էլ կապիտալիստների-նացիոնալ-սոցիալիստների լկտիացած խմբակի գնդակով գնաց, այն կապիտալիստ-նացիոնալ-սոցիալիստների, վոր Դոլֆուսի քաղաքականությունից դժգոհ եյին: Այս սպանությունն էլ է ոգտագործվում՝ բանվորներին կատաղի ինքնադատաստան՝ անելու համար: Դաշտային, զինվորական ու արտակարգ դատարաններ են ստեղծվել. նորից մահվան պատիժ է մտցվել, բուրժուազիայի զինյալ բան-

տերն ամեն որ նորանոր ու մահաբեր հրանոթներ են ստանում: Բանտերում ու համակենտրոնացման ճամբարներում վայրագ ռեժիմ է թագավորում: Բանտարկված հակաֆաշիստները ծեծի ու տանջանքի յեն յենթարկվում: Բելերսդորֆի համակենտրոնացման ճամբարում, վատորակ կերակրի պատճառով նորերս 200 կալմեջ արած բանվոր են հիվանդացել:

Բայց այս բոլոր հալածանքները չեն կարողանում ընկճել բանվորների մարտական վոգին: Ավստրիայի Կարմիր Ոգնությունը շարունակ առաջ է գնում:

Չնայած ամենախիստ անլեգալության՝ մեր կենտրոնական տպագիր որգան՝ «Տրիբունալ»-ը 25.000 որինակով է և լույս տեսնում, վոր իսկույն խլխլում են: Բոլոր ակտուալ անցքերի կապակցությամբ մենք մեծ թվով թռուցիկներ ենք բաց թողնում: Ոգոստոսի մեկի համար 30,000 որինակից մենք մի կոչ լույս ընծայեցինք:

Վիեննայի մեր կազմակերպությունն իր «Վ. Տրիբունալ» տպագիր որգանը 10,000 որինակից է լույս ընծայում: Բացի այդ, շատ տեղերում ու շրջաններում իրենց սեփական թերթերն են լույս տեսնում:

Շնորհիվ միջազգային պրոլետարիատի, մանավանդ Խորհրդային Միության պրոլետարիատի հսկայական համերաշխության, և Ավստրիայի աշխատավորների կողմից ոգնություն ցույց տալու պատրաստակամության, Ավստրիայի Կարմիր Ոգնությունը մինչև որս կարողացել է բանտարկյալներին ու նրանց ընտանիքներին ոգնելու, վտարանդիների յերեխաներին արտասահման ուղարկելու համար նրանց ոժանդակելու և իրավաբանական ոգնության նպատակով ավելի քան 400,000 շիլլինգ տալ: Կարմիր Ոգնությունը մեղնում շատ մասսայական է: Նա մասսաներին պայքարի յե գորակոչում ընդդեմ ֆաշիստական տերրորի, հանուն փետրվարյան կռիվների բոլոր մասնակիցներին ու հակաֆաշիստներին բանտերից ու կոնցենտրացիոն լագերներից անմիջապես ազատելու, հանուն բանվոր մարտիկների մաս-

տարական պաշտպանության: Կարմիր Օգնության ղեկավարությամբ, հանուն այս պահանջների, մի շարք հարվածային ցույցեր են կազմակերպվել:

Ներկայումս մենք գլխավորապես աշխատում ենք համերաշխության գործում միասնություն ստեղծել և Կարմիր Օգնությունը դարձնել օգնության, համերաշխության և Ավստրիայի բոլոր աշխատավորության միասնական մի կազմակերպություն:

Մեր լոզունգն է՝ «ամբո՛ղջ աշխարհի բոլոր աշխատավորության միասնական համերաշխություն»: Այս ասպարեզում մենք արդեն առաջին արդյունքներն ունենք: Սոց-դեմոկրատները, անկուսակցականները, կոմունիստները, շուցբունդականները, ազատ արհմիությունների անդամներն ու սպորտսմեն բանվորները մտնում են Կարմիր Օգնության մեջ և այնտեղ ակտիվ աշխատում:

Վերին Ավստրիայում սոցիալիստ հեղափոխականների Ազգային Կոմիտեն մտել է Կարմիր Օգնության մեջ և մեզ հետ միասին մի կոչ է հրատարակել: Մեր պայքարը դժվարին է ու զոհեր շատ է պահանջում:

Համենայն դեպս մենք չենք կասկածում, որ պրոլետար դասակարգը ֆաշիստական տեռորի դեմ հաղթանակ կտանի, և այս բանին հաստատ հավատալով՝ մենք պայքարում ու աշխատում ենք՝ հանձին Խորհրդային Միության սոցիալիզմ կառուցող բանվորների՝ մեր աչքի առաջ ունենալով օրինակ և խթան:

Կեցցե՛ աշխատավորության միջազգային համերաշխությունը:

Կեցցե՛ Խորհրդային Միությունը՝ բոլոր ճնշվածների հայրենիքը:

Կեցցե՛ ՄՕՊՐ-ը:

Ավստրիայի Կարմիր Օգնություն

Օգոստոս, 1934 թ.

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ ՌԱԶՄԱ-ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԱՐՅՈՒՆՈՏ ՏԵՌՈՐԻ 5 ՏԱՐԻՆ

(Նամակ Հարավ-Սլավիայից)

Հինգ տարի յե, ինչ բանվորների, գյուղացիների ու ճնշված ազգությունների դեմ ուղղված մեծ-Սերբիայի բուրժուազիայի ու իր ռազմաֆաշիստական կառավարության տեռորը կատաղի չափերի յե հասնում: Մեծ Սերբիայի բուրժուազիան սպիտակ տեռորը պատերազմի վերջերից ու Հարավսլավիա ստեղծվելու օրից (համաձայն Վերսալի դաշնագրի) և արդեն սկսել կատարել: Բայց յերբեք տեռորն այնքան վայրագ չի յեղել և այդպիսի չափերի չի հասել, ինչպես այժմ:

Հարավսլավիայի կոմկուսակցության լավագույն առաջնորդներն ու մարտիկները, ինչպես և բազմաթիվ հեղափոխական բանվորներ, գյուղացիներ ու նացիոնալ-հեղափոխականներ սպանվել են վոստիկանական բանտերում կամ ուղղակի փողոցներում: Զոհերի մեծ մասը մահից առաջ ամենահրեշավոր տանջանքների յե յենթարկվել՝ բերաններից ցուցմունքներ դուրս քաշելու համար: Այսպես, ընկ. ընկ. Զորա Դյակովիչը՝ մետաղագործ բանվոր և Հարավսլավիայի կոմկուսակցության առաջնորդ ՎՈՒԿԸ, Հարավսլավիայի կոմկուսակցության ԿԿ անդամ, ԳԵՁԻՄՈՎԻՉԸ՝ Հարավսլավիայի Կարմիր Օգնության քարտուղար, Հարավսլավիայի կոմյերիտմիության վեց քարտուղար (Միչիչը, Օրեշկին, Ծատուկոն, Ազան, Մարգանովիչն ու Դորեցյակը) և ուրիշ շատերը նույն գազիր մեթոդներով են սպանվել:

Հազարավոր հեղափոխական մարտիկներ Հարավ-Սլավիայի բանտերում անլուր տանջանքների յեն յեն-

թարկվում: Հարավսլավիայի վոստիկանական բանտերի վայրագությունները գերազանցել են միջնադարի ինկվիզիցիայի բոլոր սարսափները: Ջոհերը յերկար ու ձիգ որեր սադիստական տանջանքների յեն յենթարկվում: Մենք ուզում ենք այստեղ միայն մի քանի որինակ բերել, վոր տանջանքների այդ բազմաթիվ դեպքերից ենք վերցրել: Ընկ. Մարգանովիչը Զագրեբի վոստիկանական բանտում 20 որ տանջանքի յենթարկվեց: Նրա մարմինը վերքերով ծածկվել եր, մաշկը շատ տեղ գոլ-գոլ կախ եր ընկել, նրա ատամները ջարդել ու թևը կոտրել եյին: Համոզվելով, վոր նրանից բան չի պոկվի՝ ֆաշիստները նրան վերջ են տվել: Ընկ. Պետկո Մեյիչիչը Բելգրադի վոստիկանական բանտում 50 գիշեր տանջանքի յենթարկվեց: Զագրեբի վոստիկանապետ Բեդեկովիչն անձամբ տանջել է քաղբանտարկյալ կանանց շատերին, վորոնց մեջ նաև կիսակենդան բանվորուհի Կոռդիչին, վոր թոքախտավոր հիվանդների սանատորիայից եր բանտ բերվել: Տանջանքների յենթարկված դոհերից վոմանք խելքները թռցրին, նրանցից շատերն ամբողջ կյանքում հաշմանդամ դարձան: Խրվատացի ազգայնականներից մի քանիսը տանջանքների ժամանակ ամորձատվեցին:

Տեղ չլինելու պատճառով մենք հնարավորություն չունենք այս բոլոր վայրագությունները նկարագրել. որինակ՝ մարմնի մասերի (կողերի, վոտքերի, ձեռքերի) կոտրատելը, վոտքերի թաթերն այրելը, աչքեր հանելն ու այլ խոշտանգումները: Բայց ստորև բերած մեր ամենաթերի ու սեղմ վիճակագրությունն ամենայն հստակությամբ պատկերում է Մեծ Սերբիայի բուրժուազիայի սպիտակ տեռորի բոլոր սարսափները:

Այսպես՝ ռազմա-ֆաշիստական դիկտատուրայի 4 տարվա ընթացքում (մինչև 1933 թ. սեպտեմբերի վերջը) Հարավսլավիայում, ըստ մեր ունեցած տեղեկությունների, դիկտատուրական վարձկանների ձեռքով սպանվել են 328 քաղբանտարկյալ, 3270 մարդ տանջանքների հետևանքով ծանր վերքեր են ստացել: Քա-

ղաքական հանցագործությունների համար 30,000 մարդ է բանտարկված, վորոնցից 9,000-ը վոստիկանական բանտերում զանազան տանջանքների յեն յենթարկվել:

Ֆաշիստական դատարանները ֆաշիստական վոստիկանությունից յետ չեն մնում: Ընդհանուր առմամբ այդ ժամանակամիջոցում 33 մահվան վճիռ է յեղել, 7 ցմահ բանտարկության դատավճիռ և բազմաթիվ այլ դատավճիռներ՝ ընդհանուր առմամբ 4940 տարվա տաժանակիր աշխատանքի վճիռ:

Քաղբանտարկյալները Հարավսլավիայի բերնեբերան լցված բանտերում յեղբայրական ոգնություն են սպասում և հույսները դրել են Հարավսլավիայի ու միջազգային բանվոր դասակարգի համերաշխ պայքարի վրա:

ՊԱՅՔԱՐ ՀԱՐԱՎ-ՍԼԱՎԻԱՅՈՒՄ ԱՄՆԻՍՏԻԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Նախկին քաղբանտարկյալի նամակը)

ԴԱՀԻՃՆԵՐԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

(Առաջին նամակը)

Անցյալ տարի Միջ. Միտրովիցում (Հարավսլավիա) տեղի ունեցավ 200 քաղբանտարկյալի սննդադուլ: Այս գործադուլը թե քաղցողների թվով, թե քաղբանտարկյալների տոկունությամբ և թե ռազմաֆաշիստական դիկտատուրայի ձեռք առած ռեպրեսիվ միջոցներով գերազանցում է այն ամենը, ինչ մինչև այսօր այդ ասպարեզում տեղի յե ունեցել:

Հարավսլավիայի բանտերի քաղբանտարկյալների սննդադուլը սովորական յերևույթ է: Սննդադուլը կատակ բան չի, մանավանդ Հարավսլավիայի բանտերում: Այս նամակով յես ուզում եմ պատմել, թե ռազմաֆաշիստական դիկտատուրայի դահիճներն ինչպես են տանջում քաղցող քաղբանտարկյալներին:

Ստորև բերված փաստերը յես իմ անձնական կյան-

քից ու ապրումներից եմ վերցնում, քանի վոր յես, իբրև նախկին քաղբանտարկյալ, բազմիցս ստիպված եմ յեղել քաղցել Հարավսլավիայի բանտերում, վորտեղ 12 տարի անընդհատ յեղել եմ:

Ամեն մի սննդադուլ քաղբանտարկյալների մի դիմադրություն է ռազմա–ֆաշիստական դիկտատուրայի դահիճներին: Այս բանը ֆաշիստները շատ լավ գիտեն, ուստի և ամենայն խստությամբ աշխատում են դիմադրության մազաչափ փորձ անգամ խեղդել: Բանտի վարչությունը յերբեմն այնպես է ցույց տալիս, թե բոլորովին սառն աչքով է նայում սննդադուլին, ասես թե ամեն բան կարգին է, և առանձին վոչինչ չի պատահել: Այս բանն այն ժամանակ է լինում, յերբ քաղցողները քիչ են լինում, և յերբ հասարակական կարծիքը սննդադուլի մասին վոչինչ չի իմանում:

Իմ միտն է ընկնում 1927 թ. Միջ. Միտրովիցում տեղի ունեցած սննդադուլը: Մենք 10 քաղբանտարկյալ եյինք: Մենք արդարադատության մինիստրության ուղղած մի հուշագիր հանձնեցինք բանտապետին, վորի մեջ ցույց տվինք բանտի մեր կյանքն ու մեր պահանջները դրինք: Բանտապետը հուշագիրն ընդունեց, հեգնանքով թեթևակի ծիծաղեց ու հետո, կամենալով մեզ վախեցնել, բղավեց.

— Յես ձեզ ցույց կտամ, թե ինչ է նշանակում իմ բանտում բունտ անել: Այնուհետև մեզնից բոլոր իրերը (բացի փայտե գդալից ու սրբիչից) խլեցին և կարցեր դրին: Բանտի վարչությունից մեզ մոտ յերեք որ վոչվոք չեկավ: Բայց մամուլի մեջ մեր սննդադուլի մասին առաջին հոդվածներն արդեն լույս տեսան: Իսկույն ձեռ ու վոտ արին: Թե՛ բանտապետը, թե՛ իր ոգնականը, թե՛ տերտերը, թե՛ բժիշկն սկսեցին իրար հետևից գնալ քաղցողների մոտ: Նրանք բոլորին ել համոզում եյին սնունդն ընդունել և այն ժամանակ ամեն բան կարգի կընկնի: Իհարկե՝ 1927 թ. եր այդ: Այն ժամանակ յերկրում «ազատ» մամուլի պես մի բան գոյություն ուներ, վոր չեր կարող սննդադուլի մասին չհայտնել: Բայց

բոլորովին այլ պատկեր է հիմա՝ բացարձակ ռազմա–ֆաշիստական դիկտատուրայի պայմաններում, յերբ գործադուլի մասին ամենաչնչին հոդվածն անգամ մամուլում չի կարող հրապարակվել: Յեվ այդ ժամանակ ՄՈՊՐ–ի, վոր քաղբանտարկյալների պայքարի գործում միշտ ել խոշոր դեր է խաղացել, դրոշխտակ միջազգային կամպանիա կազմակերպելը վճռական նշանակություն ունի:

1930 թ. մենք՝ 12 հոգի քաղբանտարկյալ Մարիբորում սննդադուլ հայտարարեցինք, պահանջելով՝ յերեկոները լուսավորություն, քաղբանտարկյալների ընդհանուր կամերը տաքացնել և այլն: Սկզբից մեր իրերը ձեռքներիցս առան և այնպես ցույց տվին, իբր թե սննդադուլը չեն նկատում: Բայց պետք է չեշտել, վոր մեր իրերը ձեռքներիցս առնելով՝ նրանք փորձում եյին մեզ պրովոկացիայի մեջ գցել ու ավելի խիստ դատաստան անելու վորևէ պատրվակ ունենալ: Առանձնապես դեմ եյին ազգականների հետ կապ ունենալու, ցերեկը պառկելու և զբոսնելու հարցերին, և այդ խնդրանքները հայհոյանքներով եյին ընթացակցվում՝ մեր կողմից բողոք առաջ բերելու նպատակով, վոր այնուհետև այս հիման վրա «որինակելի կարգ մտցնեն»: Մի քանի որից հետո, յերբ բանտապետը տեսավ, վոր սննդադուլը չի դադարում, կարգադրություն արեց՝ մեզ բռնի կերպով կերակրել: Սննդադուլի 7–րդ որը, 7 բանտապահ խուժեցին իմ կամերը, ինձ մահճակալից վերցրին և ստիպեցին բերանս բանալ, վորի մեջ ունելու պես մի բան դրին, վոր չկարողանամ փակել, և ռետինե խողովակով սուպ լցրին ներս: Բայց զզվելի բան եր այդ ու ցավագնող, վորովհետև անողը մի բանտապահ եր, վոր վոչ միայն այս բանի հետ վոչ մի առնչություն չուներ, այլև խողովակը դիտմամբ թափ եր տալիս, վոր ցավացնի: Որական յերկու անգամ յես յենթարկվում եյի այդ ոպերացիային:

Լեպոգլավի բանտում, վորտեղ 1932 թ. 30 քաղբանտարկյալ եր քաղցում, սննդադուլը ճնշելու գործում

առանձին յեռանդ ցուցաբերեց բժիշկը: Նա քաղցողներին բռնի կերակրելու մեթոդներ գործադրեց: Նրա գործադրած տանջալի մեթոդներից մեկը կլիզմայով կերակրելու մեթոդն եր: Նա նպատակ ուներ այդպիսով ընկճել քաղբանտարկյալի կամքն ու դիմադրությունը:

Քաղց·ղներն որը մեջ յենթարկվում եյին կերակրելու այս մեթոդին, վոր արյունահոսություն եր առաջ բերում: Բժիշկը պնդում եր, թե կլիզմայի միջոցով միայն կարելի յե նպատակին հասնել և քաղցողներին «խելքի բերել»: Բայց ռազմա-Փաշիստական դիկտատուրայի դահիճներն այսքանով չեն սահմանափակվում: Միջ· Միտրովիցի վերջին սննդադուլի ժամանակ, վորին 200 քաղբանտարկյալ եյին մասնակցում, նրանք միայն ռետինե խողովակով ու կլիզմայով եյին գոհություն ստանում: Քաղբանտարկյալներին ծեծում ել եյին: Ծեծելուց հետո հանգստացուցիչ շապիկներ եյին հագցնում նրանց: Այս կատաղի պայքարի արդյունքն այն յեղավ, վոր բանտի վարչությունը բոլոր քաղցողներին մեկուսարան գցեց, վորտեղ նրանց դատաստանն անխնա տեսնում եր:

Առանձնահատուկ տանջանքների եյին յենթարկվում ղեկավարներն ու կազմակերպիչները: Բայց վերջին անցուդարձի մասին մինչև որս ճշգրիտ տեղեկություններ չունենք, սակայն դժվար չի պատկերացնել այն բանտարկյալների դրությունը, վոր Միջ· Միտրովիցում պայքար եյին մղում: Բացի ցուրտ մեկուսարանում քաղցելուց, նրանք զրկված եյին արտաքին աշխարհի հետ վորևե կապ ունենալուց, նրանք վոչ միայն ծաղրանք, հայհոյանք, ռետինե խողովակ և այլն պետք է տանեն, այլև հանգստացուցիչ շապիկ ու գազանացած դահիճների ծեծր պետք է կրեն: Հաջորդ նամակով յես կպատմեմ, թե ի՞նչ են ձեռք բերում քաղբանտարկյալները:

Դուագոսին Սավիչ

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Անցյալ տարի դեկտեմբերին քաղբանտարկյալների ընտանիքներն արդարադատության մինիստրության մի հուշագիր ներկայացրին այն սարսափելի պայմանների մասին, վոր ընթացիկ տարվա սեպտեմբերի յերկրորդ կեսից Գրունկիանդեյի քրեական բանտի քաղբանտարկյալներն եյին ապրում: Այս բանից հետո այդ հուշագիրն ստորագրած ընտանիքների բոլոր քաղբանտարկյալներին իսկույն տեղափոխեցին մի ուրիշ բանտ: Բանտից բաց թողած նախկին քաղբանտարկյալների ասելով՝ մնացած քաղբանտարկյալների դրությունն այն որից վոչ միայն չլավացավ, այլև, ընդհակառակը, ավելի վատացավ և ավելի անտանելի ու սարսափելի դարձավ՝ վտանգի յենթարկելով քաղբանտարկյալների կյանքն ու առողջությունը:

Բերենք մի քանի վորոշակի փաստեր վերոհիշյալ բանտի քաղբանտարկյալների դրության մասին:

1· Արդեն մի քանի ամիս է, ինչ քաղբանտարկյալները բոլորովին զրկված են դուրսն զբոսնելու իրավունքից: Բանտի վարչությունը սրանով չբավականացավ. քաղբանտարկյալներին ավելի տանջանք պատճառած լինելու համար, կամերների բոլոր պատուհանները մեխել տվեց. մոտ ժամանակներս պատուհաններին լայն ու անթափանցիկ ապակիներ գցել տվին, վորից հետո պատուհանները բացելն ու կամերների ոդը թարմացնելն անհնարին է դառնում: Քաղբանտարկյալները պահանջում են յերկու ժամվա զբոսանք, պատուհանները բացելու և ոդը թարմացնելու իրավունք:

2· Քաղբանտարկյալները զրկված են լրագիր, գիրք և գրենական պիտույքներ ունենալու հնարավորությունից· Նրանց մոտից հավաքել են նաև բոլոր տեսակի

խաղերի պարագաները՝ շախմատ, դոմինո և այլն։ Այսպիսով նրանք բոլորովին մատնված են անգործության։

3. Քաղբանտարկյալներին արգելված է ծխել։

4. Նրանց զրկել են նամակ գրելու և ստանալու իրավունքից։

5. Նրանց զրկել են հարազատների հետ տեսակցություն ունենալու իրավունքից։

6. Նրանց արգելվում է իրար հետ սննդամթերքների փոխանակում կատարել։

Ընկերոջը մի կտոր հաց տալու համար մեկի սննդամթերքը բռնագրավել են և մեղադրյալին նստացրել կարցեր, իրար մի կտոր հաց տալը սարսափելի հանցանք է համարվում։

7. Կամերներում ձմեռը ցուրտ է, բայց բանտի վարչությունը քաղբանտարկյալներին մի վերմակ է տալիս, չնայած որ բանտում ավելորդ վերմակներ շատ կան։ Հարկավոր է նշել, որ այդ բանտի քաղբանտարկյալների զգալի մասը թոքախտով է տառապում։

8. Բժշկական օգնություն բոլորովին գոյություն չունի. հիվանդ քաղբանտարկյալները բժշկի գրվելիս, 6—8 օրից հետո միայն կարող են նրա մոտ ընկնել։ Բացի այդ, այն քաղբանտարկյալները, որոնք բժշկական օգնություն են պահանջում, բոլորովին մերկացվում և նախնական խիստ քննության են ենթարկվում, իսկ որոնք ընդդիմանում են այդ քննության, նրանց բոլորովին արգելվում է բժշկին ներկայանալ։ Հաճախ ծանր ու լուրջ հիվանդները հազիվ են բժշկի մոտ ընկնում, և դեղ ստանում են միայն այն ժամանակ, երբ արժեքը վճարում են։ Բայց 200 քաղբանտարկյալներից այդտեղ մեծ մասը չքավորներ են, չեն կարողանում դեղ գնել, զրկված են իրենց առողջությունն ազատելու բոլոր հնարավորություններից։

9. Քաղբանտարկյալներն այսպիսի ծանր պայմաններում գտնվելով, միաժամանակ զրկված են որևէ մեկին դիմելու հնարավորությունից՝ իրենց իրավունք-

ները, կյանքն ու առողջությունը պաշտպանելու համար։ Երբ Վլոդարսկին և Ելովիչն ուզեցին դատախազության բողոք գրել, բանտի վարչությունը թույլ չտվեց։ Երբ քաղբանտարկյալները պահանջեցին դատախազին կանչել, նա չեկավ։ Տեսնելով, որ ելք չկա՝ նրանք սկսեցին կամերներում բարձր գոռալ՝ «դատախա՛զ»։ Այս բանի համար բանտի իշխանությունը նրանց ծեծեց և շատերին կարցեր նստեցրեց։

10. Ամենափոքր հանցանքի համար քաղբանտարկյալներին փակում են կարցերում՝ առանց բժշկական վկայականի, թեև բանտային կանոնադրության մեջ այդ մասին հատուկ հոդվածներ կան։

11. Վերջին ժամանակներս այդ բանտում ծեծը դարձել է սիստեմ. ծեծը բանտում սկսվեց այս տարի ապրիլի 8—15-ից. ծեծին ակտիվ մասնակցություն ունեցողների շարքն են նշանակված՝ տեսուչ Մատել-վսկին, ավագ վերակացուներ՝ Ոսիսկին և Կասպերովիչը, ինչպես նաև վերակացուներ՝ Կախանսկին, Մայսկին և ուրիշները։ Ծեծում են բանալիներով, ձեռքերը և ոտքերը շուռ տալով և այլն։ Բանտի պետ Կուխարսկին բոլոր քաղբանտարկյալներին չորս օր կոշտ անկողնով պատժեց այն պատճառով միայն, որ վերջիններս պահանջել են դատախազին կանչել։ 40 քաղբանտարկյալի իսկույն կարցեր նստեցրին։ Բոլորից անկողինները խլեցին և ստիպեցին հատակին կամ մահճակալների չոր երկաթների վրա քնել։ Դեռ ավելին՝ տեսուչ Մասիկովսկու հետ հսկիչները եկան և քաղբանտարկյալներին հրամայեցին, որ խոտի ներքնարկներն իրենց տան. իսկ երբ կամերներից մի քանիսի քաղբանտարկյալները հրաժարվեցին այդ հրամանը կատարել, նրանց սկսեցին ծեծել՝ չխնայելով նույնիսկ ծանր հիվանդներին։ Հետո սկսեցին սիստեմատիկ կերպով ամեն օր, այսինքն՝ օրական երկու անգամ, ստուգման ժամանակ նրանց ծեծել այն պատճառով, որ չեն ուզում շարքի կանգնել։

Բանտարկյալների բողոքին իբրև պատասխան, կոշտ անկողիններում պառկելու պատիժը երեք օր և ավե-

լացրին: Ամենադաժան կերպով ծեծվեցին՝ Զժեսկին, Խոմսկին, Խրոմիկան և այլ ընկերներ: Առանձնապես կալանքի յեն յենթարկում հրեյաներին՝ ծեծելու ժամանակ նրանց անվանելով «զզվելի ջհուդներ» և այլն: Ծեծի դեմ բողոքելիս քաղբանտարկյալներից շատերը տասն օրով կարցեր են դրվել:

12. Քաղբանտարկյալներն իրենց արժանապատվությունը, կյանքն ու առողջությունը պաշտպանելու համար դիմում են սննդադուլի միջոցին: Այն փաստը, վոր յոթ ամսվա ընթացքում սննդադուլը չորս անգամ նորոգվել է, պերճախոս կերպով վկայում է այն ծանր պայմանները, վորոնց մեջ կուխարսկու իրավասության տակ գտնված քրեյական բանտի քաղ. բանտարկյալներն են ապրում: Այս բանը հաստատում է գոնե Վոյայուկայի հիվանդանոցում ինքնասպանություն գործելը, Պրոտասի մահը, և ամեն որ այդ բանտում ծանր հիվանդների թիվն աճելը (թոքախտ, սրտի, ստամոքսի և այլ հիվանդներ):

Ստորագրություններ

ԼԵՀԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԻ ՍԱՆՁԱՐՁԱԿ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՏԱԿ

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ ԲԵԼԱՍՏՈԿԻ ԲՈԼՈՐ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ

(Լեհաստան)

Այն սոսկալի դրությունը, վորի մեջ է գտնվում Բելաստոկի բանտի քաղբանտարկյալների բուժման գործը, առանձնապես բանտային իշխանությունների բարբարոս վերաբերմունքը քաղբանտարկյալների հանդեպ— հարկադրում է մեզ դիմել այս նամակով:

Ամբողջ Լեհաստանում, ինչպես նաև Բելաստոկի բանտում խոսում են նոր կարգեր մտցնելու մասին, բայց չեն խոսում այն մասին, վոր հիվանդ բանտարկյալներին թողնում են առանց բժշկական օգնության, վոր կալանավոր հիվանդները, նամանավանդ ուրիշ բանտերից փոխադրվածները, հիվանդանոցի յերես նույնիսկ չեն տեսնում և վոչ մի բուժօգնություն չեն ստանում, վոր վարակիչ հիվանդներին և թոքախտավորներին տեղավորում են առողջների հետ միևնույն կամերայում: Մեկ տարվա ընթացքում մահացել են 10 քաղբանտարկյալներ, բայց դա դեռ լրիվ պատկերը չէ. մահացությունը քաղբանտարկյալների մեջ ավելի շատ է, ըստ վորում յուրաքանչյուրի մահվան պատճառը բանտային իշխանությունների արտասովոր վայրագությունների հետևանքն է:

19 տարեկան քաղբանտարկյալուհի Տատյանա Զումակը մահվանից յերկու որ առաջ աղերսում էր բանտի սպասավորուհի Գերմանիկին հրավիրել իրեն մոտ բանտային բժշկին, սակայն դա մնաց անհետևանք: Քաղբանտարկյալ Կոմպլեաիգը մահացավ դեկտեմբերի 25-ին բանտից դեպի հիվանդանոց գնալու ժամանակ՝ կալանքից ազատվելուց հետո:

Ահա թե ինչ են պատմում քաղբանտարկյալ Պոստավսկու մահվան մասին նրա ընկերները, վորոնք գտնվելիս են յեղել նրա հետ հիվանդանոցում: Պոստովսկին հիվանդանոց է ընդունվել հունվարի 15-ին, զգում եր իրեն չափազանց վատ, արյուն եր թքում, քթից չարունակ արյուն եր հոսում, տեսողությունը թուլացել եր, դժվարությամբ եր կարողանում խոսել, ուտել և քնել: Այդ դրությամբ նա վոչ մի ոգնություն չեր ստանում: Նրան տվին մի ինչ-վոր փոշի, վորից դրությունն ավելի վատացավ: Ամբողջ ոգնությունը կայանում եր, տաքությունը չափելու մեջ, վորովհետև ջերմությունը միշտ բարձր եր:

Բժիշկը պնդում եր, վոր հիվանդը կեղծում է՝ պատժվելուց ժամանակավորապես ազատվելու համար: (Ընկ. Պոստովսկու գրավոր դիմումը պատժից ժամանակավորապես ազատելու մասին, մնացել եր անհետեվանք): Վերջին շաբաթվա ընթացքում հիվանդը ճչում եր ու հառաչում որ ու գիշեր: Նրան սրսկումներ եյին անում, բայց սրսկում ստանալու համար հարկավոր եր գիշերներով կռվել, ինչքան վոր ուժ կար—թակել դուռը և պահանջել բուժակ: Յերբ նա դիմեց բժշկին և խնդրեց տեղափոխել հիվանդանոց ազատ պայմանների մեջ, նրան պատասխանեցին, վոր յերբ նրա առողջությունը վատանա—այդ դեպքում միայն կարելի կլինի խոսել փոխադրման մասին:

Պոստովսկու մահվան նախորյակին ընկ. Ս. խնդրեց բժշկին ի հաշիվ կոմունայի հրավիրել մասնագետ բժիշկ, բայց նրան պատասխանեցին, վոր բանտային ռեգլամենտը այդ անել թույլ չի տալիս, իսկ տեսուչները սպառնացին ընկ. Ս-ին, վոր նման յելույթների համար նա կհեռացվի: 1934 թ. հունվարի 31-ին, յերեկոյան ժամը 10-ին Պոստովսկին մեռավ: Մահվանից առաջ նա ասաց ընկերներին՝ «Փաշիստները գիտակցաբար ինձ սպանեցին: Հաղորդեցեք վողջույններս ընկերներին»:

Փետրվարի 9-ին, յերեկոյան ժամը 6-ին մեռավ մեր ընկ. Լուկաշ Դորժինսկին, վորին մեկ տարի առաջ Լյուբ-

լինի բանտից բերեցին այստեղի բանտը բուժվելու համար: Դորժինսկին ամբողջ ժամանակ չեր ստանում վոչ մի բժշկական ոգնություն և պահվում եր քրեյական հանցագործների հետ: Յերբ քաղբանտարկյալների կոլեկտիվը կատեգորիկ կերպով պահանջեց և բողոքեց—այն ժամանակ միայն Դորժինսկուն փոխադրեցին հիվանդանոց, վորտեղ նա մեկ շաբաթ անց մահացավ:

Պարոնայք բժիշկներ, հնարավո՞ր եք գտնում արդյո՞ք կատարել ձեր բժշկական պարտականությունները այդ հրեշային ռեգլամենտի համաձայն, վորը թույլ չի տալիս —ոգնել մեռնող մարդուն: Բժշկության այս ձեր՝ մնացած մարդկային ելեմենտար իրավունքներից զրկելու հետ միասին, հանդիսանում է բանտային նոր ռեգլամենտի մի մասը, նպատակ հետապնդելով ֆիզիկապես վոչնչացնել քաղբանտարկյալներին: Հրեշավոր ռեգլամենտը թույլ չի տալիս ոգնել մահամերձին:

Մենք դիմում ենք ձեզ, պարոնայք բժիշկներ, վորպեսզի դուք չշարունակեք մնալ անտարբեր դեպի քաղբանտարկյալները և վորպեսզի դուք ձեր բժշկական հեղինակությամբ ազդեք՝ այդ վայրագությունները Բելաստոկի բանտից վերացնելու համար:

Վողջույններով՝

Բելաստոկի բանտի քաղբանտարկյալներ

ԼԵՀԱՍՏԱՆԻ Ն. ԲԱՆՏԻ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ՝ ԽՍՀՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ, ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ

Մենք քաղբանտարկյալներս, թվով 170 հոգի, գտնվելով բանտի մեջ, Հոկտեմբերյան հաղթական հեղափոխության 16-րդ տարեդարձին յեղբայրական հեղափոխական ողջույն ենք հղում ԽՍՀՄ բանվորներին, աշխատավոր գյուղացիներին ու կարմիր բանակայիններին:

ԽՍՀՄ-ը պրոլետարական առաջին հնգամյակում արդեն դրած հիմքի վրա 2-րդ հնգամյակում սոցիալիզմի անհաղթելի ամրություններ է կառուցում՝ հակառակ սոցիալ-ֆաշիզմի կողմից աջակցություն գտած համաշխարհային իմպերիալիզմի ամեն տեսակի զինված մեքենայությունների:

ԽՍՀՄ-ի գոյությունը՝ աշխարհի 1/6 մասի ազատագրումը կապիտալիզմի լծից, սոցշինարարության հսկայական զարգացումը, մարդկության պատմության մեջ չտեսնված ակտիվությամբ ու վոգևորությամբ և Համկոմկուսի (բ) Կենտկոմի լենինյան ղեկավարությամբ անսասան խորացնում է կապիտալիզմի ճգնաժամը:

ԽՍՀՄ-ը համաշխարհային հեղափոխության պատվար հանդիսանալով՝ կապիտալիստական սիստեմի անկման կարևորագույն ֆակտորներից մեկն է դառնում: Բանվորների, աշխատավոր գյուղացիների և կարմիր բանակայինների ստեղծած ԽՍՀՄ-ում վերացած է աշխատավոր մասսայի ազգային և սոցիալական ճնշումը, լիկվիդացիայի յե յենթարկվում կուլակությունը, վորպես դասակարգ, լիկվիդացիայի յեն յենթարկվում դասակարգերի մնացորդներն ընդհանրապես: Դասակարգային ներհակությունների անլուր չափերով սրելուն զուգընթաց, կապիտալիստական աշխարհի այս ու այն յերկրներում (Կուբա, Պաղեստին, Լեհաստան, Գերմանիա) աճում են զինված հեղափոխության ալիքները:

ԽՍՀՄ-ը դարձել է պրոլետարիատին, չքավոր գյուղացիությանն ու ճնշված ժողովուրդներին հեղափոխականացնող ֆակտոր: ԽՍՀՄ խորտակելու փորձերից հետո, վոր կարմիր բանակի պողպատյա ձեռքերով լիկվիդացիայի յենթարկվեցին, միջազգային իմպերիալիզմն այժմ ավելի յեռանդով ձեռնարկել է հակախորհրդային բլոկ կազմակերպելու գործը: Իմպերիալիզմը, վորին հեղափոխական շարժումն սպառնում է խորտակել, այլ յելք չի տեսնում այդ դրությունից, քան համաշխարհային հեղափոխության պատվար ԽՍՀՄ-ի խորտակումը:

Ճնշված ժողովուրդների բուրժուազիան թե գաղութներում և թե համաշխարհային իմպերիալիզմի զանազան կլիկների կողմից գրավված առանձին յերկրամասերում հետզհետե ավելի ու ավելի ամուր է կապվում իմպերիալիզմի հետ՝ ամեն քայլափոխում դավաճանելով ազգային ազատագրման պայքարին:

Սոցիալ-ֆաշիստական 2 ինտերնացիոնալն որստորե ջախջախելով պրոլետարիատի ամեն մի պայքարը՝ հետզհետե ավելի ամուր է կապվում ֆաշիստական ապարատի հետ, կազմելով նրա բաղկացուցիչ մասը՝ բանվորական հեղափոխական շարժման դեմ կռվելու ավելի վտանգավոր մասը, վորովհետև այդ ինտերնացիոնալն իր գործունեյությունը բանվորական մասսաների միջավայրում է կենտրոնացնում:

Սոցիալ-ինտերվենտները, վորոնց ամենից շատ է սպառնում հեղափոխությունը, ավելի ուժեղ, քան 1918 թ. հակախորհրդային ինտերվենցիան, ֆորպոստն են հանդիսանում (Անգլիայի, Ավստրիայի սոցիալ-դեմոկրատների բանաձևը, Վանդեր-Վելդեյի յելույթը և այլն): Զորսի պակտը, տնտեսական զինաթափման կոնֆերենցիան, Ազգերի Լիգայից Գերմանիայի դուրս գալը, ճապոնական իմպերիալիզմի պատրաստակամությունները ինտերվենցիայի համար, Հիտլերի ինտերվենցիոնիստական հանրաքվեն, նրա մեքենայությունները Ֆրանսիայում և Լեհաստանում, բուֆերային պետություննե-

րի պատվար ստեղծելը,— այս բոլորն ինտերվենցիայի շուտափույթ պատրաստումն են վկայում: Իմպերիալիստական պետությունների մեջ մշտապես խորացող հակասություններն ավելի յեն սրում նրանց ձգտումները՝ միանալու և այդ հակասությունները ԽՍՀՄ-ի հաշվին լիկվիդացիայի յենթարկելու: Չհարձակվելու պակտերն ուժեղացնելով մասսաների համակրանքը դեպի ԽՍՀՄ-ի խաղաղ քաղաքականությունը՝ միաժամանակ ծածկույթ են հանդիսանում ինտերվենցիայի համար:

Ֆաշիստական Լեհաստանը համաշխարհային իմպերիալիզմի թույլ օղակը կազմելով՝ արևմուտքում հակախորհրդային բլոկի պլացդարմն է հանդիսանում (Տուտուզեսկոյի այցելությունները, լատվիական և ֆինլանդական գլխավոր շտաբի սպաներն, Ստանիսլավսկու խաղերը, Վիլնայի և Պերեմիշլի գազային մանևրները)· իր ներսում հեղափոխական շարժումը ճնշելու համար՝ Ֆաշիզմին հարկավոր է ԽՍՀՄ-ը խորտակել: ԽՍՀՄ-ի հանդեպ, լեհական ֆաշիզմի ուժեղացմանը զուգընթաց՝ հակախորհրդային ակցիաներն ու պրովակացիաները (մահափորձ Լվովում) ներկայումս կենտրոնացել են Լեհաստանում, Արևմտյան Ուկրայինայում և ուկրայնական էմիգրացիայի ներսը՝ Լեհաստանից դուրս (ընդհանուր Ուկրայնական համագումար, ուկրայնական ֆաշիստների ցույցեր՝ 29/10, և սոցիալ-ֆաշիստական ցույցեր 5/1-):

Լեհաստանի հեղափոխական պրոլետարիատը՝ Արևմտյան Ուկրայինայի և Արևմտյան Բելոռուսիայի աշխատավոր գյուղացիության և աշխատավոր մասսաների հետ միասին, Լեհաստանի կոմկուսի ղեկավարությամբ՝ իր հեղափոխական մարտերում հետ կմղի աշխատավոր մասսաների հաշվին ճգնաժամից դուրս գալու կապիտալիզմի փորձը, կջախջախի հակախորհրդային խաչակրաց արշավանքի Փորձասար՝ հակառակ նրանց խաղերի ու հեղափոխական փքուն ճառերի: Կփշրի ինտերվենցիայի ամեն մի փորձը ԽՍՀՄ-ի դեմ՝ համաձայն Լենինի ուսմունքի, իմպերիալիստական ամեն մի պատերազմ ու ինտերվենցիա քաղաքացիական կռվի փոխելով:

Ճգնաժամը կլուծվի միայն հեղափոխական ճանապարհով, Լեհաստանի կոմկուսի ղեկավարությամբ, նույն այն ճանապարհով, որ 16 տարի սրանից առաջ ցույց են տվել ԽՍՀՄ-ի բանվորները, աշխատավոր գյուղացիները և կարմիր բանակայինները՝ պրոլետարական դիկտատուրայի համար իրենց մղած պայքարում:

Կեցցե Հոկտեմբերի և ԽՍՀՄ-ի 16-րդ տարեդարձը:

Կեցցե ԽՍՀՄ-ի աշխատավոր մասսաների ղեկավար՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմը:

Դեպի պայքար համաշխարհային սոցիալիստական հեղափոխության համար կոմկուսի ղեկավարության ներքո:

Կեցցե՛ Կարմիր բանակը, դեպի պայքա՛ր՝ ընդդեմ իմպերիալիստական ինտերվենցիայի:

Կեցցե՛ Կոմկուսը՝ Լեհաստանի պրոլետարական հեղափոխության առաջնորդը:

Քաղբանտարկյալների Կոմունայում
(Լեհաստան)

«57»-Ի ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Լեհական քաղբանտարկյալների նամակների մեջ ասված է, որ 1934 թ. փետրվարի 5-ին վերջապես պետք է սկսվի, բազմիցս հետաձգված, 57-ի հռչակավոր դատավարությունը, այն աշխատավոր ուկրայնացիների դատավարությունը, որ 1930 թ. աշնանն են ձերբակալվել:

Արդեն յերեք և կես տարի յե, ինչ լեհերի կողմից գրավված Արևմտյան Ուկրայնայում 57 հեղափոխական տառապում են բանտում՝ սպասելով այդ դատավարության: Այս դատավարության դաղտնի ատտաը սերտա-

րեն կապված է Արևմտյան Ուկրայնայի՝ 30 թ. հեղափոխական դեպքերի հետ: Ամբողջ Արևմտյան Ուկրայնան ապստամբությամբ էր բռնված լեհական ճնշումների դեմ: Մեծ կալվածատերերի կալվածների մասսայական հրդեհումները, յերկաթուղային և հեռագրային լարերի վոչնչացումն ամենօրյա յերևույթներ եյին: Մի քանի տեղ որվա մեջ մինչև 50 հրդեհ եր բռնկվում: Այդ հրդեհների շողքը ջահի նման լուսավորում եր ամբողջ Արևմտյան Ուկրայնան և խուճապի մատնում շահագործողներին ու կեղեքողներին: Այդ հեղափոխական ազատագրական պայքարին Ֆաշիստական կառավարությունն իր պատժիչ արշավախմբերով ու մասսայական բանտարկություններով եր պատասխանում: Բանվորների և գյուղացիների դեմ հալածանք սկսվեց: Արևմտյան Ուկրայնայի բոլոր ծայրերից կալանավորներին «Դեֆենզիվ» (լեհական ախրանկա-պահնորդական բաժին) եյին բերում և ամենածանր տանջանքների յենթարկում. քաղաքական կալանավորներին հատկապես տեղավորում եյին բանվորական կենտրոններից հեռու գտնվող բանտերում, վորպեսզի «այնտեղ նրանց հարցաքնեն»: Այս բանը լեհական «դեֆենզիվի» սիստեմ դարձավ: Այս կապակցությամբ արժե հիշել այն դեպքերը, վոր 1925 թ. Բելնկում և Ջնդվորսյում առաջ յեկան: Քաղբանտարկյալները Լեհաստանում միշտ էլ դաժան հալածանքների յեն յենթարկվում, բայց մինչև այժմ յեղած պատիժները նսեմանում են 1930 թ. աշնանը Լուցկ քաղաքի վոստիկանական բանտում տեղի ունեցած դեպքերի առաջ: Այդ ժամանակից Լուցկն ու Լուցկի վոստիկանական բանտի պետ Զարեմբան տանջանքների առանձին կամեր են պատրաստում: Լեհական սեյմում կոմունիստական ֆրակցիայի կողմից Լուցկի դեպքերի մասին արված հարցապնդման մեջ ասվում է՝ «Բանտարկյալների քթերը լիքը քացախի և մեղի խառնուրդ եր»: Այնուհետև նրանց մարմինը պարաններով կապում եյին և այնքան ուժեղ քաշում, վոր ներքին որգաններն անպետքանում եյին. կրունկներն այրում ու ծակում եյին, այն-

պես, վոր նրանցից շատերը յերկար ժամանակ սողալով եյին ման գալիս: Վոտքերից շղթայակապ բանտարկյալների ծնկների տակ ձող եյին ամրացնում ու կախում առաստաղից. ռետինե գավազաններով ծեծում եյին սեռական անդամներն ու շանը կատաղեցնում-թողնում եյին վոր նրանց կծի: Համարյա բոլոր կանայք բռնաբարված եյին: Լվով քաղաքից մի կին չկարողանալով այդ տանջանքները տանել՝ փորձեց ինքնասպանություն գործել, և ներկայումս մահամերձ վիճակում ընկած է բանտային հիվանդանոցում: Մի ուրիշ կին յերրորդ որը մեռավ պահնորդական բաժնում: ՄՈՊՐ-ի կողմից իր ժամանակին սկսած բողոքի կամպանիան իր կողմը գրավեց հասարակության ուշադրությունը վոչ միայն Լեհաստանում, այլև արտասահմանում: Ձեռքի տակ յեղած փաստերն այնքան համոզեցուցիչ եյին, վոր ինքը՝ ունեվորների իշխանությունն ստիպված եր խոստովանել, թե տանջանքներ տեղի ունեցել են և Զարեմբան փոխադրվել է վոստիկանական մի ուրիշ բանտ:

Համենայն դեպս Լուցկի մեթոդները հեղափոխական բանվորների և գյուղացիների նկատմամբ մեթոդ դարձան նաև Արևմտյան Բելոռուսիայում ու Լեհաստանում:

Լուցկի մեթոդներն ավելի ու ավելի եյին գործադրվում բոլոր բանտերում: Մերկացումներից վախենալով՝ Ֆաշիզմը բազմիցս հետաձգել է «57» հեղափոխականների դատավարությունը: Դաշտային դատարանները յերկրում անդադար աշխատում են: Լեհաստանը ծածկված է կալանավորների բազմությամբ, բանվորներին ու գյուղացիներին գնդակահարում են դատավճիռներով ու առանց դատավճռի, փողոցներում նրանց սպանում են: Վոստիկանական գնդաններում տանջում, մահվան դուռն են հասցնում: Լեհական բուրժուազիան իր ճանկն ընկած հեղափոխական մարտիկներին ամենադաժան, վայրենի ձևով է դատում: 9 հ-գի մահվան են դատապարտված, 1450 հոգի՝ բանտարկության և 28 հոգի՝ 208 տարի աքսորի: Ահավասիկ ոկուպանտների

տեռորի արդյունքը միայն մի ամսում (թվերը վերցված են բուրժուական մամուլից, վոր բազմաթիվ պրոցեսների մասին լռություն է պահպանում): Բայց լեհական բուրժուազիան ի վիճակի չի ճնշել հեղափոխական շարժումը. արյան մեջ խեղդված և առաջին մոմենտին կարծես թե դաշտային դատարանների կողմից լիկվիդացիայի յենթարկված «խաղաղեցրած» հեղափոխական շարժումը նորից վերածնվում ու ավելի լայն մասսաներ է ընդգրկում: Ձերբակալվածները դատապարտվելու յեն նոր օրենքի հիման վրա, վորպես «Լեհական կառավարությունից յերկիրը խլելու փորձ կատարողներ»: Բոլորին ամենադաժան դատավճիռ է սպասում՝ ցմահ աքսոր:

«57»-ի դատավարությունը մեծ լարվածությամբ է սպասվում: Կարմիր Օգնությունը՝ ՄՕՊՐ-ը, հոգուտ Լուցկի բանտարկյալների կամպանիա յե սկսել: Միջազգային համերաշխության ալիքը պետք է պաշտպանի լեհական աշխատավորներին:

Ազատե՛նք Լուցկի տառապյալներին:

Կորչե՛ն Լուցկի տանջարանները:

ԿՈՐՈՆՈՎԻ (ԼԵՀԱՍՏԱՆ) ԲԱՆՏԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Մենք այստեղ 160 քաղբանտարկյալ ենք: Դատավճիռներից մեծ մասը յերկարատև ժամանակներով է: Ընտանիքից համարյա թե օգնություն չենք ստանում: Մեր բանտում ամենակարևոր անցքը 1933 թ. սեպտեմբերի 19-ի քրեյականների յելույթն է: Կոմունան ամենաակտիվ մասնակցությունը ցույց տվեց այս յելույթին: Առավոտից բոլոր բանտարկյալները պահանջեցին բանտապետին: Առաջին ծեծի ու բարիկադը գրոհելու ժամանակ քաղբանտարկյալները գոչեցին.

— Կորչի՛ սպիտակ տեռորը, կորչի՛ անպաշտպան բանտարկյալների ծեծը:

Նախքան այդ, յելույթ անող քրեյականները մի ճառով դիմեցին վարչական ստորին կազմին: Այն քրեյականները, վոր մինչև այդ չեյին մասնակցում յելույթին, տեսնելով քաղբանտարկյալների յելույթը՝ միացան քրեյականների հետ և կամերաներում յերկու նոր բարիկադ կառուցեցին: Վարչությունն ստիպված յեղավ նահանջել: Հետո, յերբ տեղ հասած վոստիկանությունը բարիկադը գրավեց ու սկսեց բանտարկյալներին ծեծել, քաղբանտարկյալների մեջ աղաղակներ բարձրացան.

— Ջծեծե՛ք, չսպանե՛ք:

Ի պատասխան այս բարձրաձայն բողոքի, վոստիկանությունը դադարեցրեց քրեյականներին ծեծելը:

Բոլոր քաղբանտարկյալները ճաշից հրաժարվեցին՝ պահանջելով դատախազին կամերաներ կանչել: Դատախազը կամերաներ գալուն պես մենք նրան դիմավորեցինք բարձրաձայն բողոքով՝ անպաշտպան բանտարկյալներին ծեծելու դեմ, և դրինք մեր բոլոր պահանջները:

Այս ընդարձակ հրապարակայնության հետևանքով, վոր մեր յելույթն է գտել, մինիստրությունից մի խորհրդական մեզ այցի յեկավ, վորին մեր պահանջները դրինք, օրինակ՝ մթերքների բաշխում, դրամական փոխադրություն, լուսավորություն՝ մինչև յերեկոյան ժամը 9-ը, սոցիալական բովանդակություն ունեցող գրքերի թույլտվություն և ստացում: Մենք նրան բացատրեցինք ադմինիստրացիայի գործադրած պատիժների, ծեծերի, տեղավորելու հատուկ սիստեմը, ինչպես և քրեյականների վերջին ընդվզումների հիմքն ու դրդապատճառը: Նկատի ունենալով հանցագործների մեջ կատարած հետագա թափառումը՝ մենք վորոշեցինք ադմինիստրացիային ճնշել այն մտքով, վոր մեր պահանջները կատարի: Մանր-մունր պահանջներն ադմինիստրացիան բավարարեց, այնուհետև կոմունան զորակոչվեց պայքարելու այն անվանակոչի (перекличка) դեմ, վոր մի տարի առաջ Կորոնովի կոմունայի

վզովն եյին փաթաթել: Կոմունային հաջողվեց անվանակոչը ձախողել: Սկզբից իշխանությունը չեր համարձակվում դիմադրել, այլ յերկու շաբաթից հետո միայն անվանակոչը նորից պահանջեց: Մեզանից կտրուկ պատասխան ստանալով, թե անվանակոչի համար շարքի չենք կանգնի՝ ադմինիստրացիան մեզ պատժեց անորոշ ժամանակ մախորկայից զրկելով: Ղեկավարությանը կոմունան զորակոչի հրավիրեց անվանակոչի դեմ պայքարը շարունակելու: Կոմունայի պատգամավորների անընդհատ ու բարձրաձայն բողոքներից, բոլոր ընկերների մասսայական բողոքներից ու դռները բարձրաձայն թակելուց յերեք օր հետո ադմինիստրացիան մախորկան վերադարձրեց մեզ: Այսպիսով, շնորհիվ կոմունայի հեռավոր ու միաձայն դիրքի՝ ադմինիստրացիայի գրոհը հետ մղվեց:

Կորոնովի բանտի կոմունայի ղեկավարություն

Նոյեմբեր, 1933 թ.

ԼՈՄԺԱՅԻ (ԼԵՀԱՍՏԱՆ) ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Մեր կոմունայում 105 մարդ կա, վորից 85-ը տղամարդ ե, իսկ 20-ը՝ կին: Նյութական դրությունը սոսկալի յե: Արդեն մի քանի ամիս ե, ինչ ծխախոտ չկա, մեկուսարաններում ենք նստած: Վերջին յելույթի օրից, այսինքն՝ 1932 թ. սեպտեմբերից (4 որյա սննդադուլ) զբոսանքը մի ժամով պակասեցրել են, գրադարանից զրկել են (գեղարվեստական գրականությունը մտցրել են բանտի գրադարանը), մյուս գրքերը վոչնչացրել են: Զբոսանքի համար նոր ռեժիմ ե սահմանված (զույգ-զույգ, զույգը փոխել, մյուս զույգի հետ խոսել չի թույլատրվում, զբոսանքն սկսել համաձայն հրամանի, համաձայն հրամանի՝ պատվի կանգնել ու գլուխը բանալ): Արգելված ե մթերքներից միմյանց բաժին տալ, մի՝ բան, վոր հավասարազոր ե կոմունայի վոչնչացման:

Զբոսանքից առաջ ու հետո, նույնիսկ զուգարանից դուրս գալիս, անհատական խուզարկություն: Սկզբից թերթերով օգտվում եր նա, ով ուղղակի խմբագրությունից եր ստանում, իսկ այժմ միմիայն բանտապետի հատուկ թույլտվությամբ կարելի յե թերթ ստանալ, իսկ յեթե մյուս ընկերն ուզում ե այն կարդալ, նորից պետք ե պետին հայտնի: Տետրակ կամ մատիտ ունենալու համար դարձյալ պետք ե դիմում տալ: Նամակներն առայժմ կամերաներում են գրվում: Կանանց արդեն հայտարարել են, վոր ամիսը մի անգամ կարելի յե նամակ գրել: Ադմինիստրացիան ներկայացուցչին ձևականորեն չի ճանաչում, բայց փաստորեն ղեկավարը կոմունայի բոլոր գործերը կանոնավորում ե: Ամեն անգամ բանտապետը նրան հակառակում ե, չի ուզում նրան ականջ դնել և վերջիվերջո զիջում ե: Պատժելու, կարցեր դնելու, ծեծելու և այլ դեպքերում ներկայացուցիչը հակադրում ե այն բոլորին և հաճախ համապատասխան արդյունքներ ե ունենում: Նորերս սնունդը մի քիչ լավացավ, ընկերների յելույթից հետո, վորոնք պահանջել եյին, վոր դատախազը գա: Յերբ դատախազը յեկավ ամեն մի ընկեր նրա հարցին, թե՝ ինչ ունի ասելու, կրկնում եր, վոր իրենց նկատմամբ ադմինիստրացիայի վերաբերմունքը սոսկալի յե, վոր կերակուրն անտանելի յե, և վոր իրենք կտրուկ կերպով պահանջում են սնունդը լավացնել: Այս այցից հետո սնունդը լավացավ, սուրճը քաղցրացավ, և շաբաթը յերկու անգամ մի-մի կտոր միս ու սուպ տվին: Ընկերները կտրուկ կերպով հրաժարվեցին անվանակոչին պատասխանելուց, վոր ադմինիստրացիան եր պահանջում, և կանչելիս քրեականների պես եյին կանգնում՝ գլուխը դեմ անելով դռան դիմացի լուսամուտին: Բայց բողոքները չօգնեցին: Այս անգամ ընկերներն աշխատում են դուռը բանալուց առաջ կանգնել, բայց վոչ լուսամուտի դեմ: Փոխարենն զբոսանքի ժամանակ խմբի պետի ներկայությամբ մեզ յերկու անգամ կրկնեցին.

— Շարքի, և գլուխներդ բացեք:

Բայց ընկերներն իրենց չլսելուն դրին ու սկսեցին գրոսանքը, իսկ ադմինիստրացիան լռեց: Փորձեր յեղան նաև ընկերներին չոր փոխելու, առանձնապես նորերին: Նույնիսկ դեպքեր յեղան, վոր բռնի կերպով նրանց չոր փոխեցին: Մի քանի օր անընդհատ այդ ընկերները չորերը չեյին հագնում և կամերի դուռը բանալուն պես բանտի չորերը շպրտում եյին միջանցք: Այդ ժամանակ բանտապահները խուժեցին կամերան, ու սկսվեց մեզ ծանոթ ծեծ ու ջարդը: Ներկայացուցիչը բողոքի գնաց պետի մոտ, վոր խոստացել եր, թե այլևս այդ բանը չի լինելու, իսկ ինչ վերաբերում ե չոր փոխելուն, պետը հայտարարեց, թե առողջապահական նկատառումներով նա նորերին 10 օրով չորը փոխում ե: Իբր թե կարանտինի համար եր արվում: Մինչև օրս ել այս խոստումը կատարվում ե և տաս օրից հետո սեփական հագուստը վերադարձվում ե իրեն՝ բանտարկյալին:

Ընկերները վորոշում կայացրին, վոր յեթե ծեծը կրկնվի, համապատասխան կարգով բողոքելու յեն. դատախազ կպահանջեն ու չեն նախաճաշի: Ամեն մի դատարկ բանի համար պատիժներ են տեղում՝ կարցեր, կոշտ մահճակալ, մի քանի շաբաթ թեյից զրկել և այլն:

7 մայիսի 1934 թ.

ՆԱՄԱԿ ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿԱՆԱՆՑ «ՍԻՐՑԻԱ» ԲԱՆՏԻՑ

Մենք գտնվում ենք ծայր աստիճան լարված դրության մեջ: Մասսայական մերկացում ե կատարվում: Քրեյական օրենսդրության 154 հոդվածով 15 կին մերկացրել են: Նրանք 3–4 օր մնացել են մերկ: Բոլորը հիվանդացել են: Այժմ յերկու մերկ կին նստած են ստորյերկրյա բանտում (կարցերում) վորոնցից մեկը, այսպես կոչված՝ «օրինական» բանտում:

Միասին զբոսնելուց հրաժարվելու համար պատժվեցինք՝ յերկու շաբաթ զրկվելով վորևե բան ընդունելու հրավունքից:

Զդանովսկայան (կանանց բանտի տեսուչը) ծաղրում ե մեզ, չխնայելով վոչ մի միջոց:

Հունվարի 28-ին մեզ հայտարարեց, վոր տարածված տիֆ հիվանդության պատճառով չեն թույլատրելու դրսից սպիտակեղեն ստանալ: Առաջարկում են՝ կամ բանտային հագուստը հագնենք, կամ սպիտակեղենները լվանալու համար դրամ վճարենք: Պարզ ե՝ տիֆ հիվանդությունը միմիայն առիթ ե ծառայելու, վոր մեզ մերկացնեն:

Զբոսանքը պարբերաբար կրճատում են, այժմ 30–40 րոպե յենք զբոսնում: Ամենատարրական բանի համար խիստ կերպով պատժում են: Բացի մերկացումից, 7 կին պատժված են և աքսորված յերկու շաբաթից մինչև մեկ ամիս ժամանակով: Գրական պարագաներ ու լրագիր մինչև հիմա չունենք (կամերայից յերկուսը միայն լրագիր ունեն):

ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐՆ ՈՒ ՀԱԼԱԾԱՆՔԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

Բալկանյան պետություններն ազգային փոքրամասնություններին ճնշելու, հալածելու տիպիկ օրինակ են հանդիսանում: Օրինակ՝ Ռումինիայում ազգային փոքրամասնությունը 40 տոկոս է կազմում, Հարավ-սլավիայում, վորտեղ 5 միլիոն սերբ կա, ազգային փոքրամասնությունը 7,5 տոկոս է կազմում, Բուլղարիայում, Պետրիչեյի շրջանում 200000 մակեդոնցիներ են բնակվում, վորոնց դաժանորեն ճնշում են բուլղար «փրկիչները»: Հունաստանում՝ մակեդոնցիները, տաճիկները, Թրակիայում՝ բուլղարները, հայերն ու հրեաները տարրական իրավունքներից ու ազատությունից զրկված են, ֆաշիստական բանդաներն ազգային փոքրամասնությունների դեմ չլսված տեռոր են սարքածել:

Բեսարաբիայում (Ռումինիա) այսպես կոչված «յերկաթե գվարդիան» է իշխում, վոր ցարական ժամանակների սև հարյուրակայիններին է հիշեցնում: Դոբրուջայում (Ռումինիա) ֆաշիստական բանդաներ են կազմակերպված: Հունաստանում «ՑԵ, ՑԵ, ՑԵ» կոչված ֆաշիստական կազմակերպությունը, վոր Վենիզելոսի խմբակի ծառայողն է, հրեաների, հույների, տաճիկների ու մակեդոնցիների դեմ անամոթ հալածանք է ըսկսել: Բալկանյան յերկրներից վոչ մեկում և վոչ մի ազգային հեղափոխական կազմակերպություն լեգալ կերպով չի աշխատում: Այդ կազմակերպությունների առաջնորդները բանտարկվում, տանջանքների յեն յեն–

թարկվում և յերկար տարիներ զրկվում են ազատությունից:

Այս տարվա սկզբում ֆաշիստական բանդաները Բուլղարիայում նացիոնալ-հեղափոխական մակեդոնացի լիդերներից սպանեցին պատգամավոր Քրիստո Տրայկովին, և Դիմո Կավրակիրովին: Բուքովինայում վերջին ամիսները բանտարկված և Յասսայի բանտերն են տեղափոխված 100 ուկրայինացի ազգային հեղափոխական: Արգելվում և հալածվում են վոչ միայն քաղաքական այլև կուլտուրական կազմակերպությունները:

Բալկանյան բոլոր յերկրներում բռնի դենացիոնալիզմի պրոցեսն արագ տեմպերով (և ամենադաժան միջոցներ կիրառելով) է ընթանում: Ազգային փոքրամասնությունների բոլոր դպրոցները փակվում են: Ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսած մամուլը (թերթեր, ամսաթերթեր) սիստեմատիկ կերպով բռնագրավվում են և արգելվում: Ազգային հալածանքի ամենացայտուն արտահայտությունը տնտեսական և ֆինանսական քաղաքականությունն է՝ հանդեպ ազգային փոքրամասնությունների, վորը տարվում է չտեսնված շահագործման և թալանի միջոցով: Այն տուրքերը, վոր ազգային փոքրամասնությունների վրա յեն դրվում, մինչև յերկու անգամ ավելի յեն, քան իշխող ազգության վրա դրված տուրքերը: Տուրքերը գանձվում են ամենադաժան կերպով, և վոչ մի լրացուցիչ ժամկետ չի տրվում: Ազգային փոքրամասնություններին վարկեր չեն տրվում, իսկ յեթե տալիս են էլ, ապա նրանք մուծում են կրկնակի չափով: Գործազրկությունն ազգային փոքրամասնությունների մեջ ավելի ուժեղ է, քան ազգաբնակչության մյուս խավերի մեջ: Ազգային փոքրամասնություններին պատկանող գործազուրկների թիվն որեց որ աճում է, վորովհետև ազգային փոքրամասնությանը պատկանող բանվորներին կառավարությունը գործարաններից դուրս է անում:

Բանվորների համերաշխությունը պառակտելու նպատակով՝ ազգային փոքրամասնությանը պատկանող

բանվորների աշխատավարձը միշտ ավելի յե իջեցվում, քան այն բանվորներինը, վոր տիրող ազգությունից են:

Ազգային փոքրամասնություններին պատկանող բանվորների և գյուղացիների շահագործմանն ու թալանին մասնակցում են իրենց սեփական կապիտալիստներն ու խոշոր կալվածատերերը, քանի վոր ազգային փոքրամասնությունների բուրժուազիան կառավարության և կառավարական կուսակցությունների մեջ է մտնում և վերջիններիս հետ ձեռք ձեռքի տված՝ իրենց սեփական ազգության աշխատավոր մասսաներին ճնշելու քաղաքականություն է վարում: Ռումինիայում նրանք ամեն տեսակի միջոցներ են ձեռք առնում, վոր ազգային փոքրամասնությունները չմտնեն ազգային հեղափոխական շարժման մեջ:

Հարավ-սլավիայում, վորտեղ բոլոր կուսակցություններն ու կազմակերպություններն արգելված են, սոցիալ-դեմոկրատներն իրենց լեգալ կազմակերպություններն պահպանել են այն պատճառով միայն, վոր նրանք կառավարությանն ոժանդակում են՝ ֆաշիստական սերբերի քաղաքականության հանդեպ ճնշված ազգային փոքրամասնություններ ունենալու:

Բուլղարիայում և Հունաստանում սոցիալ-դեմոկրատ պարագլուխները նույն դերն են խաղում և նույնպես իրենց նացիոնալ շովինիստական կառավարությունների ծառայողներն են: Հակառակ այս բանի, ազգային ազատագրական շարժումը բալկանյան յերկրներում աճում ու ընդարձակվում է, հաճախ յերևան գալով իբրև բացարձակ ապստամբություն: Այս ապստամբություններն արյան մեջ խեղդելու համար պատժիչ զորամասեր են ուղարկվում, վորոնք բազմաթիվ զոհերի պատճառ են դառնում:

Հարավ-սլավիայի «պացիֆիկացիան» վերջացավ մասսայական գնդակահարություններով և տասնյակ մահապատիժներով:

ՄՈՊՐ-ի բալկանյան սեկցիաներն ազգային փոքրա-

մասնությունների զոհերին ոգնություն են տալիս այնպես, ինչպես և դասակարգային պայքարի զոհերին:

ՄՈՊՐ-ի սեկցիաները բալկանյան յերկրներում սիստեմատիկ պայքար են մղում ընդդեմ սպիտակ տեռորի, և ակտիվ կերպով մասնակցում են տեղի ունեցող յելույթներին, ազգային փոքրամասնությունների պայքարին՝ մոբիլիզացիայի յենթարկվելով վոչ միայն վերջիննե-[illegible] այլև տիրող լայն աշխատավորական մասսաների ազատագրման համար: Նրանք կազմակերպում և կամպանիաներ են մղում՝ հանուն ազգային ազատագրման պայքարող հեղափոխական մարտիկներին ոգնելու համար:

ՍԻՐԻԱՅԻ ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՎԱՐԱԾ ՊԱՅՔԱՐԸ ՖԱՇԻԶՄԻ ԴԵՄ

ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Ընկերնե՛ր.

Ստացանք ձեր նամակը, թարգմանեցինք և անմիջապես հասցրինք Սիրիայի բանտերում գտնվող մեր բոլոր ընկերներին, վորը նրանց մեծ ուրախություն պատճառեց:

Խորհրդային Հայաստանում և ամբողջ Խորհրդային Միության մեջ կատարվող սոցիալիստական շինարարության մասին գրված հետաքրքիր լուրերը մեզ մեծ հաճույք են պատճառում:

Հետաքրքրությամբ և համակրանքով հետևում ենք մեր սիրելի ընկեր ՍՏԱԼԻՆԻ առաջնորդությամբ կոմունիստական կուսակցության՝ ամբողջ աշխարհում տարած հաջողություններին:

Ընդհակառակը, մեր յերկիրը կրում է ֆրանսիական իմպերիալիզմի ճնշող լուծը և նրա զարհուրելի տեռորը: Միանալով քաղաքի փտած ֆեոդալներին ու բուրժուազիային, ինչպես և դեմագոգ նացիոնալիստներին՝ նա վայրագորեն հալածում է սիրիական կոմկուսակցությունը և այն համակրողներին: Բանտերը լիքն են անիրավացիորեն և անստույգ պատճառներով ձերբակալված ընկերներով:

Բեյրութում միայն անցյալ շաբաթվա ընթացքում ձերբակալվեցին 18 ընկեր, վորոնք մասնակցել էյին հակադաշնակցական մի ցույցի կամ թռուցիկներ էյին բաժանել: Այս ցույցն ամբողջ աշխարհում իր հակաազդեցությունն ունեցավ. վոստիկանական յերկու կոմիսար և մի տասնյակ ագենտ վիրավորվեցին. ծերերը, կանայք և պատանիները փողոց իջան իրենց ցասումը հայտնելու ֆրանսիական իմպերիալիզմի քաղաքականությանը, վորը պաշտպանում և քաջալերում է ֆաշիստ դաշնակների կուսակցությունը և հրահրում է նրա տեռորիստական և վոճրագործական ակտերը:

Դամասկոսում մեր կուսակցության և Կարմիր Ոգնության ընկերներն ամեն մի բանի համար ձերբակալվում և բանտ են դրվում. ներկայումս 38 ընկեր բանտումն են: Միևնույն պատկերն է նաև Հալեպում, ուր այս որերս հակաիմպերիալիստական մեծ ցույց տեղի ունեցավ, վորին ամբողջ ժողովուրդն էր մասնակցում, և վորին հաջորդեց ընկերներից 60-ի ձերբակալումը: Մի խոսքով՝ Սիրիայի բոլոր բանտերը լիքն են մեր ընկերներով. բանտապետները և ապահովության ագենտները մեր ընկերների հետ ամենավայրենի կերպով են վարվում, ծեծում, չարչարում են և հազար ու մի տեսակ տանջանքների յենթարկում, վորպեսզի նրանց ստիպեն խոստովանություններ անել և իրենց ընկերներին մատնել: Սակայն նրանք վոչ մի հաջողություն չեն ունեցել, և շատ հաճախ զնդանների խորքերից թնդացող Ինտերնացիոնալն ու Կարմիր Սիրիայի մարշն են լսում:

Ընկերնե՛ր, բերկրանքով սպասում ենք «Մեծ գիշերվան»: Մենք հաջողություններ ունենում ենք և վստահ ենք, վոր հաղթանակելու յենք: Պրոլետարիատը բոլոր դժվարություններն ու խոչնդոտները պետք է վերացնի և իմպերիալիստական, ֆաշիստական ու կապիտալիստական տեռորը հաղթահարի:

Կեցցե՛ Համաշխարհային Կարմիր Հոկտեմբերը:

Կեցցե՛ ամբողջ աշխարհի բանվորությունն ու գյուղացիությունը:

Կեցցե՛ կոմունիստական կուսակցությունը և ամբողջ աշխարհի պրոլետարիատի առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԸ:

Հեղափոխական բարևներով՝

Սիրիայի Կարմիր Ոգնության Կենտկոմ.

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ԲՈՂՈՔԸ ԲԱՆՏԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԴԵՄ

ԲՈՂՈՔ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՌԵԺԻՄԻ ԴԵՄ

Մենք՝ ներքո ստորագրողներս, մի շարք քաղբանտարկյալների պաշտպաններս և իրավաբաններս, հասարակության լայն խավերին մամուլի միջոցով հայտնում ենք ի գիտություն հետևյալ իրականությունը:

Դովթանի տաժանակիրների բանտում նրանք մեկուսացված և դրված են քարից, յերկաթից, ցեմենտից շինված կամերներում, վորոնք չեն տաքացվում, և այս պայմաններում գրոսանքն որական ընդամենը մի ժամ է տևում: Քաղբանտարկյալների և իրենց ազգականների ջանքերով կազմակերպված հագուստի վերանորոգման ու այլ սեփական արհեստանոցները, և մեծամեծ զոհաբերություններից հետո ձեռք բերած փոքրիկ գրադարանը, վորտեղ նրանք զբաղվում եյին մտավոր և ձեռքի աշխատանքով, փակված են: Փակված է նաև նրանց կազմակերպած խոհանոցը: Բոլոր տեսակի թերթերն ու ամսագրերն արգելված են: Սնունդը խայտառակ վիճակում է: Բանտարկյալը սովամահության դուռն է հասել. Հարազատների և բարեկամների բերած մթերքների և իրերի հանձնումը յերբեմն սահմանափակվում է, յերբեմն էլ այդ մթերքներն ուղղակի խլվում են:

Բանտարկյալների մեծամասնությունը հիվանդանում է թոքախտով և այլ հիվանդություններով. բժշկական ոգնություն համարյա չկա, վորովհետև բժիշկն ամսական մի անգամ է միայն հիվանդանոց այցելում:

Դովթանի բանտի բոլոր քաղբանտարկյալները, վոր ազատվում կամ նոր են ընդունվում, յերկաթե մուրճերով, կամ ձողերով ու այլ բաներով ծեծվում—արյունաշաղաղ են արվում. Նրանց շղթայակապում և գցում են իրենց բարբարոսությամբ հանրածանոթ՝ ցեմենտեհատակ սենյակը, վոր նախորոք ջրվում է: Այստեղ նրանք մնում են առանց լույսի, ցուրտ տեղը, խայտառակ կեղտի մեջ, յերբեմն էլ՝ նույնիսկ առանց ուտելիքի: Մարդու առողջությունն ու ջղեր քայքայող այս ռեժիմի դեմ չնչին բողոք անելու դեպքում քաղբանտարկյալները յենթարկվում են ամենադաժան պատիժների—ծեծից մինչև «մահվան» կամերան ներառյալ: Կալանավորներից վոմանք խելագարվում են: Այուդայում, Սարու-Մարեյում, Ցասանում, Քիշինևվում և այլ քաղաքներում էլ նույն ռեժիմն է, յերբեմն նույնիսկ ավելի դաժան:

Ռեժիմը դաժան է նաև կին բանտարկյալների վերաբերմամբ՝ Միսլեյում: Այն աննշան թեթևությունները, վոր ծանր զոհաբերություններից հետո, մասամբ էլ հասարակական բողոքի հետևանքով են ձեռք բերված, կամ սահմանափակվում կամ վերացվում են և փոխարինվում ավելի դաժան ռեժիմով, ավելի մեծ անարխիայով:

Այս վայրագ ռեժիմի դեմ մենք մեր բողոքն ենք հայտնում և պահանջում ենք անհապաղ վերացնել այն:

Իրավաբաններ՝ Վ. Գերասիմ,
Ս. Նիտուշեսկու
Պավել Մոսկովիցի
Պ. Գրոզդես

Ծանոթ.— *Այս բողոքին միացել են նաև ռումինական ինտելիգենցիայի 85 ներկայացուցիչ՝ գրողներ, թղթակիցներ, գեղարվեստագետներ, դերասաններ և իրավաբաններ:*

Հրատարակված «Դիմինեաա» լրագրի 1933 թ. դեկտ. 12-ի համարում:

ԶՈՆՆԵՆԲՈՒՐԳ ՃԱՄԲԱՐԸ

ԶՈՆՆԵՆԲՈՒՐԳԸ ՎԱՐԱԿԻ ՈՋԱԽ Ե

Յես մեկն եմ այն տասնյակ քաղբանտարկյալներից, վոր Գերմանիայում հիտլերյան ռեժիմ սահմանելու որից տառապել եմ ֆաշիստական բանտերի վանդակներում։

Յես յոթ ամիս Զոննենբուրգ (Նեյմարկ) համակենտրոնացման ճամբարի բանտային զգեստ եմ հագել։ Այս ճամբարի յերկտակ պատերի ներսը մոտ հազար քաղբանտարկյալ կա։ Գերմանիայում Զոննենբուրգի մասին խոսելիս «Զոննենբուրգ դժոխք» ասելուց բացի, ուրիշ բան չեն կարողանում ասել։ Շնորհիվ այն բանի, վոր պայմանները բացառիկ բարեհաջող ընթացք ունեցին, յես հաջողեցրի այնտեղից փախչել։ Այս գրքում յես մի քանի եպիզոդ կպատմեմ, վոր այդ դժոխքում եմ անցկացրել։ Յես կպատմեմ առանց վորևե բան ավելացնելու և առանց գույն տալու, վորովհետև վոչ մի, նույնիսկ կատարելագործված ֆանտազիա չի կարող մտածել այն, վոր այնտեղ ե կատարվել և այժմ կատարվում ե։ Յես հաճախ սարսափում եմ, յերբ հիշում եմ այն սարսափներն ու տանջանքները, վորոնց բանտարկյալներն են յենթարկվում, բայց փախուստից առաջ յես նրանց հանդիսավոր կերպով յերդվեցի, վոր ամբողջ Յեվրոպան, ամբողջ աշխարհը կլսի այն աղաղակները, վոր Զոննենբուրգի դժոխային բանտից են տարածվում։

Զոննենբուրգը յերկարատև կամ ցմահ դատապարտված քրեական հանցագործների բանտն ե։

Անցյալ տարիները, յերբ բանտը դեռևս «շահագործվում» եր, այդ «մեռյալ տան» մեջ հինգհարյուր վաթսուն հոգուց ավելի մեռան կամ անձնասպանություն գործեցին։ Բանտին կպած գերեզմանոցը մարդկային վողբերգությունների կենդանի վկան ե։ 1930 թ. Զոննենբուրգի բանտարկյալների մեջ լուծ և գրիպ հիվանդությունների կատաղի համաճարակ եր ընկել, վոր խմելու ջրի վատորակության ու շենքի անտանելի խոնավության պատճառով եր առաջացել։ Կառավարությունն ստիպված յեղավ բանտը փակել. ուրիշ ճար չկար։

Վարակի այս բույնը, այս հակասանիտարական, խոնավությունից ու կեղտից բորբոսնած այս շենքը հիտլերյան կառավարությունն ե ընտրել՝ համակենտրոնացման ճամբար պատրաստելով քաղբանտարկյալների՝ կոմունիստների, սոցիալ-դեմոկրատների, հակաֆաշիստների ու հրեյաների համար։ Ըստ ճամբարի ղեկավար կազմի յեզրակացության, խմելու ջուրն այնտեղ դեռ այժմ ել թունավոր ե, և բանտարկյալներին վճռականապես արգելված ե այդ ջուրը խմել։ Դժվար չի հասկանալ, թե ի՛նչ հրեշավոր բան ե այդ արգելքը ճամբարում, վորտեղ հազար հոգի շաբաթներ, ամիսներ, կարող ե պատահել՝ նույնիսկ տարիներ պետք ե անցկացնեն։

ԶՈՆՆԵՆԲՈՒՐԳ ԳԱԼԸ

Բանտարկյալների առաջին խումբը Զոննենբուրգ բերվեց 1933 թ. ապրիլին՝ բեռնատարներով ու վոստիկանական սայլերով՝ վոստիկանության ու գրոհային ջոկատների հսկողությամբ։ Ճանապարհին քաղբանտարկյալներն ստիպված եյին սայլերի մեջ յերկար ու ձիգ ժամեր կանգնել անձրևի հեղեղի տակ։

Ճամբար հասնելուն պես մեկեն սկսեցին առաջին ծաղրանքներն ու ռազմական վայրագ մարզանքը։

Բանտարկյալների հետևյալ խմբերը, վորոնց հետ նաև մերը, վոր նույնպես ապրիլին տեղ հասավ, յերկաթուղով բերվեցին։ Բեռլինի Շպանդաու Լերտերշտրասե, Ալեքսանդերպլատց և Պլյոցենզեե բանտերից բանտարկյալները Սիլեզի կայարան եյին բերվել։ Յերբ մենք

«կանաչ մինման»*) թողինք, ամեն մեկիս շղթայակապ արին և ամեն մի «հանցագործիս» մոտ մի հատուկ պահակ դրին։ Այսպես շղթայակապ՝ մենք կայարանից անցանք դեպի բանտի վագոնը։ Լուռ ու վշտացած տղամարդիկ և բանվորուհի կանայք արտասուքն աչքերին կանգնել էյին կայարանում։

Բանտի վագոնը փոքրիկ վանդակներից է բաղկացած։ Ամեն մի վանդակի մեջ, իրար պինդ կպած, կարող են յերկու բանտարկյալ կացնել։ Այսպես գնացինք մենք մինչև Զոննենբուրգ, այդ դժոխքը, վորն ստիպեց բազմաթիվ գլուխներ սպիտակել, վորտեղ շատերն սպանվեցին կամ այլանդակվեցին։

Զոննենբուրգի կայարանում մեզ շրջապատեց համակենտրոնացման ճամբարի պահպանությունը (стража)—ֆաշիստ գրոհայինների բութ ու փայրագ բանդան՝ լցրած կարաբիններով, վոր նշան էյին բռնել։ Վոստիկաններն ու գրոհայինները բղավում էյին.

— Կրունկները միասին, կոմունիստական կեղտոտ խոզեր։ Պատվի՛ կանգնիր սրիկա։

Մեզ չորս-չորս կանգնեցրին ու գյուղի միջով տարան ճամբար։

Պահակապետը բղավում եր.

— Ազգային հիմն։

Շատերն այս հիմնը չգիտեյին։ Առաջին հարվածները տեղացին։ Հրացանների կոթերը բանտարկյալների մեջքերին ղրոսանք էյին կատարում, բռունցքները ջարդում-դեմքերն արնլվիկ էյին անում։ Ով չեր կարողանում արագ մարդանքի քայլքով շարժվել, գրոհայիններից կամ պահնորդայիններից քացի յեր ուտում՝ տակն ամուր մեխեր խփած կոշիկներով։ Զոննենբուրգի բնակչությունը լուռ եր։ Վարագուրած լուսամուտներից մռայլ դեմքեր էյին յերևում։

Վիրավորանքների, ապտակների, հրացանների կոթերի հարվածների կարկուտի տակ մեր ջոկատը վերջա-

*) Բանտային ավտոմոբիլին տրված կոչում

պես մտավ բանտի բակը։ Խուզարկություններից հետո բանտարկյալներին հայտարարեցին, թե ով ուզում է իր վիճակը թեթևացնել, իր ազգականներին պետք է գրի, վոր Զոննենբուրգում տեղի ունեցող ծեծերի ու տանջանքների մասին յեղած պատմությունները մտացածին են և սուտ։ Իսկ ով այս բանը չի կատարի, մեղքն իր վիզը։

Բանտարկյալների առաջին խումբը շատ յերկար քնեց րաց հատակին, նույնիսկ առանց ծղոտի։ Մի անգամ յերբ բանտարկյալներն սկսեցին քնելու համար բակից ծղոտ տանել իրենց բնակարանները—ահա այդ ժամանակ միջանցքները, սանդուխքներն ու բակը գրոհայիններով լցվեցին։ Նրանք իրարից մի-մի մետր հեռու տողաններ կազմեցին և բանտարկյալներին աթոռներով, յերկաթե տարորեաներով և փայտե ու ռետինե մահակներով ծեծեցին։ Ընկերներից շատերն այդ օրն այն աստիճան այլանդակվեցին, վոր հարկ յեղավ փոխադրել բանտի՝ աչքաթող արած ու կեղտոտ հիվանդանոցը։ Այս առաջին տանջանքը մեխի պես ցցվեց Զոննենբուրգի բանտարկյալների հիշողության մեջ։ Բանտի լեզվով բանտարկյալներն այս տանջանքն անվանում են «առաջին ծղոտե վայլս»։ Մոտենում եր Ադոլֆ Հիտլերի ծննդյան տոնակատարությունը։ Առավոտյան ժամը 5-ին և յերեկոյան ժամը 11-ին մեզ պոկում էյին մեր չարժական մահճակալներից կամ ծղոտ լցրած մեշոկներից և մենք ստիպված էյինք լինում մերկաշապիկ դիք կանգնել մեր անկողինների մոտ։ Կիսագրագետ մի գրոհային բարձրանում եր աթոռին և մեզ, վոր ցրտից ատամներս չխկչխկում էյին, սովորեցնում եր ազգային հիմնի բառեր ու մեղեդիներ։ Այս դասերն անսահման, սիրտ խառնելու, սիրտ թափելու աստիճան յերկար էյին տևում։ Պահակապետն այդ ժամերին սենյակները պետք է ստուգեր, և նրա ստորադրյալներն ամեն կերպ, շտապ-շտապ աշխատում էյին հաճոյանալ իշխանության։ Զե՞ վոր նրան դուր պետք է գար «ժողովրդական կանցլեր Ադոլֆ Հիտլերի» ծննդյան տոնակատարության պատրաստվե-

լու «բարեկամական միավորությունը»: «Ի պատիվ Ադոլֆ Հիտլերի» արտասանած հանդիսավոր ճառի ժամանակ, վորով վերջանում եյին այդ դասերը, մի քանի վոստիկան ու գրոհային վխտում եյին քաղբանտարկյալների շարքերի արանքներում և, վորսի շան պես, ամեն մեկին տնտղում, վոր տեսնեն թե չծիծաղե՞ց արդյոք մեկն ու մեկը, ուսերը վեր չքաշե՞ց, կամ քիթ ու մռութը չհավաքե՞ց, յերբ ճառախոսը «ժողովրդական կանցլեր Հիտլերի» մասին եր խոսում կամ հայտարարում, թե՝ «Հիտլերը հաց և աշխատանք կտա»:

Բազմազանության համար, հենց սկզբի յերեկոները կամերից կամեր լուրեր եյին տարածվում՝ «Վաղը առավոտյան 4-ին գնդակահարելու յեն յուրաքանչյուր տասներրորդ բանտարկյալին»: Առավոտյան բանտարկյալները, յերկար ու անքուն գիշերներից տանջված, շինությունից դուրս եյին վռնդվում, և սկսվում եյին այն տանջանքները, վոր առաջին որերից հիմք են հանդիսանում Զոննենբուրգի դաժան, ծաղրող ռեժիմի, այն ե՝ —«պառկիր, կանգնիր»–ը, «պառկիր, կանգնիր»–ը (բանտարկյալները կայծակի արագությամբ պետք ե կատարեն այս հրամանը—փորի վրա ընկնեն գետին ու կանգնեն պատվի առած):

ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԱՍՏԻՃԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս դաժան ռեժիմը, ինկվիզիտորների տեսակետից, բանտարկյալներին պետք ե սանձի ու բարոյալքի, նրանց մեջ խեղդի դիմադրության բոլոր ձգտումները: Բանտարկյալների առաջին խմբի վզին փաթաթած ռազմական վարժություններն այն աստիճան տանջալի եյին, վոր ընկերներից շատերը հոգնածությունից ուշաթափվում եյին: Վարժությունների արանքում անվերջ կրկնվում եր այս հրամանը․

— Մարզանքի քայլերով, մա՛րշ:

Ռազմական խստավարժությունն այնքան եր տևում,

մինչև վոր տասնյակ բանտարկյալներ գիտակցությունը կորցում եյին: Քաղբանտարկյալներին մի քանի ամիս շարունակ ստիպում եյին ավազի ու ցեխի մեջ սեփական հագուստով թավալել, վոր շուտով դարձան ցնցոտիներ, և յերկարատև բողոքներից հետո միայն բոլորին կոշտ գործվածքից հագուստ տվին:

ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐՆ ԻՐԵՆՔ ԵՆ ԻՐԵՆՑ ԳԵՐԵԶՄԱՆ ՓՈՐՈՒՄ

Զոննենբուրգ ճամբար գնալու առաջին որերից կոմունիստները, ձախ փաստաբաններն ու հակաֆաշիստներն անլուր տանջանքների եյին յենթարկվում:

Առանձնապես տառապում եյին նախկին կոմունիստ պատգամավորները՝ Շնելլերը, Կասպերն ու Ոբուխը, Երրիխ Մյուզամը, փաստաբան Լիտգենն ու գրող Ոսիցկին: Որինակ՝ Երնստ Շնելլերին իր կամերում հաճախ այնքան եյին ծեծում, վոր գիտակցությունը կորցնում եր:

Ծեծելու ժամանակ նրան ստիպում եյին հարվածները համրել:

Բայց ֆաշիստներն ամենից շատ ծաղրում եյին կոմունիստական ֆրակցիայի նախկին նախագահ Վիլլի Կասպերին, վորին վորոշել եյին կենդանի բաց չթողնել Զոննենբուրգից: Հրեյա Ռուդի Բերնշտեյնին այնքան եյին ծեծել, վոր յերկար ժամանակ ու խոր վերքերով պառկած եր Բեռլինի քաղաքային հիվանդանոցում: Հռչակավոր գրող Երրիխ Մյուզամը մշտական թշնամանքի ու ծաղրանքի առարկան եր: Նրա մազերը քաշում եյին ու մորուքը պոկոտում: Նա և Ոսիցկին Զոննենբուրգ բերվեցին արդեն սարսափելի վիճակում: Մայիսի լույս 17-ի գիշերն Երրիխ Մյուզամին իր կամերում դարձյալ տանջում եյին: Հաջորդ որը նրան ճանաչել անկարելի յեր: Նա պառկած եր հիվանդանոցում և չեր կարողանում բերանը բանալ, վոր գոնե մի խոսք ասեր:

Այս բոլոր տանջանքները ճամբարապետ լեյտենանտ

Գեսելերի ղեկավարությամբ եյին տեղի ունենում: Ալբելին փաստաբան Լիտտենը, Վիլլի Կասպերը, Երնստ Շնելլերն ու Երրիխ Մյուզամն*) արևմտյան կորպուսի պատի յերկարությամբ իրենց համար գերեզման պետք է փորեյին: Բոլոր բանտարկյալներին չարք եյին կանգնեցրել կորպուսի բակում և ստիպում եյին նայել, թե ինչպիսի վայրագությամբ են ծեծում ու տանջում իրենց չորս ընկերոջը: Նրանց գնդակահարելուց առաջ, վերջին րոպեյին մեջ մտավ ինչ-վոր մեկի կողմից նախազգուշացված մի վոստիկան և «գազանությունների դեմ մղվող կամպանիայի» նոր ալիքի յերկյուղից խանգարեց գնդակահարությունը:

Վոստիկաններից մեկը նկարել եր այն տեսարանը, յերբ չորս բանտարկյալ Զոննենբուրգի բակում իրենց համար գերեզման եյին փորում: Ինչպես հետո իմացանք, լուսանկարի թիթեղը վարչական կարգով գրավված է յեղել, «վոր արտասահմանում հարձակումների տեղիք չտրվի»:

Զոննենբուրգում բազմաթիվ բժիշկներ, փաստաբաններ, լրագրողներ, գրողներ ու պառլամենտի նախկին անդամներ կան, վորոնց հետ ամենավայրենի ձևով են վարվում: Այնտեղ են՝ «Վելտբյունե»-ի նախկին հրատարակիչ Ֆոն-Ոսիցկին, Բենժամեն և Երվին Մյուլլեր բժիշկները, տասնյակ կոմունիստ պատգամավորներ, սոցիալ-դեմոկրատ չարքայիններ, Ռայխստագի, Լանդտագի ու քաղաքային խորհրդի ներկայացուցիչները:

Այս ընկերներին տանջելու փորձված միջոցը «հարցաքննության կանչելն» եր: Որինակ՝ նրանց հարցնում եյին.

— Դու դեռ կոմունի՞ստ ես:

Յեթե հարցաքննվողը «այո» պատասխան եր տալիս,

*) Նախկինում մա թերթերը լուրեր են բերել Երրիխ Մյուզամի «ինքնասպանության» մասին: Ակներև է, վոր քաղբանտարկյալին ղաղիր ինքնադատաստան անելու մի փաստ ել ունենք:

ապտակներն ու մահակի հարվածներն անձրևի պես տեղում եյին նրա գլխին:

— Վո՞նց թե, խոզ, դու դեռ կոմունի՞ստ ես:

Յեթե հարցաքննվողը «վոչ» պատասխան եր տալիս, նա ել նույնն եր ստանում: Նրա վրա բռունցքներով եյին հարձակվում ու վոտքերի տակ տրորում:

— Վո՞նց թե, սրի՛կա, քաջություն չունե՞ս խոստովանելու, վոր կոմունիստ ես:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋՆԱԴԱՐԸ

Զոննենբուրգի վայրագ ռեժիմի պատմությունն ամենավայրագ գլուխն է այն տանջանքների ու սիստեմատիկ չարչարանքների, վորոնց յենթարկվում են բոլոր նորեկները:

Ամենասարսափելին այն է, վոր բոլոր տանջանքները վորոշ ծրագրի մեջ են մտցված, վաղորոք մշակված սիստեմով են հաջորդում: Զոննենբուրգի պարետն այս տանջանքների համար Արևելյան և Արևմտյան կորպուսների նկուղներում հատուկ տեղեր է նշանակել: Բանտարկյալներն այս տեղերի անունը դրել են «չարչարանքի կամերներ»: Ամեն մի նորեկ ժամանակակից ինկվիզիցիայի այդ կամերաներում յերկու կամ յերեք շաբաթ պիտի անցկացնի, նախքան հուսալը, թե կարող է «նորմալ» կամեր կամ հանրակացարան փոխադրվել: Որական հինգ, տաս, շատ անգամ՝ յերեսուն նորեկ են ուղարկում «չարչարանքի կամերները»:

Մարդկանց Զոննենբուրգ առողջ են բերում: Մի քանի րոպեյից հետո բանտի բակով նրանց այնպես են քշում, կարծես կատաղած շուն լինեն:

Քացիներն ու բռունցքներն անդադար տեղում են: Յերբ մարդիկ վերջնականապես ուժասպառ են լինում ու ընկնում, քարշ են տալիս կարցեր: Յերկաթե ճիպոտներով, մահակներով, հրացանի կոթով, բռունցքներով այնտեղ այդ մարդկանց այնքան են ծեծում, մինչև վոր ականջներից ու քթից արյուն է գալիս, մինչև վոր խոր

վերքերը ծածկում են նրանց գլուխը, ուսերն ու մեջքը: Հետո դահիճները թողնում գնում են: Միառժամանակից հետո, յերբ բանտարկյալները մի քիչ ուշքի յեն գալիս և արդեն կարող են վոտքի վրա կանգնել, նրանց պահեստ են տանում ու կոշտ կտորից՝ կալանավորի խալաթ հագցնում: Յեվ ահա այն մարդիկ, վոր չեյին յերևակայում թե իրենց ինչ է սպասում և վոտք եյին դրել Զոննենբուրգի դժոխային շեմքն առողջ ու ամրակազմ, բակի միջով նորից գնում են իրենց կամերաները: Այժմ նրանք վոտքի վրա հազիվ են կանգնում: Փոս ընկած աչքեր, արյունախեղդ դեմքեր, գլխին՝ խուրձով պոկած մազերի հետքեր:

Յերեկոյան ռազմական ուսուցումն է սկսվում: Նրանց չորս-չորս սյունաշարքի յեն կանգնեցնում: Լսվում է ականջ ծակող հրամանը.

— Ո՛ւ-ղի՛ղ- Թո՛ղ-ե՛ք-

Հետո այդ ուժասպառ մարդկանց ստիպում են մարզանքի քայլքով վազել բանտի բակի շուրջը: Պարետը վորոտում է.

— Պա՛ռ-կի՛ր: Կա՛նգ-նի՛ր:

Հարյուր-հազար անգամ ստիպված ես լինում պառկել գետնին ու վեր կենալ: Հետո՝ նորից մարզանքի քայլք: Առաջին զոհերը վայր են ընկնում ուժասպառ: Բակն արյունը բռնել է:

— Կա՛նգ-նի՛ր,—բղավում է ֆաշիստական յենթասպան գիտակցությունը կորցրած բանտարկյալի վրա:— Կա՛նգ-նի՛ր, խոզի մռութ:

Ու յերկաթե գամերով պայտած կոշիկն անխնա իջնում է պառկածի մարմնին: Վերջինս կյանքի նշանները չի կորցնում, և հրամանատարը գոռում է.

— Ծորակի տա՛կ:

Չորս բանտարկյալ վերցնում են գիտակցությունը կորցրած ընկերոջն ու տանում ծորակի տակ: Ջուրը խփում է աչք ու յերեսին, մարմնին, բերանն ու ականջներն է լցվում, և առաջ է գալիս ցնցող հազ: Մի քանի

րոպեյից հետո, յերբ թշվառն աչքերը բաց է անում, հրամանը նորից է լսվում:

— Կա՛նգ-նի՛ր: Մարզանքի քայլքով մա՛րշ:

Ու նորից.

— Պա՛ռ-կի՛ր: Կա՛նգ-նի՛ր:

ԵՒս մի քանի րոպե, և բանտարկյալը նորից ուշաթափ վայր է ընկնում և քարերին խփվելով՝ արյունալվիկ դառնում: Նրանց նորից են քարշ տալիս ծորակի տակ: Ջուրը շռռում է: Ցրխկացնելով, թափահարելով, ձեռքերը ձիգ տալով՝ զոհին նորից են ուշքի բերում: Յեվ այսպես այնքան է տևում, մինչև վոր դահիճները մարդկային տանջանքներից կշտանում են, այնուհետև ծվեն-ծվեն արած բանտարկյալներին տանում են կամերաները: Բայց այս դեռ վերջը չի: Չարչարանքի գիշերն է սկսվում: Այս առաջին գիշերը բանտարկյալներն ամենից շատ վճռում են ինքնասպանություն գործել, միայն թե տանջանքներ այլևս չքաշեն:

Մի քանի օրինակներ ևս, վոր ապացուցում են, թե ֆաշիստ դահիճներն ի՛նչ վայրագությունների յեն ընդունակ:

Բանտարկյալները ծալապատիկ այնքան պետք է նստեն ոդանցքի առաջ, վորից փչում է, մինչև վոր նրանց հոդերը վերջնականապես փայտանան: Այս անգամ նրանց ստիպում են գորտի պես ցատկոտել: Յեվ զոհերը, վորոնց հոդերը ցրտից ու լարվածությունից այլևս չեն ծալվում, հենց առաջին ցատկելուց ընկնում են հատակին ու գլուխները ջարդում:

Պահնորդ՝ դահիճ Աբրիանն ու իր կամակատարները հաճախ են վազ տվել հիվանդանոց՝ ասեղի: Այդ ասեղները նրանք ճխտում եյին ոդանցքի առաջ ծալապատիկ նստած կամ բակում ցատկոտող մարդկանց մեջքը, փորն ու սեռական անդամները: Այս չարչարանքների ժամանակ բանտարկյալների ճիչն ու տնքոցները ճամբարի սահմաններից շատ հեռու եյին գնում: Կարելի յե, թերևս, ասել, վոր ուշաթափությունների ու վիրավորվելու մեծ մասը հենց այդ տանջանքների արդյունքն է:

Հաչակավոր «մարզանքի քայլքի» ու «պառկի՛ր, կանգնի՛ր»-ի ժամանակ շատ անգամ վեց-յոթ բանտարկյալ բոլորովին ուշաթափ՝ գետին եյին գլորվում: Քրտնած, տաքացած՝ նրանք 20–30-ական րոպե պառկում եյին սառն ու խոնավ քարերին: Խիստ և խիստ արգելվում եր ուշադրություն դարձնել այդ «սիմուլյանտներին»: Յեվ մենք հաճախ ականատես ենք յեղել այն ներկայացումներին, վոր նույնիսկ նորմալ մարդու յերևակայությունն անգամ չեր կարող պատկերացնել:

Բանտարկյալները զույգ-զույգ պետք է չորեքթաթ կանգնեյին: Յուրաքանչյուր զույգի մեջքին մի ուշաթափված ընկեր եյին դնում: «Դեպի առաջ մարշ» հրամանը տալուն պես նրանք չորեքթաթ պետք է սողային բանտի ամբողջ բակով, և այն զույգը, վոր մյուսներից շուտ եր հասնում բանտի պատին, «հատուցում» եր ստանում. այդ որը նրան ազատում եյին հետագա մարզանքից ու խստավարժությունից:

ՅԵՐԵՔ ՀՐԵՅԱ ՍՏԻՊՎԱԾ ԵՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼ

Սեպտեմբերին մի քանի պահնորդ ու ժանդարմ հանդիսավոր կերպով Զոննենբուրգ քարշ տվին մի հրեայի՝ իր յերկու տղայի հետ: Հայրը մոտ հիսուն տարեկան եր, մեծ տղան՝ մոտ յերեսուն, փոքրը՝ քսան: Գրոհայինների մեջ կայծակի արագությամբ լուրը տարածվեց՝ «Յերեք ջհուդ խոզ են յեկել»:

— Հիմա մենք նրանց հաշիվը կքաշենք,—հրճվում եյին ֆաշիստները: Հրեային ու իր տղաներին սկզբից տարան գրանցման բաժին: Պատահմամբ այնտեղ ներկա յեղող բանտարկյալները լսել եյին, թե ինչպես են «Զոննենբուրգի լավ-լավ բաներից շատ բան» խոստացել նրանց: Բանտարկյալներն արևելյան կորպուսի բակից տեսել եյին, թե հետո յերեք հոգու ինչպես տարան այդ կորպուսի կարցերը: Յերեքն էլ միանգամայն առողջ ու անվնաս եյին:

Բայց մի քանի ակնթարթից հետո արևելյան կոր-

պուսի նկուղից ճիչեր ու օգնության աղաղակներ լսվեցին: Մի խումբ պահնորդ՝ ռետինե մահակներով ու յերկաթե ճիպոտներով զինված, Աբրիանի գլխավորությամբ՝ գնացին դեպի մենարան կարցերները, վորտեղ յերեք հրյան եյին: Ներածական ինկվիզիցիան եր սկըսվում այդ: Չնայած՝ դռները պինդ փակ եյին թշվառների ճիչն ամբողջ արևելյան կորպուսում ու բակում լըսվում եր և հիվանդանոց ու հյուսիսային կորպուս եր հասնում:

Միառժամանակից հետո նրանց ստիպեցին պահեստ գնալ և հագուստ, աման ու անկողին ստանալ: Բայց հայրն արդեն վիրավոր՝ պառկած եր իր կամերի հատակին ու նույնիսկ չեր կարողանում շարժվել, էլ ո՞ւր մնաց, վոր տրված հրամանը կատարեր:

Իրերը պետք է բերվեյին նրան: Յերկու տղան, ծեծված-ջարդված, գլուխներն, աչք ու յերեսներն ու մեջքերն արնաշաղախ վերքերով պատած, աչք ու յերեսներն այն աստիճան ուռած, վոր նույնիսկ մի ժամ առաջ տեսնողները չկարողացան ճանաչել, յերերալով անցան բակի միջով:

Յերեկոյան մի սարսափելի տեսարան տեղի ունեցավ: Ժամի 8-ին, չնայած սարսափելի դրության, թըշվառ հրեաներին քարշ տալով բերին բակն ու ստիպեցին մյուս «նորեկների» հետ միասին «մարզանք» կատարել: Նրանց ստիպում եյին գժի պես՝ մարզանքի քայլքով վազել բակի շուրջը: Աբրիանն ու իր կամակատարները բռունցքով ու մահակով խփելով՝ քշում եյին յետ մնացողներին: Անվերջ լսվում եր «Պառկի՛ր, կանգնի՛ր» հրամանը, վոր Աբրիանը նաև համեմում եր հրեաների հասցեյին ուղղած հայհոյանքներով ու վիրավորանքներով:

— Կեղտո՛տ խոզի ջհուդ, դու քրիստոնյա տղաների յես սպանել: Ու-ու՛, ջհո՛ւդ շանվորդի: Դու գերմանացի բանվորներին մատնել ես:

Ուշաթափությունները շուտով սկսվեցին: Հրեաներին, վոր գիտակցությունը կորցրած՝ գետին եյին

թափվել, քարշ տվին ծորակի տակ: Շորերով ու վոտնամաններով նրանց դրին ծորակի տակ: Սըրխանը սեփական ձեռքով նրանց բուժում եր ապտակներով ու կսմթոցով: Հենց վոր նրանք աչքները բաց արին, դահիճը հրճվեց:

— Տեսնո՞ւմ եք, ջհուդներն արդեն առողջ են:

Ու նորից լսվեց հրամանը:

— Շա՛ր-քի՛: Մարդանքի քայլքով մա՛րշ առաջ:

Թշվառները գլորվելով մի քանի տասնյակ քայլ ել քարշ յեկան, ու նորից ուշաթափություն, նորից ապտակներ, կսմթոց, ջուր, և այսպես առնվազն հինգ-վեց անգամ:

Այդ որից առաջին անգամ մի չարչարանք ել գործ դրվեց, վոր հետագայում հաճախ կիրառվում եր. Ֆաշիստներն սկսեցին մյուս բանտարկյալներին ստիպել, վոր հրեյաներին ծեծեն: Ով փորձեց հրաժարվել, դաժան կերպով ծեծվեց: Թեև հետագայում այս սիստեմը հաճախ եր կիրառվում, բայց պարծանքով կարելի յե ասել, վոր բացի ճամբարի քրեական տարրերից վոչ վոք այդ սիստեմին չեր մասնակցում:

Կոմունիստ բանտարկյալներին հաճախ ծեծում–կիսամեռ եյին դարձնում ու գցում արևելյան կորպուսի կարցերները, բայց քաղբանտարկյալներից վոչ վոք իր ընկերոջը չխփեց: Կալանավորված հրեյաներն ու մյուս բոլորը ժամ ու կես կամ յերկու ժամ չարչարանքից հետո վերադարձան իրենց կամերները, և այն ժամանակ միայն ֆաշիստների վայրագությունն սկսեց իր գագաթնակետին հասնել: Յերբ արևելյան կորպուսի կամերների ճրագները հանգցրին, մի քանի պահնորդ խուժեցին կրտսեր հրեյայի կամերը: Աննկարագրելի տանջանքներից ու կտտանքներից հետո, սադիստական վանող տեսարաններից հետո պահնորդների բանդան վերմակը գցեց պատանու գլխին ու «Գերմանական ազգի հերոսները» Յերրորդ կայսրության «կուլտուրայի պիոներները» բռնաբարեցին թշվառին: Նույն որը հայրն ու յերկու վորդին փորձեցին վերջ տալ իրենց: Առաջինը

փորձեց կախվել, իսկ վերջինները՝ իրենց յերակները կտրել: Նրանց խանգարեցին վերջին րոպեյին: Հաջորդ առավոտը Զոննենբուրգի վողջ բնակչությունն արդեն գիտեր անցյալ գիշեր տեղի ունեցած անցքերը: Այս լուրերը գրոհայիններն եյին տարածել, վոր թունդ ասում եյին իրենց «սև յեղբայրներին», վորոնք իրենց մոտ կոնտրոլ են դրված:

Նույն առավոտ հիվանդանոցի պետը՝ պահնորդը, վորի պարտականությունների մեջ է մտնում բանտարկյալների տառապանքները թեթևացնելը, պետք է զբաղվեր հրեյաներով: Նրան բերին այն մարդու մեզը, վոր ամենավայրագ կերպով եր բզկտված: Ցինիկորեն ժպտալով՝ հաշիշ ծխողի աչքեր ունեցող այդ ղասաբը (մսագործ) ատամների արանքից ճռռաց:

— Մեզի մեջ վոչ պակաս քան 25 տոկոս արյուն կա:

Բանդաներն իրենց նպատակին հասել եյին: Պատանի հրեյայի յերիկամունքներն ամբողջովին ջնջխվել եյին: Մինչև իր կյանքի վերջը նա հաշմանդամ դարձավ:

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՄԻ ԲԱՆՎՈՐ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԵՐՋ ԴՐԵՑ ԿՅԱՆՔԻՆ

1933 թ. ոգոստոսի 10-ին մի քանի սոցիալ-դեմոկրատ բանվոր բերին Զոննենբուրգ: Հենց նույն յերեկոյան ել սկսվեցին նորեկների համար ծրագրով նախատեսնված չարչարանքները:

Չարչարվողների սիրտ կրծող ճիչերը բանտի ամբողջ բակը լցրել եյին: Այդ ժամանակ գլխավոր դահիճը Ոդերի Ֆրանկֆուրտցի հռչակավոր պահնորդ Մակս Մյուլերն եր:

Արյունակալած աչքերով նա որեցոր հետևում եր, թե բանտարկյալներն ի՛նչպես են ուժից ընկնում, և հրճվում եր իր զոհերի ցավից առաջացող ճչոցներից: Բանտարկյալներից մեկը, 40 տարեկան սոցիալ-դեմոկրատ մի բանվոր, բացառիկ դաժան տանջանքների յենթարկվեց: Հետևյալ առավոտ սոցիալ-դեմոկրատ բանվորին

կախված գտան արևելյան կորպուսի իր կամերում, վոր տեղ նա բանտարկված էր: Վոչ այս դեպքում, վոչ էլ նախորդներում, ընկածի վրա բժշկական քննություն չկատարվեց: Այդ ժամանակ սկսվեց պահնորդային ջոկատների արձակումը: Մակս—Մյուլերն ուզում էր անլուր դաժանություններով իրեն ապահովել արձակումից այնպիսի մի շնորհագիր ստանալ, վոր հնարավորություն տար տեղափոխվել հանրային ապահովության ջոկատը: Այս պատճառով՝ դաժանությունների ու ծաղրանքների նոր ալիք անցավ ամբողջ ճամբարով, բայց այդ օրերը գրոհայինների ու պահնորդների մեջ մենք առաջին անգամ մի քանի մարդ տեսանք, վոր մի տեսակ աշխատում եյին քաղբանտարկյալներին օգնել և իրենց ընկերների դաժանություններից զայրանում եյին: Այս գրքում նրանց անունները չեն կարող գրվել, բայց դեպի այդ մարդիկ ունեցած գոհունակությունն ընդմիշտ կմնա բանտարկյալների սրտում:

ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄՄԵԼՆ ՈՒ ՎՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐ

Դժվար է յերևակայել, թե ի՛նչ հանցագործ տիպեր կան թաղնված գրոհայինների տարազի մեջ: Դժվար է յերևակայել, թե ո՛ւմն էր վստահված Զոննենբուրգի ճամբարի ղեկավարության ու հսկողության գործը: Ամենից առաջ գրոհայինների ղեկավար Համմելը ճամբարի վորոշ տեսակի փոխ-պարետ էր: Նա յերբ նորոգումների մի փոքրիկ արհեստանոց ուներ, դեռ այն ժամանակ նրան մեղադրանք էր առաջադրված յեղել դրամական փաստաթղթերի վրա ստորագրությունները կեղծելու համար:

Ճամբար նշանակվելով՝ նա էլի նույն բանով էր պարապում, դրամական գումարներ էր տակնաթաղ անում, չեքեր, ստորագրություններ էր կեղծում: Այս փաստաթղթերից մեկը բանտարկյալները պատահաբար տեսել եյին: Այս բոլոր բաներին խառն էր նաև պարետ

Բրյունինգը, բայց այդ նրան չէր խանգարում Համմելին իբրև օգնական պահել իրեն:

Աբրխանը՝ գրոհայինների նախկին ղեկավարը, վոր հիմա իջեցված է շարքային գրոհայինի պաշտոնի, այն Աբրխանը, վոր դեռ անցյալ տարի հոկտեմբերին Զոննենբուրգի գլխավոր դահիճն էր— ահա այդ մարդը Համմերշտեյնի համակենտրոնացման ճամբարի տեսուչ էր: Նա Զոննենբուրգ էր փոխադրված այն պատճառով, վոր այնպիսի սադիստություններով ու գազանություններով էր անուն հանել, վոր Ֆաշիստական ճամբարի պատերն անգամ չեյին կարող թագցնել:

Ճամբարի պարետի օգնական, վոստիկանության բրիգադիր Վագները մեղադրվում էր բավականին կեղտոտ մի գործի մեջ: Հուլիսի 31-ին գնալիս նա հետը տանում է այն դրամները, վոր պարետության դրամարկղ պետք է հանձնվեյին: Հոկտեմբերին դեռ հայտնի չէր, թե նա այդ փողերը վերադարձրե՞լ է, թե վոչ:

Մի գրոհայինից, վ ր նոր էր յեկել ճամբար, բանտարկյալներից մի քանիսն իմացան, թե ինչ հանցագործ տիպեր կան պահնորդների ու գրոհայինների մեջ, ումն է վստահված հակաֆաշիստների զինյալ պահպանության գործը: Այդ գրոհայինը մեզ պատմեց, վոր «կարգի արժանավոր պահապանների» մեջ մեծ թվով հին հանցագործներ կան, վոր Զոննենբուրգում բանտարկված են յեղել: Պահնորդները, վոր ապրիլին եյին Զ ննենբուրգ յեկել, շատ շուտով շրջապատվեցին Զոննենբուրգ ավանի վողջ բնակչության լուռ ատելությամբ: Բնակչությունը, մանավանդ յերիտասարդ կանանց, ահաբեկելու գործում վոստիկանությունն ու պահնորդներն իրար դեմ մրցում եյին: Մինչև ամռան վերջը յերիտասարդ կանանց բռնաբարելու շատ դեպքեր յեղան:

Այդ ժամանակամիջոցում պահնորդների մեջ մեկը կար, վոր առանձին դաժանությամբ էր աչքի ընկել՝ «պատերազմի հերոս» էր, առաջին կարգի յերկաթե շքանշանով էր պարգևատրված:

Մի անգամ թունդ հարբած՝ նա կարաբինն առավ—

պայթուցիկ գնդակներ լցրեց ու սկսեց կրակել դեպի պահպանության շենքի առաստաղը: Գնդակն առաստաղը ծակեց անցավ և տեղն ու տեղն սպանեց վերևի կամերում յեղած բանտարկյալին: Այս բանից հետո «պատերազմի հերոսը» գնաց արևելյան կորպուսը, այնտեղից դուրս քաշեց չորս քաղբանտարկյալի և սկսեց սովորական մարզանքը՝ «կանգնիր, պառկիր»-ը:

Այս վարժությունը սուր քարերի վրա յեր կատարվում, և յեթե վերջին բոպեյին մի վաստիկան կամացուկ չհանդստացներ «հրճված» պահնորդին հավանական է, վոր նա տեղն ու տեղը վերջ տար իր զոհին:

«ՓԱԽՉԵԼՈՒ ՓՈՐՁ ԱՆԵԼԻՍ» ԳՆԴԱԿԱՀԱՐՎԵԼ Է

Ամռան մի գիշեր արևմտյան կորպուսի բանտարկյալներին հանկարծ արթնացնում են: Գրոհայինների բանդան գոռում գոչումով խուժում է մի կամեր: Ողնության աղաղակներն ամբողջ շենքը բռնեցին:

— Վոչ, չեմ գա: Դուք ուզում եք ինձ գնդակահարեք:

Ընկերոջը կամերից զոռով դուրս քաշեցին, հետո գրոհայինները նրա հետ միասին կորան մթության մեջ: Բանտարկյալները, վոր իրենց կամերների լուսամուտներից տենդագին կերպով հետևում եյին ընկերոջը, մի առ ժամանակ դեռ ձայներ լսում եյին, հետո ամեն ինչ լռեց: Մոտ կես ժամից հետո հեռվից մի քանի խուլ կրակոցի ձայն լսվեց: Կրակոցները Լիմբից անտառից եյին գալիս: Յեվ նորից մեռելային լռություն տիրեց: Բանտարկյալները յերկու որ այս գործի մասին բան չլսեցին: Այնուհետև լույս տեսան «Անգրիֆ»-ն և «Ֆելկիշե Բեոբախտեր»-ը*) և մեծ-մեծ վերնագրերով նորություններ հրապարակեցին. «գրոհայինները պարզել են, վոր «կարմիր ճակատի» գործիչները մարդասպաններ են: Մի կոմունիստ փախչելու փորձ անելիս

*) «Անգրիֆ» և «Ֆելկիշե Բեոբախտեր»—ֆաշիստական թերթերի անուններ են:

գնդակահարվել է»: Այս թերթերից մենք իմացանք, վոր մի ուրիշ բանտարկյալ, Մեզերիցայից, վորը մեղադրվում եր, վոր իբր թե մի քանի տարի առաջ մի գրոհային է սպանել, «հարցաքննության» է յենթարկված յեղել այն ժամանակ, յերբ կամերից դուրս եյին քաշում այն ընկերոջը, վորի մասին վերն ասացինք: Ճամբարից նրանց միասին են դուրս հանել: Մեզերիցայի բանտարկյալն իսկույն գնդակահարվում է «դեպի Լիմբից անտառը փախչելու փորձ անելիս»: Արևմտյան կորպուսի բանտարկյալը ծանր վիրավորվում է: Շամբուտից հեռու, վորի մոտ գնդակահարությունը տեղի յեն ունենում, այդ բանտարկյալն ընկնում է ջուրը, և գրոհայինները թողնում հեռանում են, կարծելով, թե նա ել կորավ: Մյուս որը թշվառն, արյունաքամ լինելով, չոքեչոք յեկավ Զոննենբուրգի հիվանդանոցը: Յերբ գրոհայիններն այս բանն իմացան, հայտարարեցին, թե միևնույն է «նրա հետ շուտով իրենց հաշիվը կտեսնեն»: Հայտնի չե, թե նա ուր կորավ: Ըստ յերևույթին այդ գազանները նրան վերջ տվին: Այս դեպքից մի քանի շաբաթ առաջ Ոդերի Ֆրանկֆուրտի ու Ֆյուրստենվալդի թերթերը հայտնեցին, թե յերեք «ակտիվ» կոմունիստ են ձերբակալված: Գրոհայինները հրճվանքից ձեռքերը շփում եյին.

—Ոխա՛յ, ոխա՛յ,— ասում եյին նրանք— թող հլա մի գա՛ն:

Հաջորդ որը գերմանական վողջ մամուլը հայտարարեց, վոր յերեք կոմունիստ, Զոննենբուրգ փոխադրելու ժամանակ, «փախչելու փորձ անելիս» գնդակահարվել են:

«ՀԱՑ ՈՒ ՋՐՈՎ, ՄՈՒԹ ԿԱՐՑԵՐ»

Վորովհետև ֆաշիստները ռազմական խստավարություններով, կարցերով, ծեծով ու տանջանքներով չեն կարողանում փոխել իրենց բանտարկյալների հեղափոխական համոզմունքները, ուստի ամեն կերպ փորձում են իմանալ՝ բանտարկյալներն իրար հետ հեղա-

փոխական թեմայից խոսո՞ւմ են, թե ոչ, կամ ի՞նչպես են նրանք հաշ ղացնում այդ:

Մենք պարծանքով կարող ենք արձանագրել, որ Զոննենբուրգի այդ ահագին թվով բանտարկյալներից միայն հատ ու կենտ մարդիկ կային, որ ֆաշիստների կարթն էին ընկել ու իրենց ընկերներին մատնում էին: Բայց և այնպես այսպիսի դեպքեր կային:

Առաջին մատնիչը դուրս յեկավ սոցիալ-դեմոկրատական վոստիկանության նախկին տեսուչը, որ կենտրոնական կորպուսի իր կամերի պրավակատոր էր: Ինքը՝ քաղբանտարկյալ լինելով՝ հետամուտ էր լինում իր ընկերներին և ամեն մի դատարկ բանի համար հայտնում իշխանության: Ամեն մի մազաչափ հանցանքի համար մատնված ընկերները կարցեր էին ընկնում կամ չարչարանքի կամերում տանջանքների յենթարկվում: Բանտարկյալներից մեկն ասաց, թե Հերբելը լավ ճառախոս չի, մյուսը, թե՝ Հիտլերը յերկար չի մնա իշխանության գլուխ, իսկ յերրորդը՝ թե լագերում տված անունը նույնիսկ խոզերի համար էլ անպետք է: Յերեքն էլ սոցիալ-դեմոկրատի մատնությամբ կարցեր դրվեցին:

Ի՞նչ բան է պատժի այս տեսակը: Բանտարկյալին դնում են բացարձակ մութ կամեր՝ ցամաք հացով ու ջրով: Բանտարկյալը չորս որ մի անգամ է միայն մի քիչ տաք ջուր ստանում, որի միջին յերկու կարտոֆել է լող տալիս, և որը գրոհայինների լեզվով սուպ անունն է կրում: Խիստ արգելվում է հատակին նստել, իսկ կամերում սեղան-աթոռ չկան: Արգելվում է դիպչել մահճակալին, որ ամրացված է պատին, և միայն այն 5—10 րոպեյին, որ հաց ուտելն է զբաղեցնում, բանտարկյալին թույլատրվում է ծալապատիկ նստել:

Այս ռեժիմից մի քանի որ միանգամայն բավական կլինի ամենաամուր որգանիզմը քայքայելու: Բանտարկյալները դունատ, գերեզմանից դուրս յեկած մեռելների պես, չորս որը մի անգամ դուրս են գալիս կարցերից ու բակի միջով գնում խոհանոցը՝ «սուպ» ստանա-

լու: Ռևմատիզմն ու թոքերի բորբոքումը կարցեր դրված բանտարկյալների ամենահաճախակի հյուրերն են: Ի՞նչ զարմանալու բան կա, ախր պիտի իմանաք, որ, բացի կատարյալ մթությունից, կարցերի շենքը բացարձակ խոնավությամբ էլ է աչքի ընկնում: Կարցերները նկուղային հարկումն են տեղավորված, որոնց պատերը բորբոսը բռնել է, և ջրի սառը կաթիլներն առաստաղից կաթում են:

Գրոհայինների համար ամենամեծ տոնը լինում է կամերները շրջելն ու քաղբանտարկյալներին հայտնելը, որ իբր թե մահվան դատավճիռներ են կայացված: Այսպիսի դեպքերում գրոհայինները «մարդասիրություն» ցույց են անում և բանտարկյալներին թույլ են տալիս հրաժեշտի նամակներ ու կտակներ գրել: Դժվար չի հասկանալ, թե բանտարկյալներն ինչ վիճակում են իրենց ծնողներին, կանանց ու յերեխաներին հրաժեշտի նամակներ գրում: Հետո գալիս է գրոհայինների ջոկատն ու բանտարկյալներից նամակները հավաքում և ստիպում, որ կամերի մեջտեղը չորք կանգնեն կամ անկողնի մոտ չոքեն: Նրանց աչքի առաջ հրացանները լցնում են: Բանտարկյալների աչքերը կապում են ու ստիպում մի քանի րոպե կանգնած մնալ, թույլ չտալով, որ նույնիսկ ծպտուն հանեն: Այդ ժամանակ ֆաշիստները կամացուկ, մատների վրա հեռանում են և կամերի յերկաթե ծանր դուռը հանկարծ այնպես ուժգին շխկացնում, որ անասելի աղմուկ է հանում: Շատ անգամ այս կամ այն բանտարկյալն ուշաթափվում ընկնում է կամերի քարե հատակին: Այն ժամանակ գրոհայիններն անզուսպ հռհռոցով դռները բաց են անում և իրենց ընկերներին հերթական ներկայացման կանչում, ձայն տալով.

— Յեկեք տեսեք, կամերի դռնով մենք նրան գնդակահարեցինք:

ՄԻ ՈՐՈՒՄ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ 39 ՈՒՇԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ

Հուլիսին, յերբ ճամբարապետ Զիգմունդն իմացավ, վոր իր պահակության ու վոստիկանության վողջ կազմը փոխվելու յե, վճռեց ապացուցել, վոր իր զինակիցներն անփոխարինելի յեն: Լավագույն ապացույցն, իհարկե, վիթխարի մի պրովոկացիան յեղավ: Մի խումբ կալանավորների փախուստ մոգոնեցին, իսկ պահակներն ու ճամբարում յեղած վողջ պահպանությունը նրանց հետևից կրակ պետք է բաց անեյին: Արդյունքն այն յեղավ, վոր Զիգմունդը կառավարության, իհարկե, ապացուցեց, վոր անհրաժեշտ է ճամբարում այդպիսի անփոխարինելի վոստիկաններ ու դրոհայիններ թողնել: Պրովոկացիաները շարունակվեցին:

Կենտրոնական կորպուսի № 11 կամերի դռան մեջ ծառաները կոմունիստական մի թռուցիկ են հանկարծ «հայտաբերում»: Այդ թղթի կտորի վրա հետևյալն է գրված լինում. «Լեյնում դրոհայինների իշխանությունը վերջանում է, հոկտեմբերին այնտեղ կոմունիզմ է լինելու»: Համաձայն վաղորոք պատրաստված ծրագրի, № 11 կամերի բոլոր բանտարկյալներին հարցաքննության յենթարկեցին, վոր տանջանքներով ու ծեծերով եր ընթացակցվում: Հետո նրանց բոլորին հավաքեցին բակը և ռազմական խստավարժության յենթարկեցին: Նույնն էլ մյուս կամերի բանտարկյալների նկատմամբ արին, հետո՝ արևմտյան կորպուսի վողջ բանտարկյալների նկատմամբ և վերջապես՝ արևելյան կորպուսի բանտարկյալների նկատմամբ: Բանտարկյալների մի մասին չարչարանքի կամեր դրին: Նրանց հայտարարում եյին, թե չարչարանքներն այնքան պետք է շարունակվեն, մինչև վոր նրանք «մեղավորներին», այսինքն թռուցիկի հեղինակներին ձեռք տան:

Այդ որն ընկերներից 23 հոգի գիտակցությունը կորցրած վիճակում փոխադրվեցին հիվանդանոց, և միայն հետևյալ յերեկոյան դրությունն իր գագաթնակետին հասավ: Վիթխարի մի պրովոկացիա յեր պատրաստվում, վոր բանտարկյալների մասսայական գնդակահարություններով պետք է վերջանար: Արևելյան կորպուսի բանտարկյալներն ու հյուսիսային կորպուսի բանտարկյալների մեծ մասն այդ ժամանակ արևելյան կորպուսի բակումն եյին՝ հիվանդանոցից մի քանի քայլի վրա: Արևմտյան կորպուսի ու կենտրոնական կամերների ընկերները պետք է հավաքվեյին արևմտյան կորպուսի բակը: Նրանց հրաման եր տրված մարզանքի քայլքով վազել: Քափ ու քրտինք մտած, շնչասպառ, ամբողջ որը քաշած տանջանքներից վերջնականապես ծվեն-ծվեն յեղած՝ նրանք սկսեցին բանտի բակում վազ տալ: Այնուհետև լսվեց ստանդարտ «պառկիր», «կանգնիր»-ը: Այս վարժությունը հարյուր քանական անգամ պետք է կատարվեր: Բանտարկյալները մեկը մյուսի հետևից սայթաքում—ընկնում եյին արևմտյան կորպուսի բակի քարերի ու ցեխի մեջ: Այս տեսարանի ժամանակ արևելյան կորպուսի բանտարկյալներին ստիպեցին յերգել, և բանտարկյալների փոքրիկ նվագախումբը (մի քանի նվագարան ու մանդոլին) նվագելու հրաման ստացավ: Արևելյան կորպուսի բակում հավաքած բանտարկյալների բազմության առջևից Ֆաշիստները յերկու րոպեն մի անգամ մի բանտարկյալ եյին քարշ տալիս, վորը ցավից ճչում եր, ծեծված-արնլվիկ եր արված, կամ գիտակցությունը կորցրել եր: Րոպեներն անցնում եյին: Նվագախումբը դադարեց նվագել: Բանտարկյալների բազմությունը քարացավ: Հարյուրավոր մարդիկ բռունցքները սեղմած՝ մնացին կանգնած: Իրենց անզորությունը գիտակցելուց առաջացած բարկությունն ու զայրույթը չափը լցրին: Վոստիկանը բղավեց:

— Վերջապես պիտի յերգե՞ք, թե չէ, խոզի նախիր:

Բայց բազմությունը մնաց համր: Ծերունիների յե-

բասից արցունքը ներքև էր գլորվում, իսկ հարևան կամերաներում, գրոհայինները կարաբիններով ու ատրճանակներով զինված՝ պատրաստվում էին կրակ բաց անել: Շներն սպասում էին և վճռել էին իրենց գործողությունն սկսել ամենաթունդ լարված մոմենտին: Բոլոր բանտարկյալներն այս բանն զգացել էին: Ամեն մեկը մտածում էր. «Հիմա վերջն է»: Մի մոմենտ ևս, և բանտարկյալների բազմությունը պետք է հարձակվեր վոստիկանության ու գրոհայինների վրա: Ֆաշիստ պրովակատորների ուզածն էլ հենց այդ էր: Բայց բանտարկյալներն իրենց զայրույթը զսպեցին: Ցեվ պատրաստվող արյունահեղ դատաստանը չհաջողվեց:

Արևելյան կորպուսի բանտարկյալների առջևից 16 ընկեր էլ քարշ տվին, վորոնք գիտակցությունը կորցրել էին: Այդ ժամանակ հարյուրավոր կոկորդներից դուրս թռավ «Ցես ընկեր ունեյի» մասսայական յերգը: Վոստիկան Բառերը վազ տալով սլացավ արևելյան կորպուսի բակը:

— Գժվե՞լ եք, ի՞նչ է, չա՛ն վորդիք: Ես բոլեյիս գնդարեցրեք: Վո՛չ մի յերգ:

Բազմությունը մի քանի վարկյան էլ յերգեց, հետո լռեց: Արևելյան կորպուսի բոլոր բանտարկյալները, բացի ծանր հիվանդներից, շարք պետք է կանգնեյին: Կոմունիստական Ֆրակցիայի նախկին ղեկավար Կասպերը, վոր ծանր հիվանդ էր, բանտարկյալներին պետք է հրաման աներ և քառասուն րոպե նորից կատաղի վազքը կատարվեր բանտի բակի շուրջը: Ֆաշիստները ձեռքերը դրել էին ատրճանակների պատյաններին, և կատաղությունից նրանց ատամները չխկչխկում էին: Կինամոնագույն դահիճները հույս ունեյին պրովակացիա առաջ բերել և արյան ծարավ հագեցնել: Բայց նրանք իրենց նպատակին չհասան:

Բացառիկ կարգապահությամբ, ատամ-ատամի սեղմած, միակերպ մտածելակերպով—«մեզնից վոչ մեկը պրովակատորների գնդակով չպետք է դնա»— մեր ընկերները ընչակտուր էին լինում, բայց և այնպես

փախչում էին: Բարկությունից դողալով վրեժի յերդումը շրթունքներին, թե կգա մի օր, յերբ մենք ֆաշիստների հետ հաշիվ կտեսնենք՝ մեր յեղբայրներն ու ընկերները նայում էին իրենց կամերների լուսամուտներից: Այդ յերեկո հիվանդանոցը բերնեբերան լիքն էր: Սանիտարական Վախմիստրը, վորը մարդկային վորոշ զգացմունքներ դեռ պահպանում էր, իր զայրույթը բացարձակորեն յերևան էր բերում: Այն բողոքագիրը, վոր նա ճամբարի պարետին ու ներքին գործոց մինիստրությանը գրեց, այս դարձվածքն էր բովանդակում:

«Այսօր, հուլիսի 13-ին ծախսվեցին բոլոր դեղորայքը, սրտի գործողությունն ամրապնդող բոլոր դեղերը, վոր մի տարվա համար էին նախատեսված»: Միաժամանակից հետո գրոհայիններն այս ու այն բանտարկյալին ասել էին, թե №11 կամերի դռան մեջ գտնված թռուցիկը մի ֆաշիստ պրովակատոր էր գրել: Այս պրովակացիայից մի քանի շաբաթ հետո № 11 կամերի դռան մեջ նորից հեղափոխական կոչեր «գտնվեցին»: Բայց այս անգամ կոչերը մի ֆաշիստ էր սարքել, վոր նաև ճամբարում էր ծառայում, բայց պրովակացիան չհաջողվեց, վորովհետև նա հիմարի պես դռան դրսի յերեսին էր գրել:

Սեպտեմբերին արևելյան կորպուսի բանտարկյալների համար յերրորդ պրովակացիան «հասունացավ» բանտարկյալներից մեկը մեծ թվով ընկերների ներկայությամբ ասաց.

— Հեռու չէ այն ժամը, յերբ գրոհայիններին մենք կստիպենք հենց այս բակում վարժություններ կատարել:

Դոկտոր Ցունգ-Մարշան՝ նացիոնալ-սոցիալիստ մի բժիշկ, վոր ինչ վոր հանցանքի համար Զոննենբուրգում բանտարկված էր, վճռել էր, մատնիչ դառնալով, նորից աչք մտնել, և լազարետում լսած խոսակցություններն իսկույն տեղ հասցրեց: Ընկերներից վեց հոգու տարան հարցաքննության: Նրանց ծեծեցին ու չարչարեցին:

Բայց նրանցից ոչ ոք չմատնեց այդ խոսքերն ասող ընկերոջը:

Կատաղած ու փրփրած այն բանից, որ իր բոլոր ջանքերն իզուր են անցնում՝ պարետ Բրունինգն այն ժամանակ հրաման տվեց՝ բոլոր բանտարկյալներին ժամ ու կես ռազմական խստավարժության ու ծանոթ «կանգնել, պառկել»–ու յենթարկեն: Մեկը մյուսի հետևից վայր եյին ընկնում գիտակցությունը կորցրած ընկերները: Վիլլի Կասպերին, որ սիրտը թունդ նվազել եր, հիվանդանոց փոխադրեցին: Այդ օրերն ընկերներից շատերն իրենց առողջությունն ընդմիշտ կորցրին: Թունդ սիրտ նվազեցնող հիվանդությունները հաճախակի դարձան, բայց, չնայած այս բանին՝ սրտի թունդ նվազում ունեցողներին ու նրանց հետ նաև «Վելտ–Բյուլենի» նախկին խմբագիր Ռոհզկոն և Աուսլենդերին այնուամենայնիվ ստիպում եյին, որ արյունարբու շան Արբիանի հրամանով ռազմական ծանր խստավարժություններ կատարի:

«ՎԻԼԼԻ ԿԱՍՊԵՐԸ ՊԵ՛ՏՔ Ե ՓՐԿՎԻ»:

Զոննենբուրգի բանտարկյալների մեջ փաշիստների ամենասոր հալածանքներին յենթարկվեց կոմունիստների նախկին պատգամավոր Վիլլի Կասպերն: Նա ճամբար յեկավ միանգամայն առողջ վիճակում: Հենց առաջին օրերը նրան մի քանի անգամ ծեծեցին արնլվիկ արին:

Այժմ Վիլլի Կասպերը, որին մի քանի ամիս ստիպում եյին արևելյան կորպուսի պարետի չափազանց ծանր դերը կատարել, անվերջ չարչարանքների ու փաշիստների հայհոյանքի առարկան ե: Մազաչափ հանցանքի համար, ճամբարի յուրաքանչյուր բանտարկյալի կողմից նրա հետ քաղաքական զրույցի փորձ անելու համար մեղադրում են: Մի օր, մի րոպե նրան հանգիստ չեն թողնում: Շատ հաճախ, ճանապարհին պատահմամբ հանդիպելիս, մի որևե գրոհային նրան ստիպում ե ժամերով վազել բակի շուրջը: Բանտի շենքի միջանցքնե-

րում ու սանդուխքների վրա, ընկնել գետին, նորից վեր կենալ և վազ տալ՝ գրոհայինների հրհռոցների ու ծաղրանքի տակ:

Նրա առողջությունն ու ջղերը հիմնահատակ քայքայվել են: Վիլլի Կասպերը սրտի ծանր հիվանդություն ե ստացել: Ամենածանր րոպեների ժամանակ, յերբ խեղճի մարմինը ջղաձգությունից ցնցվում եր, փաշիստները գալիս եյին նրա մոտ ու ասում.

— Կասպեր, դու ինքդ քեզ մի գյուլլա տուր: Ի՞նչ ես սպասում: Ուզում ես որ մենք ինքներս այդ բանով զբաղվենք:

Ինքնասպանություն գործելու այս հրահրումը հաճախ եր կրկնվում: Մեր ընկերը ջղերի ծանր քայքայումով հիվանդ ե, ջղերի ցնցումից նրա դեմքը կուչ ե գալիս և խոր կնճիռներով ակոսված ե: Մի քանի ամսում նա տասը տարով ծերացավ: Ճամբարում բանտարկյալներն ասում են.

— Յեթե այս բանը դարձյալ շարունակվի, Վիլլի Կասպերը ճամբարից կենդանի դուրս չի գա: Վիլլի Կասպերը պետք ե փրկվի:

ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՆՆԵՆԲՈՒՐԳԻ ՀՈՒՍՈ ՃԱՌԱԳԱՅԹՆ Ե

Չարչարանքների ու տանջանքների դատապարտված տասնյակ հազարավոր բանտարկյալներ հույսի մի ճառագայթ ունեն, որ նրանց ավելի յե ուժ տալիս—Կարմիր Ոգնության գործին անդուլ ու կատարյալ նվիրաբերություններ անելու, նրա բազմաթիվ անդամների ու ակտիվիստների մասին յեղած լուրերն են այդ: Չնայած արյունոտ հալածանքներին, չնայած՝ Կարմիր Ոգնության աշխատակիցները գիտեն իրենց սպառնացող վտանգը, գիտեն, որ գուցե վաղն իրենց վիճակվի մեզ բախտակից դառնալ, այնուամենայնիվ ամենուրեք աշխատանք ե կատարվում:

Քաղբանտարկյալների կանանց ու յերեխաներին նյութական ոգնություն ե տրվում: Գրքեր ու կենսական

անհրաժեշտ պիտույքներ մեզ կանոնավոր կերպով ուղարկվեցին այնքան, մինչև վոր ճամբարի պարետը հանձնումն արգելեց:

Մենք մեծ ուրախությամբ իմացանք, վոր արտասահմանի բանվորներն ու ինտելիգենցիան մեծ աշխատանք են կատարում, վոր հիտլերյան բանտերի բանտարկյալների վիճակը թեթևացվի:

Միայն նա կարող է հասկանալ, թե ինչ ասել է Կարմիր Ոգնության գոյության փաստը, ով հիտլերյան Գերմանիայի ուղղիչ տներում, բանտերում ու համակենտրոնացման ճամբարներում սարսափելի ամիսներ է անցկացրել: Յես տասնյակ հազարավոր քաղբանտարկյալների անունից դիմում եմ բոլոր բանվորներին, բոլոր նրանց, ով համաշխարհային կուլտուրայի ավանգարդի հետ է, կոչ անելով՝ «Պաշտպանեցեք Կարմիր Ոգնությանն իր աշխատանքների մեջ, միջազգային պրոլետարական համերաշխության համար մղած իր պայքարում»:

ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐԸ ԿԱՊԻՏԱԼԻ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ՄՈՊՐ-ի Գործկոմի տվյալները պարզորոշ գաղափար են տալիս, թե ինչ ծավալ է ստացել սպիտակ տեռորը ֆաշիզմի և ֆաշիզացիայի յենթարկվող կապիտալիստական «դեմոկրատիայի» յերկրներում: Այդ տվյալները կազմվում են մամուլի մեջ թափանցող ամենորյա հաղորդագրություններից և լրացվում են այն տվյալներով, վորոնք մշակում են ՄՈՊՐ-ի ազգային սեկցիաները: Սակայն, հարկավ, այդ վիճակագրությունը լիակատար չափով չի արտացոլում տեռորի ամբողջ պատկերը: Գրաքննությունը, մանավանդ գաղութային յերկրներում, համարյա յերբեք հնարավորություն չի տալիս հաղորդագրություններ հրապարակել աշխատավորների հետ տեսնված դատաստանի մասին: Բուրժուական գործակալությունները և թերթերը սիստեմատիկաբար պակաս են ցույց տալիս զոհերի թիվը: Մեր առջև դրված է

1934 թ. առաջին կիսի ընդհանուր վիճակագրությունը և առանձին յերկրներին վերաբերյալ տվյալները:

Ահա ֆաշիստական Ավստրիայի դասակարգային դեմքը՝ 1585 սպանված, 5309 ծանր վիրավոր, 3955 թեթև վիրավոր, 2063 բանտարկյալ—այս է ընթացիկ տարվա փետրվարի մարտերի և այդ մարտերին հաջորդող ռեպրեսիաների հանրագումարը: Այդ թվերին պետք է ավելացնել 333 քաղաքական դատավարություն, վորով 1231 հեղափոխական դատապարտվեց ընդհանուր առմամբ 2917 տարվա բանտարկության, կայացվեց 9 մահվան դատավճիռ և 19 ցմահ բանտարկության դատավճիռ:

Ֆաշիստական Գերմանիայում՝ 567 սպանված կես տարում, 25·074 վիրավոր, 30320 ձերբակալված, 909 քաղաքական դատավարություն: 4246 հեղափոխական բանվորներ ու գյուղացիներ դատապարտվել են ընդհանուր առմամբ 8543 տարվա բանտարկության ու տաժանակրության: Ընդունվել է 23 մահվան դատավճիռ, 11 ցմահ բանտարկության դատավճիռ:

Ճապոնական իշխանությունները լռություն են պահպանում բանվորների սպանության մասին: Թերթերը տեղեկություն չեն տալիս բանտերում մահացած քաղկալանավորների մասին: Հաջողվեց միայն պարզել ձերբակալվածների ընդհանուր թիվը՝ 3987 հոգի: Տեղի յե ունեցել 29 դատավարություն, վորով 79 հեղափոխական դատապարտվել է 228 տարվա բանտարկության:

Սպանիայում (պետք է նկատի առնել, վոր տվյալները վերջանում են այս տարվա հունիսի մեկով), սպանված՝ 62·332 հոգի, վիրավոր՝ 3347 հոգի, ձերբակալված՝ 236 հոգի, քաղաքական դատավարություն... (բաց) վորով հեղափոխականները դատապարտվել են ընդհանուր առմամբ 3531 տարվա բանտարկության, 1295 հոգի դատապարտվել են մահապատժի և 301 հոգի աքսորվել Աֆրիկայի գաղութները:

Սպիտակ տեռորի տվյալների մեջ «պատվավոր» տեղ է գրավում Լեհաստանը՝ 9017 ձերբակալված, 677

վիրավոր, 23 սպանված, 229 քաղաքական դատավարություն, 6716 տարվա բանտարկություն ու տաժանակրություն՝ 2410 հեղափոխականի համար։

Ռումինիայում ձերբակալված է՝ 1117 հոգի, Չեխո-Սլովակիայում՝ սպանված 1153 հոգի, ձերբակալված 2000 հոգի, Լատվիայում՝ 2978 հոգի, Իտալիայում՝ 3507 և այլն։

Կապիտալիստական 50 յերկրներում ու գաղութներում կես տարում սպանվածների ընդհանուր թիվը կազմում է 2957 հոգի, ծանր վիրավորվածների թիվը՝ 24·770 հոգի, թեթև վիրավորվածներինը՝ 20·624 և ձերբակալվածներինը՝ 118739 հոգի։ Նույն ժամանակամիջոցում այդ յերկրներում տեղի յե ունեցել 3903 քաղաքական դատավարություն, վորով 14·707 մեղադրյալ դատապարտվել է 27·578 տարվա բանտարկության ու տաժանակրության, ընդունվել է 89 ցմահ բանտարկության դատավճիռ և 94 մահվան դատավճիռ։ Այդ թվերի մեջ չեն մտնում Չինաստանին ու Մանջուրիային վերաբերյալ տվյալները, վորտեղ յեղել է՝ 190·282 սպանված, 59·500 վիրավոր, 19·814 ձերբակալված։ Նույն ժամանակամիջոցում կապիտալիստական յերկրներում տեղի յե ունեցել 112 սննդադուլ, վորով բանտարկյալները բողոքել են բանտի ռեժիմի և վարչության խժդժությունների դեմ։ Սննդադուլներն աչքի եյին ընկնում բացառիկ համառությամբ և լարվածությամբ։ Նրանց մասնակցում եր 4184 քաղկալանավոր։ Սննդադուլներն ընդհանուր առմամբ տևել են 20·571 օր։ Վորպես սննդադուլի հետևանք՝ 158 հեղափոխականի տանջել են մինչև նրանց մահանալը, 371 հեղափոխական՝ ծանր հիվանդություններ են ստացել։

ՄՈՊՐ-ի տվյալներ[illegible] գլուխ են կազմում «դեմոկրատական» ազատությունների խախտմանը վերաբերյալ թվերը։ 50 յերկրներում 6 ամսվա մեջ արգելվել է 2152 կազմակերպություն, ցրվել է 129 ժողով, 1543 ցույց, արգելվել է 350 թերթ և ժուրնալ։

1935թ. - 67
11
26742

ԳԻՆԸ 50 Կ.

ԼԻԹՈԳՐ.ՆԿԱՐՉ.
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁԵՎ
ՇԱՊԿԻ ՆԿԱՐԸ՝ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ

ПИСЬМА ИЗ СТРАН
БЕЛОГО ТЕРРОРА
И ФАШИЗМА
ИЗД. Ц.К. МОПР ССрА